ԼՈՒՍԱՎՈՐ

1973

Ա

Ахс 146

Լ

ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Յունուար

1973

ՄՊ-ԷՏԳԲ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակի առթիվ 3

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը ԱՄՆ-ի հայոց առաջնորդարանի «Կոմիտաս» երգչախմբի 25-ամյակի առիթով 6

Հայրապետական քարոզ Փրկչի հրաշափառ Ծննդյան տոնի առթիվ Մայր տաճարում 5

Հայոց Հայրապետի նամակը Նորին Սրբություն Պողոս Զ Պապին՝ «Խաղաղության սրվա» կապակցությամբ Նրա ուղերձի առիթով 11

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Եղբայրական հզոր ընտանիքում 12

Ամանորի և Փրկչի հրաշափառ և սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր եկեղեցիների հոգևոր պետերի ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների ղեկավարների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները 15

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհակալական գիրը Ամանորի և սուրբ Ծննդյան տոների առթիվ՝ ուղղված Հայաստանյայց եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմական բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին 18

Սուրբ գրական ընթերցումներ 19

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊ. ԴՈՒՐՅԱՆ—Աստվածպաշտության խորհուրդը 21

ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ—Լույս և խավար 23

Հայրապետական պատարագ և քարոզ ս. Ծննդյան տոնի առթիվ Մայր տաճարում . 25

Հաղորդագրություն 27

ՆԱՄՎԵԼ ՍԱՐԿԱՎԱԳ ՊԵՏՐՈՍՅԱՆ—Ս. Ստեփանոսի տոնը և սարկավագական ձեռնադրություն Մայր Աթոռում 28

ԱՎԵՏԻՔ ՍԱՐԿԱՎԱԳ ԱՐԱԲԱՋՅԱՆ—Ամանորը հոգևոր ճեմարանում . . . 32

ՍԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ 35

Միացյալ Նահանգների հայոց առաջնորդարանի «Կոմիտաս» երգչախմբի 25-ամյակը 37

ՆԱՄՎԵԼ, ՍՐԿ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, ԳՐԻԳՈՐ ՍՐԿ. ՔԵՇԻՇՅԱՆ—«Տաթև»-ի շնորհավորանքը—Ամանոր և սուրբ Ծնունդ 39

Հիշատակարաններ Մայր Աթոռի տպարանից հրատարակված հնատիպ գրքերի . 41

Ցուցակ Մայր Աթոռ ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի 51

ԱՐՍԵՆ Ծ. ՎՐԴ. ԲԵՐԲԵՐՅԱՆ

Երկու խոսք 55

Ակնարկ էկումենիկ շարժման պատմության 56

ՊԱՐԳԵՎ ՇԱՀԲԱՋՅԱՆ—Հայաստանյայց եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունները 1972 թվականին 59

Հանգիստ արժանապատիվ տ. Գևորգ քահանա Փափազյանի 69

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 26/I 1973 թ.: Ստորագրված է տպագրության 16/II 1973 թ.:

Տպագրական 4 մամուլ, թուղթ 60×84¹/₈, պատվեր 65

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1973 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱՂԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՄԱՀՎԱՆ 800-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՔՐԻՍՏՈՍԱՓԱՆԴ ՍԻՐՈՑ ՈՂՋՈ՞ՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
Տ. Տ. ԽՈՐԵՆԱՑ ԱՌԱՋՆՈՅ, ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Տ. ԵՂԻՇԷԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ,
ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ
Տ. ՇՆՈՐՀՔԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՀԱՄՕՐԷՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ,
ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ
ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ
ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Այս Ներսէս առաւելեալ էր իմաստութեամբ քան զլոլովս ի ժամանակի անդ, ո՛չ միայն քան զվարդապետս հայոց, այլև քան զՅունաց և զԱսորոց այնքան՝ մինչ զի համբաւ իմաստութեան նորա տարածիցուս ընդ ամենայն ազգս»:

Պատմագիր՝ Կիրակոս Գանձակեցի

Փրկչական երկրորդ հազարամեակի սեմին, երբ արևմուտքից Բիւզանդական Կայսրութեան և արևելքից խուժող սելջուկների հարուածների տակ, Հայաստանը կորցնում էր իր անկախութիւնը և քայքայում Բագրատունեաց իշխանութիւնը, աստուածային նախախնամութեամբ, Հայոց աշխարհից հեռու՝ Կիլիկիայում կազմաւորուեց ու զարգացաւ մի նոր հայկական պետութիւն, որ հանդիսացաւ պահպանողը և շարունակողը հայ ժողովրդի քաղաքական գիտակցութեան, հոգևոր ժառանգութեան և ազգային մշակոյթի:

Սուրբ Էջմիածնէն ժամանակաւորապէս Կիլիկիա փոխադրուեց նաև ամենայն Հայոց Հայրապետութեան Աթոռը, նորաստեղծ հայ պետութեան հոլովներին ներքոյ, հոգևոր ու մշակութային սերտ կապեր պահպանելով Հայաստանի հոգևոր կենտրոնների հետ, երբ ու ինչքան թոյլատու էին լինում քաղաքական պայմանները:

Եւ այսպէս մօտ երեք դար շարունակ 1080-ից մինչև 1375 թուականը, Կիլիկիան դարձաւ բուն Հայաստան աշխարհի անբաժանելի մասը, նոր փառքով պսակելով հայ ժողովրդի պատմութեան գիրքը և անկորնչելի արժէքներ ընծայելով հայ մշակոյթի գանձատանը:

Հոգևոր դպրութեան, գրականութեան, արուեստների և գիտութեան զարգացման մի նոր դարաշրջան է բացւում որ իրաւամբ արժանի է դառնում հայոց պատմութեան «արծաթէ դարը» կոչուելու:

Մանաւանդ ԺԲ դարը, հանդիսանում է կատարը կիլիկեան շրջանի հայ մշակոյթի զարգացման, որի կենտրոնում փայլում է պայծառ անձնաւորութիւնը սուրբ Ներսէս Շնորհալու, շառաւիղը Պահլաւունեաց հայրենասէր իշխանական տան, թոռը հոչակաւոր Գրիգոր Մագիստրոսի:

Ապիրատ իշխանի որդին, Ներսէսը ծնուել է Տլուք գաւառի Ծովք հայրենական դղեակում, և փոքր հասակից մեծացել ու դաստիարակուել է Կարմիր վանքում, իր մեծ հօր Գրիգոր Վկայասէր կաթողիկոսի ձեռքի տակ, իբրև ուսուցիչ ունենալով նոյն վանքի գիտնական վանահայր Ստեփաննոս Մաղուկ եպիսկոպոսը:

Հայրապետական Աթոռը, քաղաքական անապահով պայմանների հետեւանքով 1150 թուականին, Ծովքից փոխադրուելով, նաև ևս հետևում է իր կաթողիկոս եղբօրը՝ Գրիգոր Պահլաւունուն, և վերջնականապէս հաստատւում է Հռոմկլա, ուր և ինչ բարձրանում է սուրբ Լուսաւորչի գահը 1166 թուականին, կոչուելով Ներսէս Դ Կլայեցի կաթողիկոս:

Այստեղ, Հռոմկլայում մանաւանդ, Ներսէս Շնորհալին, ոգեկան և իմացական աստուածատուր ուժերի լիութեամբ, բոլորում է իր ստեղծագործական կեանքի ամենափայլուն շրջանը:

Պահլաւունի Ներսէսը իրապէս լի եղաւ շնորհներով՝ իբրև հոգեզարդ Հայրապետ Հայոց, իբրև ուղղափառահաւատ խորիմաց աստուածաբան Մայր եկեղեցւոյ, իբրև ներշնչեալ աղօթող բանաստեղծ, իբրև նուիրեալ կրթական մշակ և իբրև քաջակորով պաշտպան հայ պետութեան:

Առանց Ներսէս Շնորհալու լուսաշող ներկայութեան, պիտի մերկանար կիլիկեան ԺԲ դարը իր փառքից և պիտի անէանար մի անկրկնելի շողարձակ բարձունք մեր մշակոյթի պատմութեան հորիզոնից: Երանաշնորհ սուրբ Շնորհալին փառաւորուել է անցեալում և փառաւորուելու է միշտ, իբրև բոլոր ժամանակների պարծանք ամենայն հայոց:

Երախտագէտ սրտով և երկիւղածութեամբ, խոնարհւում ենք հրաշաշնորհ Հայրապետի սուրբ յիշատակի և մեծ վաստակի առաջ, աղերսանքով ջերմեռանդ որ նա Բարձրելոյն Գահին առջև բարեխօս լինի՝ ի խնդիր անսասանութեան և մի և անբաժան պահպանման առաքելական մեր Մայր եկեղեցու:

Յաւէտ յարգանք, լոյս և փառք սուրբ Ներսէս Շնորհալու նուիրական յիշատակին ու անթառամ գործին:

Այս տարի 13 օգոստոսին լրանում է մեծ Հայրապետի մահուան ութհարիւրամեակը: Այսու Մեր կոնդակով երջանիկ ենք հրաւէր կարդալու մեր եկեղեցու նուիրապետութեան բոլոր Աթոռներին և թեմական-եկեղեցական կազմակերպութիւններին, որ տարւոյս ընթացքին պատշաճ եկեղեցական արարո-

դությունների, հանդիսաւոր ցիստերով և հայերէն ու այլ լեզուներով հրատարակությունների, տօնախմբուի ու պանծացուի՝ Ծնորհալի սուրբ Հայրապետը Աստեայն Հայոց:

«Յիշեցէք զառաջնորդս ձեր որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ. հայեցեալք յելս գնացից նոցա՝ նմանողք եղերուք հաւատոցն» (Եբր. ԺԳ 7): Ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 16-է յունուարի
1979 փրկչական տարի,
և ի տումարիս հայոց ՌՆԻԲ,
ի սայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 743

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՄՆ-Ի ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ «ԿՈՄԻՏԱՍ» ԵՐԳՉԱԽՄԲԻ 25-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ «ԿՈՄԻՏԱՍ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ, ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Մեր սուրբ տաճարներէն դէպի երկինք բարձրացող երգուած խօսքը, ամենահարազատ կերպն է աղօթքի։ Աղօթքը՝ կրօնական յոյզերով թաթաւուն խօսքն է մարդուն առ Աստուած։ Իսկ երբ աղօթք-խօսքը կը հասնի կրօնական ապրումի բարձրագոյն աստիճանի, կը դառնայ ամբողջապէս զգացում ու այդ պահուն կը վերածուի երգի։ Երգը խօսքի շարունակութիւնն է, երգը հարազատ արտայայտութիւնն է խօսքի յուզականութեան։ Եւ այս ճշմարիտ է մանաւանդ հոգևոր երաժշտութեան պարագային, որ բիւրեղացումն է կրօնական ապրումի։

Պատահական երևոյթ չէ որ քրիստոնէութեան առաջին դարերուն, արուեստներէն միայն երաժշտութիւնն է որ մուտք գործած է եկեղեցիներէն ներս, հետզհետէ անբաժան մասը դառնալով աղօթքին։

Այսօր ալ մեր եկեղեցիներուն մէջ, լաւ կատարուած հոգևոր երաժշտութիւնն է որ կը ստեղծէ կրօնական յուզումի այն քաղցր մթնոլորտը, ուր հաւատացեալը՝ վերացած ու ոգեշնչուած, դէպի երկինք կը բարձրացնէ իր հոգիին թևերը։

Մեր յուսաբնակ հայրերը, լաւ ըմբռնած ըլլալով երգի հոգևոր ուժն ու արժէքը, իբրև անփոխարինելի ժառանգութիւն մեզի թողած են սքանչելի եկեղեցական երաժշտութիւն մը որ պայծառ արտայայտութիւնն է անկեղծ ու ջերմ կրօնական յուզումի և գեղարուեստական բարձր ճաշակի։

Մեր եկեղեցական երաժշտութիւնը, ինքնատիպ ստեղծագործութիւնն է հայ հոգիին և կատարելագոյն մէկ բիւրեղացումը քրիստոնէական աղօթքին։

Հետևաբար պարտինք ըստ արժանւոյն գնահատել մեր եկեղեցիներու երգեցիկ խումբերը, որոնք անփոխարինելի դեր կը կատարեն մեր ժողովուրդի կրօնական դաստիարակութեան և գեղարուեստական ճաշակի ազնուացման տեսակէտներէն,

Ահա թէ ինչու թեմիդ առաջնորդ տ. Թորգոմ արքեպիսկոպոսի նամակէն ուեղեակ դառնալով որ ձեր երգչախումբը 11 մարտ 1973-ին պիտի տօնախմբէ իր կեանքի և գործունէութեան քսանհինգամեակը, այս կոնդակս Մենք ձեզի կը բերենք Մեր հայրական խնդակցութիւնը և հայրապետական գնահատանքն ու օրհնութիւնը, մանաւանդ քաջ գիտնալով թէ ձեր երգչախումբը արուեստի բարձր մակարդակի հասած խումբ մըն է որ ոչ միայն կը մխիթարէ մեր հաւատացեալ ժողովուրդը աղօթքի Տուներուն մէջ, այլ իր կազմակերպած հանդէսներով փառքը կը հիւսէ մեր հոգևոր և ազգային երաժշտութեան, հայ և այլազգի հասարակութեանց լայն խաւերու մէջ յԱմերիկա։

Թող Աստուած օրհնէ յիշատակը ձեր երգչախումբի հիմնադիրներուն և ղեկավարներուն որոնք ձեր մէջ չեն այսօր։

Թող Աստուած զօրացնէ ձեր բոլորիդ հոգեկան ուժերը որպէսզի նոյն ազնիւ ներշնչումներով շարունակէք ձեր սքանչելի գործը Միացեալ Նահանգաց հայոց թեմական կազմակերպութեան կողքին, նորանոր յաջողութեանց բարձունքներ նուաճելով։

Փա՜ռք հայոց երաժշտական հանճարին։

Կեցցէ՛ «Կոմիտաս»-ի անուան ձեր երգչախումբը։

ԵԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 2-ն յունուարի
1973 փրկչական ամի,
և ի տուժարիս հայոց ՌՆԻԲ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀԱՄՐ. 741



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(1973 թ. հունվարի 6)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, ամէն»:

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Սիրեցյալ հավատացյալներ մեր,

Ամէն տարվո սեմին, հուսալից սրտով և սուրբ սպասումներով, Մեր հոգու հայացքը դեպի երկինք ենք բարձրացնում, մի անգամ ևս ընդունելու մեր տկարացած հոգիների մեջ, քաղցր ավետիսը հրաշք ծննդյան Մանուկ Յիսուսի, հեռավոր Բեթղեհեմում երկու հազար տարիներ առաջ...

Ու մենք էլ դյութված նույն լուսեղեն տեսիլքով, նման բարի ու խոնարհ հովիվների, լսում ենք երկնքից իջնող երգը հրեշտակների՝

«Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Այո, բարի ու խոնարհ մարդիկ լսեցին հրեշտակների երգն այդ սքանչելի երկու հազար տարիներ առաջ և երկու հազար տարիներ շարունակ: Լսեցին այդ երգը նրանք, լսում ենք մենք այսօր, ու պիտի լսեն մարդիկ միշտ, մինչև հեռու ապագան, ինչքան ժամանակ աշխարհում մարդկային սիրտը բաբախի, ինչքան ժամանակ այդ սիրտը հոգի ունենա:

Երանի բոլոր նրանց, ովքեր իրենց հոգու բաժակները դեպի երկինք են բարձրացնում, լցվելու նույնով՝ հրաշալի ծննդյան շնորհներով փրկարար:

Աշխարհը միայն որպես նյութեղեն ճանաչողներ, պիտի ասեն, թե մեր այս սպասումը երազ է լոկ և անհույս ճանապարհ: Ո՞րն է ճշմարիտն այս ուղիներից: Հարցումն այս ծանր է, պատասխանը՝ անհայտ:

Մի բան սակայն ճշմարիտ է թվում մեզ, թե մարդն ինքը նյութեղեն այս աշխարհի մեջ գերնիութական գոյացություն է իր հոգու աշխարհով, նյութից կազմված լինելով հանդերձ:

Հոգու իր աշխարհով, մարդը նման է հավետ ալեոռ, անծայրածիր մի օվկիանի, տեսչերով անհուն, երազանքներով անթիվ անհամար, որոնումներով անդադրում, անվերջ գործելու մշտահուն եռանդով, իր ետ հոչակելու սնհագ ծարավով, մարդը, որ բնության ծոցում կանգնած միայնակ ճակատ առ ճակատ նյութեղեն աշխարհի առաջ, ասում է վճռապես, ասում է տիրապես՝ ես կամ ու գործում եմ իբրև մի այլ իրականություն: Դա մարդկային աշխարհի իրականությունն է: Դա նոր որակ է, նոր ճշմարտություն, հարատևփոխ լինելիություն, որ մի բառով արտահայտելու համար անվանում ենք ոգե-բարոյական իրականություն: Ամեն մարդ-էակ իր հոգեկանով՝ ինչ-որ չափով, ինչ-որ կերպով մասնակից է մարդկային այդ ոգե-բարոյական իրականության և կրում է իր մեջ ինչ-որ չափով, ինչ-որ կերպով մի մասնիկ այդ իրականության ուժից: Այս իրողության բացատրության կերպերը կարող են տարբերվել, սակայն իրողությունն ինքը մնում է ճշմարիտ:

Մենք՝ քրիստոնյաներս հավատում ենք անհատ մարդու՝ հոգու ինքնուրույն և ինքնավար իրականության, որ հիմքն է կազմում մարդկային հավաքական կյանքի ոգե-բարոյական իրականության: Եվ հավատում ենք նաև, որ այդ բոլորի գերագույն երաշխիքը հանդիսանում է Աստված, որ հավատացյալի իդեալական մտապատկերն է բացարձակ ճշմարիտի, բացարձակ բարու և բացարձակ գեղեցիկի:

Բնության ծոցում մարդը այն միակ էակն է, այն միակ իրականությունը, որ ապրում է ու գործում ոտքերով ամուր կառչած երկրին, բայց հայացքը հառած միշտ դեպի երկինք: Երկինքը, դա իսորհրդանշում է աղբյուրը և հզորիչ նեցուկը մարդկային ոգու աշխարհի: Ոչ մի ուժ չի կարող շեղել դեպի երկինք հայացքը մարդու: Եվ մեզ թվում է, թե մեր օրերի մարդկանց հրաշալի խոյանքը դեպի հեռուները տիեզերքի, առավել է սևեռել մարդու հայացքը դեպի երկինք: Նորագույն գիտությունը և տեխնիկան օժանդակում են, որ մարդու մտապատկերը երկնքի մասին դառնա ավելի անհուն, ավելի անհասանելի, ավելի հավերժական: Նյութական տիեզերքի առավել խոր ճանաչողությանը և նորանոր օրենքների հայտնաբերմանը պիտի համապատասխանեն նոր իմացումներ, նոր որոնումներ, նոր հայտնություններ մարդկային ոգե-բարոյական աշխարհում:

Ահա այս խոհերով դիմավորում ենք նոր եկող տարին, 1973 թվականը փրկչական, և մեր հոգու աշխարհի բարձունքից լսում ենք վերստին ցանկալի երգը լույս հրեշտակների՝

«Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հանութիւն»:

Բացենք այսօր սրտերը մեր բոլոր, ընդունելու բարի լուրը երկնքի, հավատքով աներեր, որ պիտի լինի խաղաղություն երկրի վրա, որ պիտի լինի հանություն, բարի կամեցողություն մարդկանց միջև, վասնզի աշխարհ եկած ու մարդացած Աստված և Փրկիչը մեր Քրիստոս՝ խաղաղության իշխան է, արդարության արեգակ և սիրո սերմնացան:

Արդ, սիրելի հավատացյալներ, եկեք այս հավատքով ու այս հույսերով երգենք և փառաբանենք սուրբ Ծնունդը և Յայտնությունը Միածին Որդվույն Աստուծո մերո, աղոթելով, որ մարդիկ ու ազգություններ եղբայրներ դառնան

երկրի վրա, կենսագործելու հանար երկնային պատգամը սիրո և խաղաղության:

Եղբայրական սերը, միությունը և խաղաղությունը թող տիրեն նաև մեր ժողովրդի ծոցում, հառավել շինություն հոգևոր կյանքի, հառավել զորացումն ու պայծառացումն Հայաստանյաց մեր եկեղեցու և ամենայն հայոց Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի, նվիրական Աթոռը Հորն մերոյ սրբույն Գրիգորի Լուսավորչի և Հայոց Ընդհանրական Հայրապետության:

Եվ առավել, սերն ու խաղաղ, ապահով պայմանները թող տիրեն մեր հայրենի կտուրի տակ, որպեսզի հայաստանցի մեր զավակները՝ հոժկու բազուկներով, ստեղծարար շնորհներով և անհահանչ լավատեսությամբ շարունակեն իրենց աշխատանքը Է՛լ ավելի շքեղ ու պերճ դարձնելու վերածնված Մայր Հայաստանը հավիտենական, որ իրականացած երազն է հայոց պատմության, որ արգասիքն է բազում սերունդների հերոսական մաքառումների, որ միակ երաշխիքն է մեր ժողովրդի Է՛լ ավելի պայծառ գալիքի և միակ հույսն ու կյանքի աղբյուրը ի սփյուռս աշխարհի ցրված հայության:

Արտասահմանում ապրող պանդուխտ զավակներ Մեր, հատկապես դուք ուրախ եղեք այսօր և հպարտ ու խանդավառ, զի նաև ձեզ ամենքիդ համար անխտիր, դեպի երկինք են բարձրանում աղոթքները Մեր, սուրբ Էջմիածնի լույս սեղաններից:

Թող անսասան, ամբողջ ու անխոով պահպանվեն Հայաստանյայց առաքելական մեր սուրբ եկեղեցին և համայն հավատացյալ ժողովուրդը մեր, որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի:

«Պինդ կալցուք զխոստովանութիւն անշարժ յուսոյն, զի հաւատարիմ է որ խոստացաւն. և զգուշասցուք միմեանց յորդորմամբք սիրոյ և գործոց բարեաց» (Եբր. Ժ 23):

Օրհնեալք եղերուք ի շնորհաց սուրբ ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի այժմ և յաւիտեան, ամէն:

Շնորհավոր Նոր տարի և սուրբ Ծնունդ:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊՈՂՈՍ Զ ՊԱՊԻՆ՝ «ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ» ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՆՐԱ ՈՒՂԵՐՁԻ ԱՌԻԹՈՎ

Ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը եղբայրական ջերմ սիրով ստացավ Նորին Սրբություն Պողոս Զ Պապի ուղերձը «Խաղաղության օրվա» առթիվ և 1973 հունվար 19 Իր հետևյալ գրությամբ, որպես հայ եկեղեցու գերագույն Պետ, Իր վերաբերմունքն արտահայտեց հանուն հայ եկեղեցու լրության և հավատացյալ հայ ժողովրդի:

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ
ՊՈՂՈՍ Զ ՊԱՊԻՆ

Հռոմ

Նոր տարվո սեմին հուզումով կարդացինք խաղաղության Ձեր ուղերձը, հագեցած Փրկչի Ավետարանի կենդանի շունչով:

Ճշմարիտ է՝ թե «խաղաղությունը պայմանն է և համադրությունը մարդկային համակեցության»:

Ճշմարիտ է՝ թե «հրամայական դարձած է նոր և համաշխարհային (տիեզերական) մանկավարժություն մը, խաղաղության մանկավարժությունը»:

Ճշմարիտ է՝ թե «պետք է ունենալ խաղաղության քաջությունը»:

Եվ ա՛յո, ճշմարիտ է՝ թե «խաղաղություն հնարավոր է»:

«Պտուղ արդարութեան խաղաղութեամբ սերմանի այնոցիկ, որ առնեն զխաղաղութիւն» (Հակոբա առաք. Գ 18):

Ձերդ Սրբություն, բարի հովիվ սիրո և խաղաղության, ապրեցեք երկար և աղոթեցեք բոլոր մարդկանց համար, զի «սէր ոչ երբէք անկանի» (Ա Կորնթ. ԺԳ 8):

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

19-ը հունվարի 1973 թ.,
Ն. Էջմիածին

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՀԶՈՐ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Մայր Հայրենիքում թե սփյուռքի տարածքի վրա 1972 թվականի նոյեմբերի 29-ին հայ ժողովուրդը ազգային հպարտության խանդավառ զգացմունքով նշեց իր պետական վերածնունդը՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 52-ամյակը: Սովետական Հայաստանի հոչակումով ավարտվեց դարեր ու դարեր տևող մեր ժողովրդի ազգային ողբերգությունը:

Անցնող տարվա համազգային տոնակատարության օրերը զուգադիպեցին նաև մեր ժողովրդի պատմական ճակատագրի հետ կապված նշանակալից տոնի՝ Սովետական Միության հանրապետությունների կազմավորման հիսնամյա հոբելյանի հետ:

Իրավահավասար սովետական ազգային հանրապետությունների համախմբումը միացյալ միութենական նոր տիպի պետության կազմում ամբողջովին համապատասխանում էր զարգացման նոր ուղի ընտրած յուրաքանչյուր ազգի, այդ թվում նաև՝ հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական ու մշակութային գերագույն շահերին:

Հայ ժողովուրդը այս նոր իրադրության մեջ գտավ իր նվիրական երազանքների մարմնացումը. ազգային վերածնունդ, պետականություն, ապահովություն և խաղաղություն:

Մեր հանրապետությունը 52 տարիների ընթացքում ինչ որ արձանագրել է իբրև հառաջդիմություն և նվաճում, առաջին հերթին պարտական է ռուս եղբայրական ժողովրդի բարեկամական օգնությանը:

Հին է հայ և ռուս ժողովուրդների և եկեղեցիների բարեկամությունը:

Հայ ժողովուրդը շատ վաղուց հոգևոր-եկեղեցական, մշակութային ու առևտրական կապեր է հաստատել Ռուսաստանի հետ: Հայ ժողովուրդն անցյալում բերել է ընդհանրապես իր սրտագին մասնակցությունը Ռուսաստանի զարգացմանը, նրա ազատագրական պայքարի հաղթանակին, մանավանդ թաթարական լծից ազատագրվելու ժամանակաշրջանում: Ի նշան այս բարեկամության և որպես երախտագիտություն հայերին, Մոսկվայում 1552—1554 թվականներին կառուցված ս. Վասիլի Երանելու տաճարի 9 գմբեթներից մեկը կոչվում էր ս. Գրիգոր Լուսավորչի անունով:

ԺԷ դարում Է՛լ ավելի էին սերտանում հայ-ռուսական տնտեսական հարաբերությունները, որի սրտառուչ արտահայտությունն էր 1660 թվականին հայ վարպետ ոսկերիչների ձեռքով պատրաստված ջուղայեցի հայ վաճառականների մեծարժեք նվերը՝ ոսկյա գահը, որը մինչև այսօր Կրեմլի զինապալատի գեղեցկագույն զարդերից մեկն է՝ նվիրված «հզորագույն և անպարտելի Մոսկովյան կայսրին», **«իբրև երջանիկ նախանշանակ գալիքի»** և ի նշան երկու ժողովուրդների **«ի Քրիստոս եղբայրության»:**

Եթե մինչև ԺԸ դարի սկիզբը հայ-ռուս

հարաբերությունները պատահական բնույթ էին կրում, այլ ուրեմն ԺԸ դարի սկզբից դրանք ստանում են քաղաքական-հայրենասիրական հետևողական և մնայուն բնույթ:

ԺԸ դարը մեր ազգային-ազատագրական շարժման բեղուն ժամանակաշրջանն է: ԺԸ դարի սկզբներից Հայաստանի ազատագրման անհրաժեշտությունը ընդմիշտ կապվում է Ռուսաստանի հետ, որպես քրիստոնյա ժողովուրդների հովանավորի և պաշտպանի:

Այս ուղղությամբ չափազանց մեծ, եռանդուն ու գործնական աշխատանքներ են կատարում Տ. Ալեքսանդր Ա Զուղայեցի, Տ. Հակոբ Շամախեցի և մանավանդ Տ. Սիմեոն Երևանցի կաթողիկոսները:

1768 թվականի օգոստոսի 1-ին «Սիմեոն Երևանցին Էջմիածնում գումարում է եպիսկոպոսական ժողով, որտեղ որոշվում է հատուկ գրությամբ դիմել Եկատերինա II կայսրուհուն» (Հայ ժողովրդի պատմություն, հատոր IV, Երևան, 1972, էջ 197):

Կայսրուհին 1768 թվականի հուլիսի 20-ին պատասխանում է Երևանցու կոնդակ-նամակին և ողջ հայությունն առնում է, պաշտոնական հրովարտակով, «կայսերական իր հատուկ ողորմության, հովանավորության և շնորհաց ներքո», հավաստելով նաև Ռուսաստանի «մշտատև ողորմության և շնորհաց շարունակությունը»:

Այս առթիվ Մաղաքիա արքեպ. Օրմանյանը հաստատում է. «Այս թվականը—1768—կրնանք նկատել իբր հիմն և արմատ այն սերտ հարաբերության, որ հաստատվեցավ հայոց կաթողիկոսության և ռուսաց կայսրության միջև որ հառաջանալով և աճելով հանգեցավ ռուսական տիրապետության Հայաստանի մի լավ մասին և հայության մի լավ կեսին վրա» («Ազգապատում», հատոր Բ, էջ 3057):

«Սիմեոն Երևանցու և Եկատերինա II կայսրուհու փոխանակած գրությունները սկիզբ դրեցին այն կապերին, որոնք հետագա տասնամյակների ընթացքում զորացան ի նպաստ Արևելյան Հայաստանի ազատագրական գործին» (Հայ ժողովրդի պատմություն, նույն տեղ, էջ 198):

Հետագա տարիներին հայ-ռուս հարաբերություններն է՛լ ավելի խորացան, ամրապնդվեցին ու շարունակվում են մինչև մեր օրերը:

1972 թվականի նոյեմբերի 12-ին Հայոց Հայրապետը Վեհարանում, ողջունելով Մոսկվայի և Համայն Ռուսիայի Պատրիարք Նորին Սրբություն Տ. Պիմենի այցը ս. Էջմիածին, հաստատում էր երկու եկեղեցիների և ժողովուրդների պատմական բարեկամությունը: Հայոց Հայրապետը, խոսելով անցյալում հայ ժողովրդի ողբերգական, տխուր ճակատագրի մասին, «հազար տարի շարունակ, մինչև 1915 թվականը, երբ սուլթանական Թուրքիան վերջին մի հարվածով ամբողջովին բնաջինջ արեց Արևմտյան Հայաստանը, կոտորելով մոտ երկու միլիոն հայ ազգաբնակչություն», նշում էր, որ «Այս ողբերգական ճակատագրից փրկվեց՝ պատմական Հայաստանի մի մասը միայն, Արևելյան Հայաստանը, որ 1828-ին գտել էր իր կյանքի ապահովությունը քրիստոնյա Ռուսաստանի հովանու ներքև: Ու այսօր, այդ նույն հողամասի վրա է, որ պատմական զարգացումների և հայ ժողովրդի հերոսական ճիգերի շնորհիվ, հիմնվեց հայկական նոր պետությունը, Սովետական Հայաստանը, իբրև լիիրավ անդամ սովետական ժողովուրդների մեծ միության: Մանավանդ ա՛յս օրերին, Մենք հիշում ենք մեր ժողովրդի տխուր անցյալը և հրճվում՝ լուսավոր ներկայով, որովհետև այս տարի, մի ամիս հետո, հանդիսավոր կերպով պիտի տոնախմբվի Սովետական Միության ազգային հանրապետությունների եղբայրական դաշնակցության հոչակման հիսնամյակը:

Այսօր, այդ տոնախմբումի նախօրյակին և ռուսաց եկեղեցու Պատրիարքի ներկայությամբ արդար է երախտագիտությամբ ոգեկոչել նվիրական անունը հայրենասեր մեծ կաթողիկոս Ներսես Աշտարակեցու, որ անցյալ դարի սկզբին տակավին, կարողացավ հստակ տեսնել հայ ժողովրդի փրկության ճանապարհը և նախախնամական դեր կատարել Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացվելու գործում:

Ռուսական զենքի և հայ կամավորների հաղթանակից հետո, ականատես ռուս զինվորական դեկաբրիստ Լաչինովը իր հուշերի մեջ պատմում է, թե Ներսես կաթողիկոսը գնում է Աշտարակ և ծնկի գալով իր հոր գերեզմանի առաջ, ասում է. «Հայր, ես իմ խոստումը կատարեցի, քո և մեր ժողովրդի երազը իրականացած է»:

Այսօր, հարյուր և հիսուն տարի հետո, մենք էլ կանգնած Ներսես կաթողիկոս Աշտարակեցու գերեզմանի առաջ, կարող ենք ասել. «Հայրենյաց պաշտպան Հայրապետ, մեր ժողովուրդը, քո՛ ցույց տված ճանապարհով անշեղորեն ընթանալով, իր քաջ որդվոց սուրբ արյունով և նույն ռուսաց ժողովրդի օգնությամբ, վերականգնեց հազար տարի առաջ խորտակված իր ազգային պետությունը»:

1915 թվականի եղեռնի օրերին Հայաստանյայց եկեղեցին ևս ապրեց իր արյունոտ գողգոթան և հավասար արիությամբ բաժանեց իր ժողովրդի տխուր ու ողբերգական ճակատագիրը: Հովվի արյունը խառնվեց հոտի արյան հետ:

Եղեռնին զոհ գնացին շուրջ 4000 հոգևորականներ: Քանդվեցին, այրվեցին, կողոպտվեցին ավելի քան 2000 վանքեր և եկեղեցիներ Արևմտյան Հայաստանում:

Ամեհի փոթորիկը եկավ և անցավ հայ եկեղեցու և հայ հոգևորականության վրայով:

Սակայն Հայաստանում 1920 թվականի նոյեմբերի 29-ին, հայ պետականության վերականգնումից հետո, հայ եկեղեցին ևս, թե՛ մայր հայրենիքում և թե՛ սփյուռքում, ոտքի կանգնեց, լվաց իր վերքերը և սկսեց ապրել հոգևոր, մշակութային նոր կյանքով:

Վերակազմակերպվեցին մեր նվիրապետական Աթոռները, վերաբացվեցին հոգևոր դպրոցները, է՛լ ավելի պայծառացան մեր ազգային-եկեղեցական թեմերը, իրենց փառավոր նորակառույց եկեղեցիներով, մշակութային սրահներով ու բարի, ազնիվ հավատացյալներով:

Հոգևոր-եկեղեցական վերազարթոնքի խոստումնալից ճանապարհի մեջ մտավ նաև Մայր Աթոռ ս. Էջմիածինը, որի վերջին կես դարյա պատմությունն (1920—1972) անցել է Հայաստանում սովետական իշխանության հաստատման և գոյության պայմաններում, հայրենի հարազատ պետության ապահով հովանու տակ:

Հայաստանյայց առաքելական եկեղեցին, Մայր Աթոռ ս. Էջմիածնի գլխավորությամբ, առաջին իսկ օրից սթափ ոգով և հայրենասիրական ջերմ զգացմունքներով ողջունում էր ստեղծված կացությունը, իրապաշտորեն և հեռատեսությամբ գնահատում իրադարձությունների նոր և փրկարար ընթացքը ու կանգնում վերածնված մայր հայրենիքի պաշտպանության հայրենասիրական դիրքերում:

Այս ոգով հայրենասիրական սրտագին գործունեություն են ծավալել 1920—1972 թվականներին **Գևորգ Ե, Խորեն Ա, Գևորգ Զ** և **Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսները** ճշմարտորեն վկայելով, որ հազարապատիկ խոցված մեր երկիրն ու նահատակ ժողովուրդը ազգային վերածնության փրկարար ու լուսավոր ուղի են բռնել շնորհիվ Հայաստանում սովետական կարգերի հաստատման և ազգային հանրապետությունների կազմավորման:

Այսօր, հայրենի հողի վրա, ս. Էջմիածնի օրհնության ներքո, մեր վերածնված հայ ժողովուրդը ապրում է և ստեղծագործում. արևահաճ ժայռերից կյանք, լույս և փառք քաղելով:

Երբեմն ավերակների վրա նստած և Հայոց լեռներում արհավիրքներ միայն տեսած «Մայր Հայաստան»-ը վեր է խոյացել կյանքի նոր և գեղեցիկ, սրտառուչ ձևերի մեջ առնական վսեմ ու հերոսական:

Պատմության մեջ մի ակնթարթ է հիսնամյակը, սակայն մեր հանրապետության 52 տարիների վաստակը հավասար է հազարամյակների ճիգին ու քրտնքին:

Արդի Հայաստանն է հայ ժողովրդի երազների, ազգային իղձերի միակ ու հուսադրիչ հանգրվանը, մեր ավետյաց երկիրը և երաշխիքը նաև մեր ազգային ապագա երազանքների, նվաճումների և գոյության, հովանավորողը՝ հայ մշակույթի, պաշտպանը հայ ոգու և արբազան ավանդությունների:

Սովետական Միության կազմավորման 50-ամյակի բերկրալի առիթով հայ ժողովուրդն անկեղծ հարգանքի, խորը երախտագիտության խոսք ունի իր ճշմարիտ ու մեծ բարեկամին՝ ռուս եղբայրակցոց ժողովրդին, որի հետ նա կնքել է հավերժական բարեկամության անխախտ դաշինք:

Տոն էր Երևանում, նահրյան հինավուրց հողում, տոն եղբայրության:

Մեր պատմության և մեր ազգային վերածննդյան այս բախտորոշ հանգրվանին Մայր Աթոռ ս. Էջմիածինն էլ, որ մանավանդ Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի օրոք ապրում է մե՛ր օրերի իր հոգևոր, եկեղեցական, շինարարական վերազարթոնքը հայ պետականության վերականգնումով, ստեղծված օրինական և գործնական պայմաններում, հավատարիմ իր պատմական դերին ու առաքելությանը, կշարունակի սրբությամբ կատարել իր հոգևոր և հայրենասիրական պարտքը թե՛ հայրենաբնակ իր զավակների և թե՛ սփյուռքի իր հայրենակարոտ ժողովրդի ծոցում:

Թող օրհնվի հավետ, պահվի ու պահպանվի նախախնամության Աջով, հայ ժողովրդի բազուկներով ու շնորհներով՝ սովետական եղբայրական մեծ ընտանիքում **«Արևելեան կողմն աշխարհիս, Հայրապետութիւն և Հանրապետութիւն Հայոց»:**

ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԱՅԼ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հռոմեական կաթոլիկ եկեղեցու քահանայապետ, Նորին Սրբություն
ՊՈՂՈՍ Զ ՊԱՊԻՆ (Հռոմ),
Կոստանդնուպոլսի հունաց տիեզերական պատրիարք, Նորին Սրբություն
ԴԵՄԵՏՐԻՈՍԻՆ (Ստամբուլ),
Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն
ՊԻՄԵՆԻՆ (Մոսկվա),
Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի հունաց ուղղափառ եկեղեցու
Պատրիարք, Նորին Սրբություն ՆԻԿՈՂԱՅՈՍ Զ-ԻՆ (Ալեքսանդրիա),
Երուսաղեմի հունաց ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Ա-ԻՆ (Երուսաղեմ),
Ղպտի ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԵՆՈՒԴԱ Գ-ԻՆ (Ալեքսանդրիա),
Անտիոքի և Համայն Արևելքի հունաց ուղղափառ եկեղեցու Պատրիարք.
Նորին Սրբություն ԷԼԻԱՍ Դ-ԻՆ (Դամասկոս),
Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲՈՒՆԱ ԹԵՈՖԻԼՈՍԻՆ (Ադիս-Աբեբա),
Հնդկաստանի և Արևելքի մայրաքաղաք եկեղեցու կաթողիկոս, Նորին Սրբություն
ԲԱՍԻԼԻՈՍ ՕԳԵՆ Ա-ԻՆ (Քոթայամ),

Համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն
ԴԱՎԻԹ Ե-ԻՆ (Թբիլիսի),
Իռլանդական օրթոդոքս եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԺՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (Բուխարեստ),
Բուլղար օրթոդոքս եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ՄԱՔՍԻՄԻՆ (Սոֆիա),
Անտիոքի ասորի օրթոդոքս եկեղեցու և Համայն Արևելքի Պատրիարք, Նորին Սրբություն ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱԿՈԲ Գ-ԻՆ (Դամասկոս),
Անտիոքի և Համայն Արևելքի մարոնիտ Պատրիարք, Նորին Սրբություն
կարդինալ ՊՈԼ ՄԵՈՒՇԻԻՆ Բեյրութ),
Անտիոքի և Համայն Արևելքի հույն կաթոլիկ եկեղեցու Պատրիարք,
Նորին Սրբություն ՄԱՔՍԻՄՈՍ Ե ՀԱՔԻՄԻՆ (Դամասկոս),
Անտիոքի ասորի կաթոլիկ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏՈՒԱՆ ՀԱՅԵԿ Բ-ԻՆ (Բեյրութ),
Քենտրբերիի Արքեպիսկոպոս, Համայն Անգլիայի Եպիսկոպոսապետ և
միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՄԱՅՔԼ ՌԵՄՋԻԻՆ
(Լոնդոն),
Աթենքի և Համայն Հելլադայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
ՀԵՐՈՆԻՄՈՍԻՆ (Աթենք),
Սերբիայի և Համայն Հարավսլավիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ՀԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),
Վարշավայի և Համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
ՎԱՍԻԼԻԻՆ (Վարշավա),
Պրագայի և Համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ,
Նորին Գերաշնորհություն ԳՈՐՈՖԵԻՆ (Պրագա),
Հայ կաթողիկե եկեղեցու Պատրիարք, Նորին Ամենապատվություն
ԻԳՆԱՏԻՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԷ ՊԱՊԱՆՅԱՆԻՆ (Բեյրութ),
Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ՄԱԿԱՐԻՈՍԻՆ (Նիկոզիա),
Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար
դոկտ. ՖԻԼԻՊ ՓՈՊԸՐԻՆ (Ժնև),
Վատիկանի պետական քարտուղար, Նորին Ամենապատվություն
կարդինալ ԺԱՆ ՎԻԼԼՈՅԻՆ (Վատիկան),
Վիեննայի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
կարդինալ ՖՐԱՆՑ ԿՅՈՆԻԳԻՆ (Վիեննա),
Փարիզի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
կարդինալ ՖՐԱՆՍՈՒԱ ՄԱՐՏԻՆ (Փարիզ),
Քրիստոնեական միության քարտուղարության նախագահ,
Նորին Ամենապատվություն կարդինալ ԺԱՆ ՎԻԼԼԲՐԱՆԴՍԻՆ
(Վատիկան),
Մարսելի Արքեպիսկոպոս, գերաշնորհ
ՌՈԺԵ ԷՉԵԳԱՐԱՅԻՆ (Մարսել),
Լատվիական ՍՍՀ ավետարանական-լութերական եկեղեցու Արքեպիսկոպոս,
Նորին Գերազանցություն Յ. Պ. ՄԱՏՈՒԼԻՍԻՆ (Ռիգա),
Էստոնական ՍՍՀ ավետարանական-լութերական եկեղեցու Արքեպիսկոպոս,
Նորին Գերազանցություն ԱԼՖՐԵԳ ՏՈՈՄԻՆԳԻՆ (Տալլին),
Միջին Արևելքի հայ ավետարանական եկեղեցիների միության նախագահ,
Վերապատվելի ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ (Բեյրութ),

Ֆրանչիսկյան միաբանության կուստոդ
ԷՐՄԻՆԻՈ ՌՈՆԿԱՐԻՆ (Երուսաղեմ),
Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի գլխավոր քարտուղար
դոկտ. ԿԱՐՈԼԻ ՏՈԹԻՆ (Պրագա),
Իրաքի պապական նվիրակ, Գերաշնորհ
ԺԱՆ ՌՅՈՒՊԻՆ (Բաղդադ),
Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ հայր
ՊՈՂՈՍ վարդապետ ԱՆԱՆՅԱՆԻՆ (Վենետիկ),
Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ հայր
ԳՐԻԳՈՐԻՍ վարդապետ ՄԱՆՅԱՆԻՆ (Վիեննա),
Վերապատվելի ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԵԼՎԱՃՅԱՆԻՆ (Մարսել),
Վերապատվելի ՍԵՆԵՔԵՐԻՄ ՍՅՈՒԼԱՀՅԱՆԻՆ (Նյու-Յորք):

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Այս մեծախորհուրդ պահին, երբ քրիստոնեական հուսո բարձունքներից իջնում է աշխարհի վրա մեծ ավետիսը մեր հոգիների Փրկչի Ծննդյան ու Աստվածահայտնության, եղբայրական սիրով լի Մեր հայացքը ողողում ենք դեպի ձեր պատմական սուրբ եկեղեցին և դեպի Ձերդ Սրբությունը, սրտագին մաղթանքով, որ նախախնամողն Աստված Ձեզ միշտ զորավիգ մնա Ձեր նվիրական առաքելության ճանապարհի վրա ի կատարումն իր կամքի մարդկային կյանքի մեջ:

Ձերդ Սրբության կողքին աղոթում ենք նաև, որ մեր Տիրոջ խաղաղության ոգին լուսավորի աշխարհը համայն և մարդիկ ու ժողովուրդներ այդ լույսի ներքև իրար ճանաչեն իբրև եղբայրներ ու գործեն համերաշխ իբրև որդիները միևնույն երկնային Հոր:

Թող լինի խաղաղություն հեռավորաց և մերձավորաց, խաղաղություն ամենեցուն:

Եղբայրական հարգալից սիրո ողջագուրումով:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

* * *

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Ամաձորի և Փրկչի հրաշափառ և սուրբ Ծննդյան շնորհավորական գրություններին ի պատասխան ստացվել են քույր եկեղեցիների հոգևոր պետերի և կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների ղեկավարների՝ այդ առթիվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում է քրիստոնեական եղբայրության ու համագործակցության սրտագին ոգին քույր եկեղեցիների ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների միջև:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:

ՍՊ-15464

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Քրիստոս ծնաւ ե յայտնեցաւ»:

Այս մեծախորհուրդ պահին, երբ Նոր տարին իր հետ է բերում մեծ ավետիսը մեր հոգիների Փրկչի Ծննդյան ու Հայտնության, եղբայրական սիրով լի Մեր հայացքը ուղղում ենք դեպի ձեր պատմական Աթոռը և ձեր գինվորյալ միաբանությունը, որ Ձեր հոգեշեն ղեկավարության ներքո գործում է բարի ներշնչումներով և ջերմ եռանդով հավատարիմ իր հոգևոր, մշակութային ու կրթական պատմական առաքելության:

Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության շնորհները թող սառատապես բաշխվեն ձեր Աթոռի ուխտապահ միաբաններին ու հավատացյալ ժողովրդին՝ ի փառս բազմադարյան Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու:

Աղոթող ենք նաև, որ մեր Տիրոջ խաղաղության ոգին լուսավորի աշխարհը հանյն, և մարդիկ ու ժողովուրդներ այդ լույսի տակ ճանաչեն միմյանց ու գտնեն միասին իբրև եղբայրներ և իբրև որդիները միևնույն երկնավոր Հոր:

«Շնորհ, սէր ու խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ». ամեն:

Օրհնությամբ՝

ՎԱՉԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

*
* *

Ամանորի և ս. Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին մեր բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

ՍՈՒՐԲ ԳՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ՀԻՍՈՒՍԻ ԾՆՆԴՅԱՆ ԱՎԵՏՈՒՄԸ

Վեցերորդ ամսին Գաբրիել հրեշտակը Աստուծո կողմից ուղարկվեց Գալիլիայի մի քաղաքը, որի անունը Նազարեթ էր, մի կույսի մոտ, որ նշանված էր Հովսեփ անունով մի մարդու հետ՝ Դավթի տնից: Եվ այդ կույսի անունը Մարիամ էր: Եվ հրեշտակը, գալով նրա մոտ, ասաց. «Ուրախացի՛ր, ո՛վ շնորհընկալ, Տերը քեզ հետ է»: Իսկ նա այս խոսքերի վրա խռովվեց, և նա մտքում խորհում էր, թե ինչ բան էր այս ողջույնը: Եվ հրեշտակը նրան ասաց. «Մի՛ վախեցիր, Մարիա՛մ, որովհետև Աստծուց դու շնորհ գտար: Եվ ահա՛ դու կհղիանաս և կծնես մի որդի ու նրա անունը Հիսուս կկոչես: Նա մեծ կլինի և Բարձրյալի որդի կկոչվի: Եվ Տեր Աստված նրան կտա նրա հոր՝ Դավթի Աթոռը, և նա հավիտյան կթագավորի Հակոբի տան վրա, ու նրա թագավորությունը վախճան չի ունենա»: Իսկ Մարիամը հրեշտակին ասաց. «Ինչպե՞ս այդ կպատահի ինձ, քանի որ ես տղամարդ չեմ ճանաչում»: Հրեշտակը պատասխանեց նրան և ասաց. «Սուրբ Հոգին կգա քո վրա, և Բարձրյալի զորությունը հովանի կլինի քեզ, որովհետև նա էլ, որ քեզնից է ծնվելու, սուրբ է և Աստուծո որդի կկոչվի: Եվ ահա քո ազգական Եղիսաբեթը. նա ևս հղի է իր ծերության մեջ, և այս՝ հղիության վեցերորդ ամիսն է նրա, որ ամուլ էր կոչված. որովհետև Աստուծո կողմից որևէ բան անկարելի չի լինի»: Եվ Մարիամն ասաց. «Ահավասի՛կ ես մնում եմ Տիրոջ աղախինը, թո՛ղ քո խոսքի համաձայն լինի ինձ»: Եվ հրեշտակը հեռացավ նրանից:

ՀԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ ԵՎ ՀՈՎԻՎՆԵՐԻ ԱՑՑԸ

Այն օրերին Օգոստոս կայսեր կողմից հրաման ելավ՝ ամբողջ երկրում մարդահամար անելու համար: Այս առաջին մարդահամարը տեղի ունեցավ, երբ Կյուրենիոսը կուսակալ էր Ասորիքում: Եվ բոլորը գնում էին արձանագրվելու մարդահամարի՝ յուրաքանչյուրն իր քաղաքում: Հովսեփն էլ Դավթի տնից և ազգից լինելով՝ Գալիլիայի Նազարեթ քաղաքից ելավ գնաց դեպի Հրեաստան՝ Դավթի քաղաքը, որը Բեթղեհեմ է կոչվում, մարդահամարի մեջ արձանագրվելու Մարիամի հետ, որ նրա հետ նշանված էր և հղի էր: Եվ երբ նրանք այնտեղ հասան, նրա ծննդաբերելու օրերը հասան, և նա ծնեց իր անդրանիկ որդուն, խանձարուրի մեջ փաթաթեց նրան ու դրեց մսուրի մեջ, որովհետև իջևանում նրանց տեղ չկար:

Եվ այդ շրջանում բացօթյա բնակվող հովիվներ կային, որոնք իրենց հոտերի գիշերային պահպանությունն էին անում: Եվ Տիրոջ հրեշտակը երևաց նրանց, Տիրոջ փառքը ծագեց նրանց շուրջը, ու նրանք սաստիկ վախեցան: Եվ հրեշտակը ասաց նրանց. «Մի՛ վախեցաք, որովհետև ահա ձեզ մեծ ուրախություն եմ ավետում, որը ամբողջ ժողովրդին կլինի. որովհետև այսօր Դավթի

քաղաքում ձեզ համար ծնվեց մի Փրկիչ, որ օծյալ Տերն է: Եվ սա՛ ձեզ համար նշան կլինի՝ խանձարուրով փաթաթած և մսուրի մեջ դրված մի մանուկ կգտնեք»: Եվ հանկարծակի այդ հրեշտակի հետ երևաց երկնային զորքերի մի բազմություն, որ օրհնում էր Աստծուն ու ասում. «Փա՛ռք Աստծուն՝ բարձունքներում, և երկրի վրա խաղաղությո՛ւն և հաշտությո՛ւն՝ մարդկանց մեջ»: Եվ երբ հրեշտակները, նրանցից հեռանալով, երկինք բարձրացան, հովիվները ասացին միմյանց. «Եկեք գնանք մինչև Բեթղեհեմ և տեսնենք, թե ի՛նչ բան է այս եղածը, որ Տերը մեզ ցույց տվեց»: Եվ նրանք շտապով եկան ու գտան Մարիամին և Հովսեփին և մսուրի մեջ դրված մանկանը: Եվ ճանաչեցին նրան այն խոսքից, որ իրենց ասվել էր մանկան մասին: Եվ բոլոր լսողները զարմանում էին այն բաների վրա, որ հովիվները ասացին իրենց: Իսկ Մարիամը այս բոլոր բաները պահում էր իր մեջ և իր սրտում խորհում: Եվ Հովիվները վերադարձան, փառավորում և օրհնում էին Աստծուն այն ամենի համար, որ լսեցին ու տեսան, ինչպես իրենց պատմվել էր:

(Նոր Կտակարան, Մայր Աթոռ ս. Էջմիածին, 1969, Ավետարան ըստ Ղուկասի, էջ 178—179, 182—184):

ՄՈԳԵՐԻ ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆԸ

Երբ Հիսուս ծնվեց Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում, Հերովդես արքայի օրով, ահա արևելքից մոգեր եկան Երուսաղեմ և ասացին. «Ո՞ւր է հրեաների արքան, որ ծնվեց, որովհետև նրա աստղը տեսանք արևելքում և եկանք նրան երկրպագելու»: Եվ երբ Հերովդես արքան լսեց այս, խռովվեց, նրա հետ և ամբողջ Երուսաղեմը: Եվ հավաքելով բոլոր քահանայապետներին ու ժողովրդի դպիրներին՝ հարցրեց նրանց, թե ո՞ւր պիտի ծնվի Քրիստոսը: Եվ նրանք ասացին նրան. «Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում, որովհետև մարգարեի միջոցով այսպես է գրված. «Եվ դու, Բեթղեհե՛մ, Հուդա՛յի երկիր, Հուդայի իշխողների մեջ փոքրագույնը չես. քեզնից մի իշխան պիտի ելնի ինձ համար, որ պիտի հովվի իմ ժողովրդին՝ Իսրայելին»: Այն ժամանակ Հերովդեսը գաղտնի կանչեց մոգերին և նրանցից ստուգեց աստղի երևալու ժամանակը: Եվ նրանց Բեթղեհեմ ուղարկելով՝ ասաց. «Գնացե՛ք ստույգ իմացեք մանկան մասին, և երբ գտնեք, տեղեկացրե՛ք ինձ, որպեսզի ես էլ գամ երկրպագեմ նրան»: Եվ նրանք երբ թագավորից լսեցին այս, գնացին: Եվ ահա այն աստղը, որ տեսել էին արևելքում, առաջնորդեց նրանց, մինչև որ եկավ կանգնեց այն տեղի վրա, ուր մանուկն էր: Եվ երբ աստղը տեսան, չափազանց ուրախացան: Եվ երբ այն տունը մտան, տեսան մանկանը իր մոր՝ Մարիամի հետ միասին և ընկան ու երկրպագեցին նրան. և բանալով իրենց գանձերը՝ նրան նվերներ մատուցեցին՝ ոսկի, կնդրուկ և զմուռս: Եվ երազի մեջ հրաման առնելով չվերադառնալ Հերովդեսի մոտ, այլ ճանապարհով գնացին իրենց երկիրը:

(Ավետարան ըստ Մատթեոսի, էջ 7—8):



ՄԼԻՇԵ ԱՐՔԵՊ. ԴՈՒՐՅԱՆ

ԱՍՏՎԱԾՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ*

Ս. Ծննդյան տոնին առթիվ

«Արդարացավ հոգվով».—Հիսուսի հոգին բնազանցական նշանակությամբ կամ դավանաբանական բացատրություններով պիտի չմեկնենք, այլ պիտի ուզենք հասկնալ զայն իբրև միությունը կամ արտադրությը իր հրաշալի անձին: Ինքն այդ հոգիով մարդկային ստույգ գիտակցության արժեքը բարձրացուց գերազանցորեն, ներշնչեց մեզի մեր փրկության խարիսխն եղող հավատքը, և հոգևոր դյուցազնության մը անուշրելի զենն ու զրահը հագցուց մեզի: Արդ, այն հոգին՝ որով արդարացավ իր ա՛յնքան կարճ կյանքը երկրի վրա՝ սա հզոր համոզումը ներշնչեց մեզի՝ չգատվիլ իր սերնե, ի՛նչ չարիքներ ալ թե սպառնան մեր գոյության ու վտանգեն զայն:

Ավետարանական պատմության բոլոր տվյալները, որոնց իրավունքը սուրբ է մեզի համար, կհաստատեն՝ թե Քրիստոսի հոգին անուշահոտ օծումը եղավ ապականած մարդկության. աստվածախառն շունչ մը՝ որ թափանցեց քայքայված ընկերության մը իսնարհագույն այն խավերուն մեջ, ուր անիրավված աղքատներ կային, ուր վիրալից ու սգավոր սիրտեր կհեծկլտային, ուր գերիներ կային ամբարիշտ լուծերու տակ գրաստացած, ուր լույսի կարոտ կույրեր կխարխափեին թանձրացած մութի մը մեջ. այդ բոլոր դժբախտներուն նոր թվական մը ավետեց Ան, արևափառ շքեղությամբ տոնելու համար Աստուծո հաճելի «տարեկան»-ը (Եսայի ԿԱ 1):

Անողորմ ու անզգայացած սերունդներու դեմ դատապարտության վճիռ մը արձակելու բարոյական արիությունը բավական պիտի չըլլար թերևս որ հոգիովն արդարանար երկնավոր Վարդապետը, եթե ընկերային այդ հեղաշրջումի ձեռնարկը վրիպեր հասնելու իր բարձրագույն նպատակին, այն է տիեզերական ու հասարակորդ եղբայրության մը սկզբունքը տարածել մարդոց մեջ, և զանոնք Աստուծո որդիներ ընել երկնքի թագավորության համար:

Եվ ահա իրական արդյունք մը պսակեց Հիսուսի կոչումն հավիտենապես.

Լա՛վ ևս սակայն ճանչնալու համար իր հոգին՝ որով արդարացավ Ան, պետք ունինք ավելի մոտեն դիտելու անոր անհատնում ճառագայթումները՝ որոնցմով կլուսավորվի մեր ներքին աշխարհը: Ո՛չ միայն աստվածպաշտության երկյուղած զգացումն ու խորհուրդը կունենանք իրմով, ո՛չ միայն իմաստության ու շնորհներու, ճանաչումի և զորության սերմերը կաճին մեր մեջ իր անստվեր նայվածքին ջերմությամբը, այլև սիրո և ներողության, գութի և զոհաբերումի կամքը կպատսպարվի մեր տկար մարմնին մեջ: Իրմով հակառակորդներ կըլլանք փարիսեցիական ամեն բարոյակերպ կեղծիքներու, սուտ պերճանքներու, փառամոլ ու բռնավոր ձգտումներու, անմիտ վրեժխնդրություններու. և տակավին ինչե՞ր իր հոգին կխոսի մեզի, հոգիով զմեզ արդարացնելու համար:

Գիտենք թե մարդիկ շատ անգամ իրենց մոլար դատումներովն ու անձնապաշտ հոժարություններովը կշինեն հոգի մը իրենց հաշվույն. անով կշարժին, կվճռեն, կպարծին ու կգործեն, կարծելով տեր ըլլալ բացարձակ ճշմարտության մը՝ որ գուցե ուրացումն է հայտնի ճշմարտություններու: Այնպիսիներու համար կըսե Հիսուսի հոգին, «Չեք գիտեր թե ի՛նչ հոգիի կծառայեք

* «Սիոն», Երուսաղեմ, 1928, էջ 33--34:

դուք», ինչ որ ըսավ իր երկու աշակերտներուն՝ երբ անոնք երկինքեն իջնելիք կրակի մը պատուհասովը կուզեին պատժել Սամարական գիւղի մը բնակչության նախատելից մերժումը իրենց Վարդապետին հանդեպ (Ղուկ. Թ 55):

Չենք վարանիր ուրեմն՝ հայտարարելու թե աստվածային իմաստությունն է որ կպահանջե մեզմե՝ արդարանալ մեր նմաններուն մեջ. չթույլատրել որ մեր ճակատագիրը խաղալիք դառնա մեր հակումներուն կամ հըպարտ թելադրություններուն՝ իբրև թելերու, որոնք ոչպես թե կզսպանակեն մեր բանական ամբողջ գործունեությունը, բայց չեն կրնար երաշխավորել հոգիին ազնվացումն ու ազատագրությունը հավիտենական կյանքի մը համար: Իրավ է որ մարդկային իմաստությունն ալ իր գլուխերովն ու միջոցներովը, իր օրենքներովն ու պարտադրություններովը կրցած է և կրնա, քարեպաշտական միտքերե անկախաբար, քաղաքակրթության մը բարիքներուն տնտեսությունը վարել ու արդյունավորել՝ բայց մեր մարմնավոր սեպքերուն մեջ կամփոփվի ան առավելապես, անտարբեր մնալով հոգիով արդարանալու այն մեծ սկզբունքին, որ աստվածպաշտության խորհուրդին էական արտահայտումն է հավատացյալներուն համար:

Չմոռնանք նաև որ աշխարհիկ փորձառություններու շնորհիվ մեր մտքին վայելած հաճույքները՝ ո՞րքան ալ նվիրական համարվին՝ յուրական պաշտոն մը չունին մեր հավատքը ամրացնելու կամ խախտելու. և սակայն, ինչպես որ դյուցազնի մը պետքը կզգանք ռազմադաշտի մը վրա՝ մեր երկրավոր կյանքը ապահովելու հույսերով, ա՛նշչափ և ավելի պետք ունինք հոգևոր պատերազմին մեջ մեզի հետ ունենալու մեր «հավատքին զորագլուխը», մեր Տերը:

Մանավանդ սորվինք իրմե՝ բարի և ուղիղ հոգիով արդարացնել մեր մսեղեն և երկրավոր ծնունդը:

ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ

ԼՈՒՅՍ ԵՎ ԽԱՎԱՐ

...Խաւարն անցանէ և լոյսն ճշմարիտ արդէն իսկ երևի։ Որ ասէ, եթէ ի լոյսն իցէ և զեղբայր իւր ատիցէ, սուտ է և ի խաւարի է տակաւին...

Ա Յովհան. Բ 8—9։

Ամեն է դեռ. սառցե կապանքը շղթայում է վտակն ու աղբերակունք, բքաբեր հողմը պաղություն և թախծալի մռայլ է սփռում երկնից և երկրի երեսին. բայց ահա սառնամանյաց գրկում վերածնում փթթում է նոր տարին, և բնությունը խոր շունչ է քաշում. դեռ դժգույն է արևը, դեռ անզոր են նորա ճառագայթները, սակայն վեր՝ միշտ ավելի վեր է բարձրանում նա հորիզոնի վերա և շատ չի անցնի, վերևում կանգնած յուր կենսաբեր ջերմությունը կցողե, ձմռան կապանքը կփշրե, նոր գարուն կբացվի, նոր օրեր կգան, ծառն ու թուչուն կենդանություն կառնեն։ Նոր տարի է, արարած աշխարհ զգում է այդ և կենսառատ հուսով շնչում. կանցնի, կանցնի՛ շուտով ցուրտն ու մռայլ, ջերմ հովեր կշնչեն, կյանք և ուրախություն կբերեն։

Խավար է դեռ, մառախլապատ է մարդկային կյանքի հորիզոնը, դուրսն անպակաս չարագուշակ վոլթորկալից ամպերը, ներսը մարդկանց եսական կուրծքերի տակ մեռելային պաղություն է տիրում. չոր ու սև կրքեր կաշկանդում են սրտերը, մթին են հոգիք, դաժան ու մռայլ մտքերով պաշարված. սակայն, տե՛ս, հեռու արևելքում շողում է բարեգուշակ աստղը, ճշմարտության Արեգակի ծագումն ավետում աշխարհին, յուր մեղմ ոգեպարար լույսով ցույց է տալիս այն տեղը, ուր չքավորության և խոնարհության գրկում հանգչում է Բեթղեհեմի Նորածին Մանուկը, և ամեն իմաստուն, որի հայացքը դեպի վեր, դեպի վսեմն ու խորհրդավորն է ուղղված, որ երկնքի երեսը քննել գիտե, ամեն սիրտ, որ հովվական պարզություն և անկեղծություն ունի, որ երկնավոր բարին ու գեղեցիկը անմեղ սրբությամբ ընդունելու ուրամադիր է, հիացած խոնարհում և երկրպագություն է մատուցանում հրաշալի Մանկան, անպատմելի բերկրությամբ և հուսով զգացված՝ զարթում, ելնում են թմրած հոգիներն և ամեն ջերմեռանդ քրիստոնյա բերան մրմնջում է. «Խաւարն անցնէ և լոյսն ճշմարիտ արդեն իսկ երևի»։

...Լո՛ւյս... դեռ հազար տարիներ առաջ հայի հեթանոս նախնիք լույս էին որոնում, մաքուր կենդանարար մի լո՛ւյս էր նոցա տենչանաց բարձրագույն առարկան. նոքա լույս էին երգում, ամեն գեղեցիկ, սուրբ, ցանկալի բան լուսո անունով կնքում. լուսո մեջ երանություն տեսնում, մինչև որ հայտնվեցավ Մեծ Լուսավորիչը, Միածնի իշման տեղում լուսո վտակներ հոսեցին, Հայոց խավար լեռների որդիներն անցան այդ ավազանից և լուսանորոգ վերադարձան։

Լո՛ւյս... Այսօր էլ մեր ժողովուրդը ժամա-

նակավոր թմրությունից արթնացած լո՞ւյս է կանչում, լուսո շավիղներով դեպի փրկություն դիմել ձգտում. դարերի քունությունը չէ մարել նորա կրծքում սրբազան տենչանքի հուրը և նա կարոտ աչքերով դիմում է դեպի ամեն կողմ, ուր նորան լույս են խոստանում, նորա աչքի առաջ լուսո լապտերներ են շողացնում. և բազմաթիվ են այդպիսի լապտերներ, մթության մեջ մի առանձին որապույր ունին. ժամանակ է որ նա շվարած կանգ առնե և հարցնե. ո՞րն է ճշմարիտ լույսը:

«Որ ասէ, եթէ ի լոյսն իցէ և զեղբայր իւր ատիցէ, սուտ է և ի խաւարի է տակաւին». ահա՛ պատասխանը, մի դատավճիռ, որ ուժգին հողմի նման անցնում՝ մարում է մեր շուրջ պսպղացող կարծեցյալ լույսերը և խավարի սաստկությունը յոթնապատիկ ավելի զգալի է դարձնում:

...Բնական, ինքնաբերական, ճշմարիտ լույսը յուր ջերմությունը հետը պիտ ունենա. այն լույսը, որ սիրո ջերմությունից զուրկ է, որ մարդոց սրտերը չէ հալում, իրար հետ կապում, սրբույն, ազնվին, բարվույն համար զգայուն դարձնում՝ կեղծ է, ասում է առաքյալը, մուրացածո և արվեստական: Ճշմարիտ լույսը միայն արտաքին սնոտի փայլով մարդոց աչքերը չէ շլացնում, այլ ճառագայթում է նոցա հոգու մեջ. կրթում, ազնվացնում է նոցա սիրտը: Եթե արդարև նոր տարին մի նոր կյանքի ճանապարհ պիտի բանա մեզ համար, ապա մեր ճանապարհը այսպիսի լուսո լապտերով պետք է լուսավորված լինի. եթե մեր հոգևոր բարոյական կյանքը կաշկանդող, անբերրի անապատ դարձնող սառնամանիքը զվարթերես գարնան տելի պիտի տան՝ ապա ընդհանուր եղբայրական սիրո ջերմ ճառագայթները պետք է նորա վերա ընկնեն, մինչև կուրծքերի խորքը թափանցեն:

Ցմեռն է դեռ և խավար, բայց հեռու հորիզոնի վերա կանգնած՝ ջերմ լույս է սփռում ամեն հավատացյալի սրտի մեջ Բեթղեհեմի ավետաբեր աստղը և թելադրում՝ երգել երկնքի հրեշտակների հետ մեկ տեղ. «Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

(«Արարատ», Վաղարշապատ, 1895, հունվար, էջ 1—8):



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հունվարի 5-ին, ուրբաթ օրը, երեկոյան, Մայր տաճարում ավանդական հանդիսությամբ կատարվում է Ճրագալույցի արարողությունը, ի ներկայության բազմաթիվ հավատացյալների:

Հոգևոր ճեմարանի սաները ընթերցում են Դանիելի գրքից Երից մանկանց օրհներգությունը:

Ճրագալույցի երեկոյան սուրբ պատարագը մատուցում է հոգ. տ. Տիրան աբղ. Կյուրեղյանը:

Հավարտ ս. պատարագի տեղի է ունենում Ծննդյան տոնի նախատոնակը՝ Հայոց Հայրապետի հանդիսադրությամբ:

Մայր տաճարի խնկաբույր կամարների ներքո հնչում է «Խորհուրդ մեծ և սքանչելի» շարականը:

Ժամերգության և արարողության ավարտին եկեղեցական թափորը շարականով և երգով ուղղվում է դեպի վանական սեղանատուն, ուր օրհնվում է մայրավանքի աղն ու հացը, և ապա միաբանությունն ու ուսանողությունը ճաշակում են Ծննդյան նավակատիքի բարիքները:

Հունվարի 6-ին, շաբաթ օրը, դեռևս վաղ առավոտից, հավատացյալների հոծ բազմությունը լցրել է Մայր տաճարն ու նրա շրջափակը:

Մայր տաճարում պաշտվում է սուրբ Ծննդյան հանդիսավոր ժամերգությունը:

Ժամը 11-ին սկսվում է ս. պատարագը:

Հայոց Հայրապետը վեհարանում զգեստավորված քահանայապետական լրիվ զգեստավորմամբ, երգով ու շարականով և զանգերի ավետավոր հնչյունների ներքո հանդիսավորապես առաջնորդվում է Մայր տաճար Ծննդյան սուրբ պատարագը մատուցելու:

Ս. Սեղանին սպասարում է վարդապետների, քահանաների և սարկավագների ողջ խումբը:

Ծննդյան ս. պատարագին ներկա են Գերագույն հոգևոր խորհրդի, Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, մայրավանքի պաշտոնեությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը:

Ս. պատարագի ընթացքում Ճաշոց Ավետարանը ընթերցում է ուիստավորաբար Մայր Աթոռում գտնվող գեր. տ. Գնել եպս. Ծերեճյանը, որը և ապա կատարում է «Վերաբերում»-ը:

Ս. պատարագը վեհ հանդիսավորությամբ շարունակվում է մինչև «Հայր մեր»:

Ս. Ծննդյան տոնի ուրախ առիթով ոգեշունչ քարոզ է խոսում պատարագիչ Հայոց Հայրապետը՝ ավետելու Քրիստոսի ծննդյան հոգևոր բերկրանքը և շնորհավորելու ողջ հայության սրբազան տոնը:

Հայոց Հայրապետի քարոզը, որը նույն գիշեր ձայնասփռվեց Երևանի ռադիոյով, տպագրվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 8):

Հավարտ ս. պատարագի հաղորդություն են առնում հավատացյալներից շատերը:

Ս. պատարագի ավարտին Մայր տաճարում, Հայոց Հայրապետի հանդիսավորու-

թյամբ, կատարվում է Փրկչի Մկրտության տոնը՝ Ջրօրհնյաց հանդեսը:

Ս. Սեղանի առաջ դրված են կաթսաներ՝ լցված ջրով:

Հայոց Հայրապետը օրհնությամբ խաչը գցում է ջուրը, և տաճարի կամարների տակ հնչում են «Այսօր ձայնն հայրական» և «Հիվ զարմանալի» մեղեդիները:

Հավարտ Ջրօրհնյաց հանդեսի Հայոց Հայրապետը առաջնորդվում է Վեհարան, ընդունելության դահլիճ:

Հանուն հայ ժողովրդի, Մայր Աթոռի միաբանության, պաշտոնեության, Ծննդյան տոնի առիթով Հայոց Հայրապետին շնորհավորում է տ. Գնել եպս. Մերեճյանը՝ ցանկանալով Նորին Ս. Օծությանը քաջառողջություն, արևշատություն և երջանիկ հովվապետություն՝ ի փառս Հայաստանյայց առաքելական եկեղեցու, ի պայծառություն Մայր Աթոռ ս. Էջմիածնի և ի միխթարություն հայ ժողովրդի:

Այնուհետև օրհնության խոսք է ասում Հայոց Հայրապետը, շնորհավորում բովանդակ հայության Ամանորն ու ս. Ծննդյան տոնը, օրհնում ազգն ու եկեղեցին, հայրենիքն ու ժողովրդին և խաղաղություն բարեմաղթում ողջ աշխարհին և համայն մարդկությանը:

Ս. Ծննդյան տոնի առիթով, Վեհարանում հյուրասիրությունից հետո, բոլոր ներկաները աջահամբույրով շնորհավորում են Հայոց Հայրապետին և ստանում Նրա օրհնությունը:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Հայրապետի որոշումով Մայր Աթոռում վերակազմակերպվեց Հայաստանյայց եկեղեցու Միջեկեղեցական հարաբերություններ բաժինը, որի հիմնական նպատակն է առավել գործոն կերպով բերել հայ եկեղեցու մասնակցությունը համաշխարհային էկումենիկ շարժմանը և աշխարհի խաղաղության ամրապնդման գործին, սերտ հարաբերություններ մշակել և գործակցել քրիստոնյա եկեղեցիների, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի և այլ կրոնական և էկումենիկ կազմակերպությունների հետ:

Հայաստանյայց եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու վարիչ է նշանակված Մայր Աթոռի միաբան հոգեշնորհ սր. Արսեն ծ. վրդ. Բերբերյանը:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

11-ը հունվարի 1973 թ.,
Ս. Էջմիածին

Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏՈՆԸ ԵՎ ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ս. Ստեփանոսը Քրիստոսի փառավոր ու անթառամ գործի համար նահատակված առաջին մարտիրոսն է: Նրա կյանքի և գործունեության մասին խոսվում է «Գործք առաքելոց»-ի Զ—Է գլուխներում:

Երբ Երուսաղեմի քրիստոնյա առաջին համայնքի մեջ հավատացյալների թիվը սկսեց աճել, անհրաժեշտություն զգացվեց 12 առաքյալների կողքին ընտրել 7 օգնականներ, որպեսզի առաքյալները նվիրվեին Աստուծո խոսքի քարոզության սրբազան գործին, իսկ 7 օգնականները (Ստեփանոս, Փիլիպպոս, Պրոքորոն, Նիկանորովրա, Տիմոնա, Պարմենա, Նիկողայոս) աղքատներին նպաստ բաժանեին, որբերին և այրիներին հոգատարություն ցույց տային և սուրբ Սեղանին սպասարկություն անեին:

Այս ընտրված 7 անձինք եկեղեցու մեջ ճանաչվեցին «սարկավագ» անունով: «Սարկավագ» բառը նշանակում է օգնական, գործակից, սպասավոր: Առաջին անգամ այս բառին հանդիպում ենք Փիլիպ. (Ա 1) և Ա Տիմոթեոսի (Գ 8) թղթերում:

Սարկավագները, բացի վերոհիշյալ պարտականությունները կատարելուց, զբաղվում էին նաև ավետարանչությամբ: Հատկապես նշանավոր են Ստեփանոսի և Փիլիպպոսի քարոզությունները: Փիլիպպոսը քարոզում էր Սամարիայում (Գործք Ը 5) և ինքն էր, որ դարձի բերեց եթովպիացի Ներսինիին (Գործք Ը 37—38):

Իսկ Ստեփանոս սարկավագը «շնորհներով և զորությամբ լեցված մարդ, ժողովրդի մեջ զարմանալի գործեր եւ մեծամեծ նշաններ էր անում» (Գործք Զ 8): Հատկապես նշանավոր են նրա վիճաբանությունները լիբիացիների, կյուրենացիների և ալեքսանդրացիների ժողովարանների անդամների և կիլիկեցի ու ասիացի հրեաների հետ (Գործք Զ 9):

Նշանավոր է նաև ատյանի առջև արտասանված Ստեփանոսի ճառը (Գործք Է 2—53), ուր մեծ հմտությամբ վերլուծության է ենթարկում Իսրայելի կրոնական պատմությունը Աբրահամից մինչև Մովսես՝ ուսկընդիրների միտքը պատրաստելով քրիստոնեության մասին իր տալիք պատգամների համար:

Ատյանը ս. Ստեփանոսին անիրավորեն մահվան է դատապարտում:

Եվ այն պահին, երբ վայրի գազանների նման հրեաները հոշոտում էին սրբին, նա, քրիստոնյային հատուկ մեծագույն ներողամտությամբ, աղոթում էր. «Տէր, սա մեղք մի համարիր դրանց» (Գործք Է 59):

Այս սուրբ, ազատամիտ ու ներողամիտ անձնավորությունը իր հերոսական նահա-

տակությամբ մեծագույն դաս է հանդիսացել հետագա սերունդների համար:

Ս. Ստեփանոսի տոնը, սակայն, ավանդաբար մեր վանքերում և եկեղեցիներում համարվում է մասնավոր տոնը սարկավագների և ժառանգավոր սաների:

Քահանայական ձեռնադրություն Մայր տաճարում՝ ձեռամբ տ. Տիրան արքեպիսկոպոսի (1972 թ. հոկտեմբերի 15)

Այս գեղեցիկ ավանդությունը պահվել է նաև Մայր Աթոռում, Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության օրերին:

Ս. Ստեփանոսի տոնը տոնն է Մայր Աթոռի միաբան ու ուսանող սարկավագների, որոնք ամեն տարի մեծ խանդավառությամբ ոգեկոչում են անունն ու հիշատակը իրենց մտատիպար և եկեղեցու առաջին նահատակ ու նախավկա ս. Ստեփանոսի:

Այս տարի էլ ս. Ստեփանոսի տոնը, դեկտեմբերի 25-ին, եղավ սրտագին առիթը նման հանդիսությունների և հոգևոր ուրախության:

Դեկտեմբերի 24-ին, կիրակի օրը, երեկոյան, ողջ միաբանությունն ու հոգևոր ճեմարանի ուսանողությունը մասնակցում են նախատոնակին, որը կատարվում է տաճարի հյուսիսային թևում գտնվող ս. Ստեփանոսի խորանի առաջ:

Հավարտ նախատոնակի արարողության Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպիսկոպոսը դպրության չորս աստիճաններ է տալիս Գ դասարանի 7 ուսանողների, ուրախ կրելու իրավունք՝ Ա լսարանի 5 ուսանողների, և կիսասարկավագական աստիճան՝ Բ լսարանի 9 ուսանողների:

Դեկտեմբերի 25-ին, երկուշաբթի օրը, առավոտյան, Մայր տաճարում պաշտվում է ժամերգությունը: Հնչում են օրվա սրբին նվիրված «Նահատակ բարի Քրիստոսի», «Այսօր դասք» և «Ընդ երկնայնոց» շարականները:

«Փառք ի բարձունս»-ի ժամանակ Մայր Աթոռի 15 սարկավագներ, սաղավարտ ի գլուխ, բուրվառներով և տապանակներով, զույգ-զույգ դուրս են գալիս ավանդատնից և, ըստ ավագության, շարվում ս. Ստեփանոսի խորանի առաջ:

Առավոտյան եկեղեցական արարողության վերջին պահն է: Հնչում են «Նախասարկավագ և առաջին մարտիրոս» և «Ստեփանու

քաղցրիկ տատրակ» մեղեդիները, որով և ավարտվում է արարողությունը:

Ժամը 10-ին սկսվում է ս. պատարագը, որը մատուցում է հոգևոր ճեմարանի փոխ-տեսուչ տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանը:

մանն հավատարիմ ապասավորները Աստուծո ս. Սեղանին, և օրհնում նրանց ուխտը:

Ժամը 15-ին ճեմարանի սեղանատունը տրվում է ճաշկերույթ՝ ի պատիվ Մայր Աթոռի նորընծա սարկավագների:

Նորընծա սարկավագները փոխ-տեսուչ տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանի հետ

Ս. պատարագի սկզբում Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը կատարում է Բ լսարանի 9 ուսանող սարկավագների ձեռնադրությունը: Մայր տաճարի կամարների տակ թնդում է «Աստուածային և երկնային շնորհ» տաղը: Խարտավիլակի պաշտոնը կատարում է տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանը, որը և ձեռնադրությունից հետո խոսում է բովանդակալից խրատական՝ «Զի լուծն իմ քաղցր է, և բեռն իմ փոքրոգի» (Մատթ. ԺԱ 30) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի նորընծա սարկավագների խումբը, տ. Հուսիկ սրբազանի և տ. Արիս ծ. վարդապետի գլխավորությամբ, առաջնորդվում է Վեհարան՝ ստանալու Հայոց Հայրապետի օրհնությունը: Ն. Ս. Օծությունը մասնավոր ջերմությամբ և սիրով է ընդունում Իր հոգևոր զավակներին, խրատում նրանց՝ լինել ս. Ստեփանոսի նը-

Սեղանին նախագահում է տ. Հուսիկ եպիսկոպոսը՝ կողքին ունենալով տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանին:

Ճաշին ներկա են նաև հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, որոնցից Ա. Հատիտյանը, Գր. Գյուլյանը, Պ. Շահբազյանը, Ս. Անթոնյանը բովանդակալից և խրախուսիչ խոսքերով շնորհավորում են Մայր Աթոռի սարկավագների տոնը:

Ուսանողները ճաշկերույթի խանդավառությունը ավելացնում են մի շարք երգերի ոգեվորիչ կատարումով:

Հանուն նորընծա սարկավագների երախտագիտական և շնորհակալական խոսք է ասում Գրիգոր սրկ. Քեշիշյանը:

Մայր Աթոռը, ազգիս Վեհափառ Հայրապետը դեկտեմբերի 25-ին մի անգամ ևս ապրեցին հոգևոր հնձի բերկրանքը 9 նորընծա սարկավագների ձեռնադրությամբ:

Բ լսարանի 9 սարկավագները միակամ ու միախորհուրդ, իրենց ազատ կամքով, սրտի թելադրանքով ու թրթիռով, ձեռնադրությամբ ընդունեցին հայ եկեղեցու սպասավորության առաջին աստիճանը խորհրդանշող սարկավագական ուրարը: Այս քայլը մեր տղաների հոգեկան չափահասության, մտածումի և զգացմունքների, ծառայության ոգու և հասունության պայծառ գրավականն էր:

Հանուն «Էջմիածին» ամսագրի խմբագրության ջերմորեն շնորհավորում ենք նորընծա սարկավագներին, խորապես գնահատում նրանց այս նվիրումի և զոհողության ոգին, հայ եկեղեցուն ծառայելու այս խոստումնալից գինվորագրությունը՝ մաղթելով, որ նրանք լինեն «մշակք առանց ամօթոյ»:

Մայր Աթոռում կատարված այս սարկավագների ձեռնադրությամբ հայ եկեղեցու սպասավորության կանչված ընտիր հոգիների հավերժական աշակերտության ոսկե շղթայի վրա ավելանում է ևս 9 նոր օղակ:

«Հայր իմ և մայր իմ թողին զիս և Տէր ընկալայ զիս» (Սաղմ. ԻԶ 10):

Բարեշնորհ Ավետիք սարկավագ Արթինյան. ծնվել է Ռումինիայի Պրայիլա քաղաքում, 1953 թվականին: Ավարտել է տեղի ռումինական դպրոցի 8-րդ դասարանը: 1967 թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան:

Բարեշնորհ Հրանտ սարկավագ Աղաջանյան. ծնվել է 1954 թվականին Ռումինիայի Պրայիլա քաղաքում: Ավարտել է տեղի ռումինական դպրոցի 8-րդ դասարանը: 1967 թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան:

Բարեշնորհ Միսակ սարկավագ Մարգարյան. ծնվել է 1955 թվականին Էջմիածնում: Ավարտել է տեղի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանը: Հոգևոր ճեմարան է ընդունվել 1968 թվականին:

Բարեշնորհ Հարություն սարկավագ Սարգսյան. ծնվել է 1950 թվականին Լենինականում: Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը 1967 թվականին: 1969 թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան:

Բարեշնորհ Գրիգոր սարկավագ Քեշիշյան. ծնվել է 1952 թվականին Բեյրութում: Սովորել է Վենետիկի ս. Ղազար վանքում: 1970 թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան:

Բարեշնորհ Հակոբ սարկավագ Զմրուխտյան. ծնվել է 1953 թվականին Բեյրութում: Ավարտել է տեղի Վ. Թեքեյան վարժարանը: 1970 թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան:

Բարեշնորհ Գրիգոր սարկավագ Զմրուխտյան. ծնվել է 1954 թվականին Բեյրութում: Ավարտել է տեղի Վ. Թեքեյան վարժարանը: 1970 թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան:

Բարեշնորհ Վաչե սարկավագ Նալբանդյան. ծնվել է 1954 թվականին Բեյրութում: Ավարտել է Կիպրոսի Մելքոնյան վարժարանը: 1971 թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան:

Բարեշնորհ Ռոբերտ սարկավագ Նազարյան. ծնվել է 1948 թվականին Երևանում: Ավարտել է տեղի Մ. Աբեղյանի անվան միջնակարգ դպրոցը 1966 թվականին, իսկ Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը՝ 1971 թվականին: Ընդունվել է Մայր Աթոռ որպես միաբան և հետևում է հոգևոր ճեմարանի լսարանական բաժնի դասընթացներին:

ՍԱՄՎԵԼ ՍԱՐԿԱՎԱԳ ՊԵՏՐՈՍՅԱՆ



ԱՄԱՆՈՐԸ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Դեկտեմբերի 31, կիրակի: Թերևս ո՛չ մի տոն, ո՛չ մի միջոցառում այնքան ջերմություն և այնքան խանդավառ մթնոլորտ չի առաջացրել հոգևոր ճեմարանի պատերից ներս, որքան Ամանորը:

Նոր տարին ստիպում է յուրաքանչյուր ուսանողի մի պահ կանգ առնելու անցյալ տարվա վերջնագծին, մտորելու և ի մի բերելու անցած մեկ տարում իր ձեռք բերած արդյունքները և գալիքի հանդեպ սնուցած հույսերով ու ծրագրերով անվարան քայլելու առաջ:

Ահա թե ինչու այս տարի հոգևոր ճեմարանի հարկի տակ կազմակերպված Ամանորի երեկույթը ճեմարանի ուսանողության և Մայր Աթոռի միաբանության մեջ իր առաջացրած խանդավառությամբ բացառություն չէր կազմում:

Հոգևոր ճեմարանի ուսանողությունը, հաջողությամբ ավարտելով առաջին կիսամյակի քննությունները, հանգիստ խղճով նստել է ամանորյա սեղանի շուրջ՝ հոգևկան մեծ բերկրանքով դիմավորելու Նոր տարին:

Երեկոյան ժամը 8-ին, ներկաների բուռն ծափահարությունների ներքո, ճեմարանի շքեղորեն զարդարված հանդիսությանց ուրահ է մուտք գործում Ամենայն Հայոց Հայրապետը՝ շրջապատված Մայր Աթոռի միաբաններով, օրհնելու համար Ամանորի լիառատ սեղանը և Իր հայրական խրատներն ու հորդորները հաղորդելու ճեմարանի ուսանողությանը:

Հանդիսավոր և ուրախ երեկույթը սկսվում է Վեհափառ Հայրապետի բացման աղոթքով՝ «Հայր մեր»-ով:

Ապա բոլոր ներկաները հոտնկայս ունկընդրում են Հայաստանի պետական հիմնը:

Ուսանողական երգչախմբի կատարած «Ճեմարանական քայլերգ»-ից հետո շնորհավորական հետևյալ խոսքով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի փոխ-տեսուչ տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանը.

«Վեհափառ Տեր,

Գերաշնորհ, հոգեշնորհ և արժանապատիվ հայրեր,

Հարգելի հյուրեր և սիրելի ուսանողներ,

Թույլ տվեք որ ի դիմաց հոգևոր ճեմարանի տեսչության և դասախոսական կազմին՝ երբ կանգնած ենք այս պահուս 1973-ի սեմին՝ մի քանի խորհրդածություններ ընել որոնցմով հրաժեշտ տանք միասնաբար մեկնող տարիին և ողջունենք նորը:

Ամեն անգամ որ տարի մը կբոլորենք ու մտքով և հոգիով կպատրաստվինք թևակոխելու նոր տարվո մը մեջ, մտածումներ և հուզումներ մեզ կհամակեն, ընդհանրապես ուրախ՝ բայց երբեմն նաև տխուր: Հետադարձ ակնարկ մը նետելով անմիջական անցյալին վրա՝ կփորձենք վերլուծել կյանքը զոր ապրեցանք իր ելևէջներով, ու համաձայն շահված լավ կամ դառն վարձատրությանց՝ գծել մեզի համար նոր ուղի մը: Կոգեկոչենք հիշատակը մեզի սիրելի և հարազատ եղած անհետացած դեմքերու և կհիշենք անոնց առաքինությունները: Այսպես օրինակ, չենք կրնար ճիշտ այս պահուն չը-հիշել մեր բոլորին սիրելի՝ հանգուցյալ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը, որ իբրև տեսուչ, դասախոս և լուսարարապետ երկար տարիներ գործեց այս սույն Հաստատության մեջ, բայց անակնկալ կերպով բաժնվեցավ մեզմե առհավետ հազիվ 1972 Նոր տարին տոնած: Այսօր բոլորս ալ միայն քաղցր հուշեր ունինք իրմե: Տերը լուսավորե իր հոգին:

Նոր տարին առիթ մըն է որ և՛ յուրաքանչյուրս անձնապես և՛ ամենքս հավաքապես անցնող տարվան մեր հաշվեփակը կատարելու, և ապա նոր էջ մը սկսելու կենաց գրքին մեջ: Վստահ եմ որ ատոր մեջ պիտի տեսնենք դրական ու ժխտական արդյունքներ կամ երևույթներ: Ու բնական է որ մենք մեզի որպես խթան ունենանք այն ինչ որ դրական է, իսկ ջանանք սրբագրել այն ինչ որ ժխտական եղած է: Այլ խոսքով, պետք է հաշվի ընտինք մեր խղճին և մեր Աստուծոյն հետ: Քեզ, ատելություն և անբարեխիղճ զգացումներ, պետք է փոխվին սիրո զգացումներու և մտածումներու, նոր տարվա հետ նոր տեսակի կյանք մը վերսկսելու հաստատ որոշումով: Մյուս կողմե որպես հավաքականություն՝ պետք է մտածենք և ծրագրենք նոր տարին այնպես մը որ այդ ըլլա ի շահ այս նվիրական Հաստատության որուն ծառայության մեջ կգտնվինք: Այդ Հաստատությունը Հայաստանյայց առաքելական եկեղեցվո հավատքի ամրոց մեր այս սուրբ Էջմիածինն է, որուն սպասավորներուն դարբնոցն է հոգևոր ճեմարանը:

Ահա այդ դարբնոցի շրջանավարտներեն ոմանք անցնող տարի հոկտեմբերին մուտք գործեցին քահանայական ասպարեզ, ոմանք որպես կուսակրոն և ուրիշներ որպես ամուսնացյալ հոգևորականներ, և այսօր նվիրումով փարած են իրենց սուրբ գործին: Իսկ 9 հոգիներ՝ դեռ ուսանող ճեմարանի Բ լսարանի՝ սակայն մղված իրենց սրտերուն մեջ վառած Աստուծո և Հայաստանյայց եկեղեցվո ծառայելու հուրեն՝ Ձերդ Սրբության բարեհաճ կարգադրությամբ՝ ս. Ստեփանոսի տոնին՝ 25 դեկտեմբերին, ձեռնադրվեցան սարկավագ: Այս երևույթը կնշանակեն թե՛ Ձերդ Սրբությունը և թե՛ ճեմարանի տեսչությունն ու դասախոսական կազմը: Գիտենք որ մեր եկեղեցին ամենուրեք կարիքն ունի ընտրյալ, հոգևոր մշակներու: Վստահ ենք որ Ձերդ Սրբության հայրական ջերմ հոգածության և ղեկավարության ներքև՝ և տեսչության ու դասախոսական կազմին անխոնջ և նվիրյալ աշխատանքներով՝ մենք կարդարացնենք հոգևոր ճեմարանի վրա դրված հույսերը:

Անցնող տարվան ընթացքին ճեմարանս ուրախությունը ունեցավ իր համեստ մասնակցությունը բերելու էկումենիկ շարժման իբրև նշան համարվող՝ քույր եկեղեցու բարձրաստիճան հոգևոր պետերու ընդունելության գործին մեջ: Այսպես այս հարկի տակ պատշաճ հանդիսություններով և գեղարվեստական ծրագրերու կատարումով հարգվեցան Նորին Սրբություն Պողոս Զ Պապի ներկայացուցիչ կարդինալ Վիլլբրանդսը, Վրաց Նորին Սրբություն Տ. Դավիթ Ե կաթողիկոսը, ղպտական եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն Տ. Շենուդան, և ապա Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքը: Ու կխորհինք թե անոնք բոլորն ալ լավ տպավորություններով բաժնվեցան հոգևոր ճեմարանի ուսանողութենեն:

Գոհունակությամբ կուզենք հաստատել որ ներկայիս 41 ուսանողներ ունինք որոնք իրենց սրտերը բացած են որպես ակոսներ սիրով ընդունելու համար այստեղ ցանվող ավետարանական և հայրենասիրական ոգիով ատոք սերմեր: Անոնք իրենց նպատակ դրած են դառնալ խոնարհ, բայց փնտրված սպասավորներ հայ եկեղեցվո և հայ ժողովուրդի:

Վեհափառ Տեր, ակնարկ մը կնետենք մեր շուրջը ու ամեն տեղ ուրիշ բան մեր աչքերուն չի զարնվիր՝ բացի այն իրողութենեն որ թե՛ մեր մայր հայրենիքը և թե՛ ս. Էջմիածինը տևական շինարարության մեջ են: Այս պատկերը մեզ կխանդավառե և առավել հույսերով կգինե դեպի լուսավոր ապագան որ մեր սուրբ եկեղեցիին ու ժողովուրդինն է: Այս շինարարությանց մեջ կա թե՛ մեր հայրենի կառավարության և թե՛ Ձերդ Սրբության վարակիչ օրինակը ու մեծ վստակը:

Վեհափառ Տեր, հանուն հոգևոր ճեմարանի տեսչության և պաշտոնեության, կշնորհավորեմ Ձեր Նոր տարին և կմաղթեմ քաջառողջություն և արևշատություն որպեսզի շարունակեք պտղաբեր գործունեությամբ լեցուն Ձեր հովվապետությունը: Թող հավերժ ու անսասան մնա Մայր Աթոռ ս. Էջմիածինը:

Փա՜ռք ու պատի՜վ հավերժ շենցող ու «ս-նեվավառ մեր Մայր Հայաստանին»:

Գ լսարանի սան Հակոբ սրկ. Խաչատրյանը ուսանողների անունից հանդես է գալիս հետևյալ խոսքով.

«Վեհափառ Տեր,

Գերաշնորհ և հոգեշնորհ հայրեր,

Սիրելի ներկաներ,

Դեպի առաջ է արշավում ժամանակի սրընթաց կառքը: Մի քանի ժամ ևս, և 1972 թվականը կանցնի պատմության գիրկը:

Դեռ երեկ էր կարծես, այս սրահում, երբ Վեհափառ Հայրապետը ողջունեց 1972 թվականը՝ մաղթելով արդյունավոր և ուրախ տարի:

Մի պահ մարդու մտքի մեջ շփոթմունք է առաջանում ներկայի, անցյալի և ընդհանրապես ժամանակի հասկացողության մասին, որովհետև չկա ժամանակ անհունության մեջ, այլ միայն հարատև և հարափոխ բնություն: Մարդկային հանճարը ստեղծել է ժամանակը՝ լցնելու համար ան-

հունությունը, և տեղ հատկացրել իրեն այդ անհունության մեջ՝ իմաստավորելու համար իր իսկ կյանքը: Այս նույն հանճարը երկնել է Ամանորի գաղափարը:

Կյանքը վազք է, բայց պետք է նաև դադարը՝ հանգստանալու, թարմանալու և ապա շարունակելու ընթացքը նոր եռանդով: Ամանորը ահա այդ դադարն է: Ամանորի խորհուրդը մեծ է: Սա այն միակ համաշխարհային տոնն է, որի ժամանակ խտրականություն չի դրվում տարբեր ժողովուրդների, կրոնների ու տարբեր բարձրության վրա կանգնած մարդկանց միջև: Ամանորը ուրախությամբ թակում է և՛ հարուստի պալատը, և՛ աղքատի խրճիթը: Ուրախությամբ լցվում է մանուկը, երիտասարդը, ալևորը՝ ամեն մեկը յուրովի ընկալելով այն:

Թվում է, որ մարդիկ այսօր պետք է ափսոսան անվերադարձ գնացող տարվա համար, որը նրանց մի քայլ ևս մոտեցնում է մահվան: Բայց այդպես չէ: Մարդիկ վեր են բարձրանում առօրյա տաղտուկներից, մոռանում իրենց վիշտն ու ցավը, հուզումով հիշում անցյալի օրերը, բայց և ուրախությամբ են պոկում տարվա վերջին օրաթերթիկը. չէ՞ որ նորը հնի շարունակությունն է:

Հոգևոր ճեմարանի ուսանողներս ուսման մեջ մի քայլ ևս առաջ գնացինք, մեր սիրելի դասախոսների ցանած սերմերը արդյունավորեցինք և այժմ նոր ոգով և եռանդով սպասում ենք նոր տարվան: Թող սլանա ժամանակի կառքը արագորեն: Մենք չենք վախենում գալիքից: Մենք պատրաստ ենք դիմագրավելու բոլոր դժվարությունները:

Վեհափառ Տեր, թույլ տվեք շնորհավորել Ձեր Նոր տարին, համբուրել Ձեր սուրբ Աջը, մաղթել Ձեզ երկար տարիների քաջառողջություն՝ հովվելու համար մեր հայ հավատավոր ժողովրդին:

Մեր լավագույն մաղթանքները բոլոր ներկաներին: Թող Տերը իրականացնի Ձեր բարի, գեղեցիկ երազանքներն ու ձգտումները 1973 տարեշրջանին: Թող 1973 թվականը խաղաղության տարի լինի: Մարդիկ իրենց նմաններին հասկանան և սիրեն:

Սլացի՛ր, ժամանակ, դու մարդկային հանճարի ծնունդ...

Կեցցե՛ Ամանորը»:

Ապա Վեհափառ Հայրապետի տված հայրական խրատներով, բարեմաղթություններով և օրհնությամբ էլ փակվում է Ամանորի երեկույթի առաջին բաժինը:

Հանդիսության երկրորդ բաժինը, որ գեղարվեստական մի գեղեցիկ ծրագիր էր, կազմված զուտ ճեմարանի սաների ուժերով, մեծ աշխուժություն է առաջացնում դահլիճում:

Սեղանի օրհնությունից և «Ճաշակեցուք»-ից հետո Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանն առաջին բաժակը առաջարկում է բարձրացնել Մայր Աթոռի շենության և նրա գահակալի՝ հայոց Վեհափառ Հայրապետի արևշատության համար:

Այնուհետև գործադրվում է գեղարվեստական ծրագիրը: Ճեմարանի «Զվարթնոց» նվագախումբը կատարում է «Հայրապետական մաղթանք»-ը, «Անձրև եկավ» ու «Սոնա յար» երգերը: Երգչախումբը մեծ ոգևորությամբ կատարում է «Կենաց երգ»-ը, որից հետո Ավետիք սրկ. Արարաջյանը, ըստ ավանդության, սրամիտ բնորոշող կաղանդչեքներ է բաժանում ներկաներին:

Հակոբ սրկ. Խաչատրյանն արտասանում է Մետաքսեի «Նոր տարվա գիշեր» բանաստեղծությունը, Աղասի Բաբուջյանը՝ «Երազ տեսա»-ն (Ե. Չարենց):

Նվագախումբը կատարում է Կոմիտասի «Ա՜խ, մարալ ջան» երգը, որից հետո Վեհափառ Հայրապետը մաղթում է ներկա եղողներին ուրախ նոր տարի և առաջնորդվում Վեհարան:

Ժամը 12-ն է: Հոգևոր ճեմարանի ուսանողությունը, տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանի և տ. Արսեն ծ. վրդ. Բերբերյանի առաջնորդությամբ, ուղևորվում է Մայր տաճար, ուր 365 անգամ հնչում են զանգերը՝ ի նշան ամացած տարվա հրաժեշտ տալուն:

Եկեղեցում աղոտ կերպով վառվում են մի քանի մոմեր, որով և մթնոլորտը չափազանց խորհրդավոր է դառնում:

Տ. Արսեն ծ. վրդ. Բերբերյանի կարճ քարոզից հետո տղաները խմբովին արտասանում են «Հայր մեր»-ը, երգում «Տէր ողորմեա»-ն ու «Պահապան ամենայնի»-ից հետո հերթով երկյուղածությամբ համբուրում են Իշման ս. սեղանը, կատարում իրենց աղոթքը ու ուխտը, դուրս գալիս եկեղեցուց և ուղղվում դեպի ճեմարան:

Հոգևոր ճեմարանի կամարների տակ նորից սկսվում է խինդն ու ծիծաղը: Ա դասարանի ուսանող Միքայել Թուղլաճյանը արտասանում է Հովհ. Թումանյանի «Լուսավորչի կանթեղը», Մ. Մեծարենցի «Գյուղը»՝ Բ դասարանի ուսանող Դերենիկ Սայանը, իսկ Ա դասարանի ուսանող Հովսեփ Պալըգյանը՝ Կոիլովի «Աղվեսն ու արագիլը»: Ճեմարանի երգչախումբը կատարում է «Սեղանն է առատ», «Հայրենիք» երգերը: Բոլոր ուսանողները երգում են, պարում և ուրախանում:

Տոնախմբությունը հոգևոր ճեմարանում շարունակվում է մինչև ուշ գիշեր...

ԱՎԵՏԻՔ ՍԱՐԿԱՎԱԳ ԱՐԱԲԱՋՅԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունվարի 7-ին, կիրակի.—Է օր Ծննդեան.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Արսեն ծ. վրդ. Բերբերյանը և քարոզում՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» (Ղուկաս. Բ 14) բնաբանով:

Հաղորդ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է հոգեհանգստյան մասնավոր կարգ Մայր տաճարի հանգուցյալ լուսարարապետ սր. Հայկազուն արքեպ. Աբրահամյանի մահվան առաջին տարելիցի առիթով: Հոգեհանգստյան արարողությունից առաջ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանն իր քարոզի մեջ վեր է հանում լուսահոգի տ. Հայկազուն արքեպիսկոպոսի գործունեությունն ու հիշատակը, որպես տիպար հոգևորականի, անձնդիր և նվիրյալ սպասավորի հայ եկեղեցու:

Ս. պատարագից հետո հանգուցյալ սրբազանի շիրմի վրա կատարվում է հոգեհանգիստ ս. Գայանե վանքի միաբանական գերեզմանատանը՝ մասնակցությամբ Մայր Աթոռի միաբանության, դասախոսական կազմի, հոգևոր ճեմարանի ուսանողության և հանգուցյալ սրբազանի հարազատների և բարեկամների:

Արարողությանը նախագահում է տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը:

* * *

Հունվարի 10-ին, չորեքշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանում սկսվում են երկրորդ կիսամյակի դասավանդությունները:

* * *

Հունվարի 12-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Երևանում, հայրապետական վիլլայում, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ:

* * *

Հունվարի 18-ին, շաբաթ.—Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես քհն. Մարությանը:

* * *

Հունվարի 14-ին, կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մասիս աբեղ. Գալստյանը:

Ս. պատարագին ներկա է լինում նաև Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունվարի 21-ին, կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

Ս. պատարագին ներկա է լինում նաև Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունվարի 26-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Երևանում, հայրապետական վիլլայում, գումարվում է Դերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ:

*
* *

Հունվարի 28-ին, կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը: «Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին» (Մատթ. Ե 9) բնաբանով քարոզում է տ. Մասիս աբղ. Գալստյանը:

ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ «ԿՈՄԻՏԱՍ» ԵՐԳՉԱԽՄԲԻ 25-ԱՄՅԱԿԸ

Այս տարի մարտին լրանում է ԱՄՆ-ի հայոց առաջնորդարանի «Կոմիտաս» երգչախմբի գոյության 25-ամյակը:

Վեհափառ Հայրապետը այս տարի հունվարի 2-ին Իր գրած օրհնաբեր կոնդակի մեջ, որը հրատարակվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 6) գեղեցկորեն նշում էր, որ **«Մեր սուրբ տաճարներեն դեպի երկինք բարձրացող երգված խոսքը, ամենահարազատ կերպն է աղոթքի: Աղոթքը՝ կրոնական հույզերով թաթավուն խոսքն է մարդուն առ Աստված»:**

Արդարև, հայ եկեղեցիներում հավատացյալների հոգևոր-կրոնական դաստիարակության մեջ բարերար և ներգործող ազդեցություն է ունենում հոգևոր երգը՝ դառնալով միաժամանակ ներշնչումի և ոգևորության անսպառ աղբյուր:

Հայ հոգևոր երգը պայծառ ու ճշմարիտ արտահայտությունն է մեր սրբազան նախնիների կրոնական զգացմունքների, երգ, որը ոչ միայն զարգացնում է քրիստոնեական աստվածապաշտությունը ու կրոնական եռանդը հավատացյալի հոգում, այլ նաև հանդիսավորություն ու վեհություն հաղորդում եկեղեցական պաշտամունքին. «որք զծորանս Հոգւոյն արբին և ընդ ժամանակս ժամանակս երգեցին զեղանակաւոր երգս շարականաց»:

Եվ ահա հոգևոր այդ երգը, կրոնական այդ վեհ երաժշտությունը, իբր աղոթք ու խոսք, հավատացյալին է մատուցվում միշտ մեր եկեղեցիների երգեցիկ խմբերի միջոցով:

Այդ նվիրական ու հոգևոր առաքելության է կոչված նաև ԱՄՆ-ի հայոց առաջնորդարանի «Կոմիտաս» երգչախումբը, որը հիմնվել է 1948 թվականի մարտի 25-ին, «եկեղեցվո անդամ երաժշտասեր անձերու կողմե»:

«Կոմիտաս» երգչախմբի հիմնադիրներից են եղել Իսահակ Աբրահամյանը, Հովհաննես Հեփիշեն և դոկտ. Արա Պոհգալին:

1958 թվականի մարտի 30-ին առաջնորդարանի երգեցիկ խումբը կոչվել է «Կոմիտաս երգչախումբ»՝ վայելելով նաև 1959 թվականի հուլիսից ԱՄՆ-ի հայոց արևելյան

թեմի թեմական խորհրդի և թեմական առաջնորդի պաշտոնական հովանավորությունը:

«Կոմիտաս» երգչախմբի «Ընդունակն է ծառայել անձնվիրաբար ի պայծառություն Հայց. եկեղեցվո կատարելով պատարագներու և զանազան եկեղեցական արարողություններու ներդաշնակ երգեցողությունը և թեմին ծուխերուն մեջ ստեղծել խանդավառություն դեպի հայ երգն ու երաժշտությունը»:

«Կոմիտաս» երգչախումբը իր գոյության 25 տարիների ընթացքում երգել ու հնչեցրել է «անմահ Կոմիտասի արական խմբի համար ձայնագրած պատարագը, հոգեկան սփոփանք ու գոհունակություն տալով հավատացյալներուն»:

«Կոմիտաս» երգչախումբը ԱՄՆ-ի հայոց զանազան եկեղեցական համայնքներին կատարած իր այցելությունների առիթով կազմակերպել է նաև հոգևոր երաժշտության համերգ, հայ հավատացյալ ժողովրդի կրոնական դաստիարակության և երաժշտական ճաշակի ազնվացման համար:

«Կոմիտաս» երգչախումբը, նշում է Հայոց Հայրապետը Իր վերոհիշյալ կոնդակում, **«արվեստի բարձր մակարդակի հասած խումբ մըն է որ ոչ միայն կմխիթարե մեր հավատացյալ ժողովուրդը աղոթքի Տուներուն մեջ, այլ իր կազմակերպած համերգներով փառք կհյուսե մեր հոգևոր և ազգային երաժշտության, հայ ե այլազգի հասարակության լայն խավերու մեջ Ամերիկա»:**

Հանուն Հայոց Հայրապետի «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է «Կոմիտաս» երգչախմբի 25-ամյակը և բարեմաղթում նորանոր հաջողություններ, որպեսզի նա իրեն հատուկ նվիրումով և բարձր արվեստով հնչեցնի հայ հոգևոր երգն ու շարականը ԱՄՆ-ի մեր սուրբ տաճարների գմբեթների ներքո, ինչպես նաև միջազգային թեմերում՝ ի փառս հայ երաժշտական արվեստի:

«ՏԱԹԵՎ»-Ի ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ*

ԱՄԱՆՈՐ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Ամանորը գրեթե ողջ մարդկության համար սուրբ ու նվիրական մի պահ է դարձել: Մենք ապրում ենք այնպիսի մի դարում, որը արագության, նորանոր հայտնագործությունների, կատաղի վազքի մի դարաշրջան է: Սուրում է կյանքը, խելագար վազում է մարդկությունը, կյանքից ետ չմնալու հուսահատ ձգտումով: Իսկ երբ մոտենում է Ամանորը, մարդկությունը հին տարվա մայրամուտին և նոր տարվա արշալույսին մի պահ կանգ է առնում հանգստանալու, խորհրդածելու, քննելու ե գնահատելու, թե ինչպե՞ս, ի՞նչ արդյունավորությամբ անցավ անցյալ տարին, և ապա կազմելու ապագայի ծրագրերը, որպեսզի նորից սկսի իր կատաղի վազքը անասելի արագությամբ, անլսելի խենթությամբ:

Կյանքի վազքին համընթաց յուրաքանչյուր անհատի առջև ծառանում են բազմաթիվ արգելքներ, որ պետք է հաղթահարվեն, տարածվում են բյուր երազանքներ, որոնց պետք է հասնել, հեռվում նշմարվում են բյուրեղյա երազներ, որ պետք է շոշափել, փորձել իրականություն դարձնել: Որքան էլ որ ճշմարտացի է այն միտքը, թե «երբ փորձում ես երազը իրականություն դարձնել, նա գունաթափվում է, կորցնում իր հմայքը և բախվելով իրականության ապառաժին... թանկագին ապակու նման փշրվում է», այնուամենայնիվ կան երազներ, որոնք այս կամ այն չափով կարող են հաշտվել իրականության հետ: Իսկ այս գործում մեծ նշանակություն ունի անհատի աշխատանքը, ջանասիրությունը, համբերատարությունը, լավատեսությունը: Եվ ժողովրդական առածն իսկ ասում է, որ անկոտրում աշխատանքով մարդ քարից ջուր կքամի:

Ողջ մարդկությունը ցնծությամբ է դիմավորում Նոր տարին: Նա անհուն կայտառություն է զգում իր մեջ, ուժ ստանում, ներշնչվում:

Նոր տարին այն հանգրվանն է, որը հիմնովին վերափոխում է մարդուն, կրկին դարձնում երիտասարդ, կրկին զինում ավյունով, պատանեկան եռանդով, որպեսզի մարդիկ կարողանան իրենց լավագույն երազները իրականություն դարձնել:

Նոր տարին նոր կյանք, նոր ծնունդ է տալիս մարդկանց: Եվ պատահական չէ, որ հայ եկեղեցին գրեթե միասին է տոնում Ամանորը և ս. Ծնունդը՝ մարդկանց մեջ բարի ու ազնիվ ցանկություններ առաջացնող այդ տոները:

Որքա՜ն մեծ է սուրբ Ծննդյան խորհուրդը: Դարեր շարունակ հեթանոս աշխարհը խարխափում էր խավարի մեջ: Կորչում էր անհույս ու աննպատակ մարդկությունը: Եվ Աստված, ազատելու համար մարդկությանը

---

* Սիրով և գոհունակությամբ տեղ ենք տալիս «Էջմիածին» ամսագրի հունվարի համարում հոգևոր ճեմարանի «Տաթև» ուսանողական հանդեսի 1978 թվականի Ամանորի և սուրբ Ծննդյան առթիվ գրած սույն գեղեցիկ խորհրդածություններին և շնորհավորանքներին, որոնք միաժամանակ խոստումնալից վկայությունն են ճեմարանի մեր ուսանողության հոգևոր և իմացական աճին ու առաջընթացին:

այդ խավարից, իր Միածին Որդուն ուղարկեց աշխարհ:

Մութ գիշեր էր, սուրբ գիշեր:

Եվ հանկարծ մի լուսաշող, անշափ լուսաշող աստղ հայտնվեց երկնքում և, պատռելով խավարի քողը, երկինքն ու երկիրը լուսավորեց իր երջանկաբեր ու անպակասելի ճառագայթներով, միաժամանակ ավետելով համայն մարդկության Փրկչի ծնունդը՝ ի լուր աշխարհին:

Քրիստոսն իր աստվածային լույսը բերեց աշխարհ, որով վերածնվեց մարդկությունը, պայծառացավ, գեղեցկացավ: Այդ լույսը գերեց շատերին: Հովիվները իրենց վստահված ոչխարների հոտը թողնելով, լեռներից իջան Բեթլեհեմ, հավատով ճնրադրելու Տիրոջ առջև, մոգերը հեռավոր արևելքից ուղևորվեցին Բեթլեհեմ, երկրպագելու համար Փրկչին և մատուցելու Նրան ոսկին, կնդրուկը, զմուռսը՝ խորհրդանիշները Նրա Թագավորության, Աստվածության և Փրկագործության: Մանուկ Փրկչի առջև միաձուլվեցին գիտնական մոգերի ու պարզ աշխատավոր հովիվների հավատքի տարբեր ըմբռնումները:

Եվ թող այս միաձուլումը իր արձագանքը գտնի նաև մեր հոգիներում: Դա շատ կարևոր է: Գիտություն և հավատք՝ այս երկուսի միացումը մարդկանց առաջնորդում է դեպի կատարելություն: Իսկ Քրիստոսն իր ծնունդով մարդկանց ցույց տվեց կատարելության հասնելու ճանապարհը:

Քրիստոսի լույսը դարերով ոգեշնչել և գաղափարապես զինել ու դաստիարակել է բազում սերունդներ ընդդեմ տգիտության, մեղքի, չարիքի, նախապաշարումների՝ իրենց պայքարում:

Հայ ժողովուրդը, աշխարհի բազմաթիվ այլ ժողովուրդների պես, երկար դարեր քայլեց և այժմ էլ քայլում է այդ լուսաշող ճանապարհով, որը հանգրվանում է արքայության դարպասների առջև:

Եվ արդյո՞ք սահակներն ու մաշտոցները, խորենացիները ու նարեկացիները, շնորհալիները ու լամբրոնացիները, տաթևացիները ու կոմիտասները քրիստոնյա դարերի ծնունդը չէին:

Քրիստոնեական լույսը մարդու առջև երազանքներ է բացում, մարդուն հույս ներշնչում իր ուժերի նկատմամբ, իմաստավորում մարդկային կյանքը: Իսկ առանց երազանքի, հույսի, ի՞նչ է կյանքը: Գուցե մի շրջան, որի ընթացքում մարդը բազմիցս հուսահատության գիրկն է ընկնում և երբեմն նույնիսկ կործանում իր ապագան, որևէ մի իմաստ չգտնելով կյանքի մեջ, կամ աննպատակ քարշ տալիս իր գոյությունը մինչև մահ: Պատճառը՝ հույսի և նպատակի չգոյություն:

Ահա այս խոհերով ու այս խորհրդածություններով, հանուն հոգևոր ճեմարանի ուսանողության, հանուն «Տաթև» ուսանողական հանդեսի խմբագրության, ցանկանում ենք շնորհավորել ձեզ՝ սիրելի ընթերցողներ, Նոր տարվա և ս. Ծննդի առթիվ և ցանկանալ նորանոր հաջողություններ 1973 թվականի ընթացքում և հետագայում:

Շնորհավոր Նոր տարի և սուրբ Ծնունդ:

ՍԱՄՎԵԼ ՍՐԿ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ՍՐԿ. ՔԵՇԻՇՅԱՆ

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏՊԱՐԱՆԻՑ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՆԱՏԻՊ ԳՐՔԵՐԻ*

(1771—1850)

Ա

ՍԱՂՄՈՍ: Էջմիածին, տպ. Ս. Գրիգոր Լուսավորչի, 1771:

Այս մասին «Ջամբռ»-ում ասված է. «Ցորում և ետ տպել նախապէս զՍաղմոսս...»: (Ս. Երևանցի, «Ջամբռ», Վաղարշապատ, 1873 թ., էջ 44):

Մեզ չի հասել այս գիրքը:

Բ

ՍԻՄԷՈՆ ԵՐԵՎԱՆՑԻ: ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ ՈՐ ԿՈՉԻ ԶԲՈՍԱՐԱՆ ՀՈԳԵՒՈՐ: Էջմիածին, տպ. Ս. Գրիգոր Լուսավորչի, 1772. 184 էջ:

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹը

ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ ՈՐ ԿՈՉԻ ԶԲՈՍԱՐԱՆ ՀՈԳԵՒՈՐ:

Արարեալ ի Սիմէօնէ վշտակիր կաթուղիկոսէ Ամենայն Հայոց ի դիմաց Լուսաւորչակրօնից անձանց. ի փառս աստուծոյ:

Եւ տպեցեալ ի սուրբ Էջմիածին Հրամանաւ նոյնոյ Սրբազան Հայրապետին ի նորոգ տպարանի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ:

(Տիտղոսաթերթի մնացյալը պատված է):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՏԵՏՐԱԿԻՍ ԱՂՕԹԻՑ: (էջ 172—182):

Փառք՝ անլռելեաւ գոհաբանութեամբ՝ և յաւիտենական երկրպագութեամբ ամենասրբոյ Երրորդութեան և միոյ Աստուածութեան՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Որոյ առատաձիր ողորմութեամբն և ամենաբարերարի կամեցողութեամբն. և միջնորդութեամբ և օժանդակութեամբ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին և գթաշատի Հօրն մերոյ. հաստատեցաւ տպագրատունս այս նոր ի նորոյ ի սուրբ և յաստուածակերտ Աթոռս Էջմիածնին. ի ձեռն Սրբազանի Հայրապետիս մերոյ՝ Տեառն Սիմէօնի յոգնիմաստ կաթուղիկոսիս ամենայն Հայոց: Ցորում և ի լոյս ածաւ տպագրութեամբ փոքրիկ Գիրքս այս Աղօթից. նր պէս շարահիւսեցեալ ի սոյնոյ Հայրապետէս, ի Հոգևոր մխիթարութիւն ազգիս Հայոց. և ի պարծանս սրբոյ Եկեղեցւոյս Հայաստանեայց: Քանզի ի Հայրապետութեան վերոյ յիշեցելոյ Սրբազանի վեհիս մերոյ, և ի Պատրիարգութեան Սրբոյ Երուսաղէմի և Կոստանդնուպօլսոյ՝ Տեառն Պօղոսի և Տեառն Գրիգորի հանճարունակ և խոհեմափայլ Վարդապետացն, և ի ռմէէ Հայոցս թուոց, սկսաւ մեծ պատերազմ ձնանցի ի մէջ երկուց մեծամեծ թագաւորացցն. և տևեաց մինչև ի թիւս մեր ռմիա յորում եմք այժմ: և յապայն ևս՝ միայն աստուծոյ է գիտելի: Ուստի՝ վրդովեցաւ բոլոր աշխարհ ըստ մեծի մասին. տարածեցաւ մորիկն ըստ ամենայն տեղիս. և ալիքն խռովութեան պաշարեաց զամենեքումբքս: Վասնորոյ՝ բազմացան գողք և ելուզակք. ա-

---

* Մայր Աթոռի տպարանի հաստատման 200-ամյակի առիթով «Էջմիածին» ամսագրի բացառիկից հետո (1972 թ. № ԺԲ), մեր ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում նույն տպարանից հրատարակված 1771—1850 թթ. հնատիպ գրքերի հիշատակարանները:

Սույն հիշատակարաններում կան պատմական արժեքավոր բազում նյութեր, մանավանդ հայ տպագրության և հայ ժողովրդի մշակույթի պատմության վերաբերյալ:

Մինչև այժմ հանգամանորեն և սպառիչ կերպով չի ուսումնասիրվել ինչպես Մայր Աթոռի տպարանի, այնպես էլ Հայաստանում, հայ հողի վրա ստեղծված հայ տպագրության պատմությունը:

Սույն հիշատակարանների հրատարակությունը, կարծում ենք, օգտակար կլինի ոչ միայն մեր ընթերցողներին, այլ նաև 1771—1850 թվականների հայ տպագրության պատմությամբ զբաղվողների հասցեն:

պրստամբք և կողոռտիչք՝ ի շէնս և ի յանշէնս. հատան ճանապարհք յերթևեալ. խափանեցան առ և տուրք վաճառականաց. և հասարակութիւն ստորադրեցոյ՝ և մանաւանդ ազգս հայոց՝ կային ի մէջ մեծի վտանգի և տառապանաց։ Զոր տեսանելով Հայրապետիս մերոյ, մորմոքէր և ցաւէր միշտ։ Բայց զի այլով կերպիւ յօգնութիւն ժամանել էր անկար. վասն որոյ՝ զայս աղօթից գրքոյս ի լոյս էած՝ և ընդ ալեաց ազգիս իւրոյ ի յօգնութիւն և ի փրկութիւն։ մտանել և զբանն Սրբոյն Յակոբու Առաքելոյն որ ասէ. ձեզով և զբանն Սրբոյն Յակոբու Առաքելոյն որ ասէ. Աղօթքն հաւատովք՝ փրկէ զաշխատեալն և յարուցանէ զնա տէր և թողու նմա զմեղս։ Ուրեմն՝ որք ընդունիցիք զնորարոյս ծաղիկս և զնախախայծ պտուղս զայս, նախապէս ներեցէք տմարսութեան սորին՝ որքան առ տպեցումն. նկատելով ի նախածամանն ուտաքեր գոլն զհանդերձելոցն կատարելոց։ քանզի՝ սա պարագայիւքն՝ իրովք՝ յամենայնի նոր է և անփորձ. նոյնպէս և գործավարքն սորին անկիրթք և երպէք չտեսեալ ամենևին։ Եւ ապա յիշեսջիք. յաղօթս ձեր՝ զվերոյ յիշեալ բարեմիտ և օգտաջան Հայրատնտրս մեր՝ հանդերձ հոգևոր և մարմնաւոր ծնողքն՝ և ամենայն ընտանեօքն իւրովք. և խնդրեցէք յաստուծոյ՝ զի տացէ սմա զկեանս երկարս և խաղաղականս՝ ի յլևս պայծառազարդութիւն Սրբոյ Աթոռոյս և ի մխիթարութիւն ազգիս Հայոց։ Քանզի՝ որքան նստեալ է սա յաթոռ Հայրապետական, թէպէտ ունի միշտ և կրէ զլսօգնակերպ վիշտս և զհոգս ըստ բերմանց ալէկոծիալ ժամանակիս, սակայն՝ ոչ երբէք դադարի յայսպիսեաց աթոռազարդ և ազգաշահ գործառութեանց։ Յետ որոյ՝ յիշեսջիք զգործակալ և զտեղապահ Վեհիս մերոյ զՍկրտիչ հանճարաշատ արհի եպիսկոպոսն շնորհաշատ. որ առանց հեղինակի և ուսուցանողի՝ աստուածատուր շնորհօքն իւրովք զամենայն այբուբենական գիրս մեր՝ եթէ զրոլորատառսն և թէ զեւոտրատառսն՝ հանդերձ գլխագրովք և ամենայն պարագայիւքն իւրեանց նոր ի նորոյ փորագրեաց ի պողովատս՝ էհար ի պղնձեայս, և ի լոյս էած ի կապարեայս զգիրս զայս գեղեցկատես՝ զոր տեսանէք։ որ անս աշխատի միշտ ի յայլատեսակ գիրս և յայլս հարկաւոր կիրառելիս ի գործս յայս։ Նաև՝ յիշեսջիք զհոգեծին որդեակն Վեհիս մերոյ զԻսահակ շնորհաշատ վարդապետն գեղարքունեցի. որ աշխատի անճանձիր ի շարադրելն՝ ի սրբագրելն՝ և ի փորձատես լինելն՝ տառից՝ բառից՝ բանից և այլոց որպիսութեանցն գործոյս. և գրեթէ սա կաճօնաւորէ յամենայնի զգործս զայս։ Ցիշեցէք և զտիրացու Ցարութիւն էջմիածնցի, որ քանդակէ զպատկերս՝ զձագագիրս զկանանս՝ զնաղկանիշս. և հարթէ և կանոնաւորէ զկապարեայս և տպէ զտպելիսն։ Այլև յիշեցէք միանգամայն՝ զհարազատ որդիսն և զշնորհաւոր աշակերտսն Վեհիս մերոյ. զՅովսէփ վարդապետն և զնփրեմ սարկաւագն զշարադրսն գրոցս։ Նաև՝ զՍկրտիչ վարդապետն. զՅովանէս աբեղայն. զնեղրսէս սարկաւագն. զյառաջընթաց վարդանն. և զայլ պաշտօնեայսն. որք ամենայնքն բաց ի յատուկ պաշտամանց իւրեանց, պաշտօնատարք եղեն սիրամար ըղձի։ և այս գործոյս։ Եւ մանաւանդ՝ յիշեցէք յաղօթս ձեր զարժանին յիշեցման. զջուղայեցի և ի հինդ ընակեալ Զաքիկեանք լուսահոգի Պարոն Միքայէլի որդի մեծահատատ և բարեսէր Պարոն Գրիգոր Իշխանազունն. զի Քրիստոս հանգուցեալ ծնողսն նորին՝ զՄիքայէլն և զՄանսախաթունն. և զդեռահաս որդեակն իւր ի Տէր հանգուցեալ Միքայէլն. և զայլ ամենայն հին և նոր ընկերս նորա։ Քանզի ի լսելն բարեպաշտիս այսորիկ զհաստատիլն տպագրատունս ի Սուրբ Աթոռոջս, յանձն էառ յօժարութեամբ՝ տալ զամենայն ծախսն սորին ձրիապէս. որպէս զի հաստատուն մնասցէ յաթոռոջս Տպագրատունս այս՝ ի յիշատակ յաւիտենական իւրեանց և իւրայնոցն։ Զորոյ զիշատակն օրհնութեամբ արասցէ Տէր և ի հանոյս իւր ընկալցի՝ աղօթիւք Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ և ամենայն Սրբոց իւրոց։ Զորս և յիշելոյ՝ յիշեալք լինիցիր ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ։ Ամէն։

Գ

ՍԻՄԷՈՆ ԵՐԵՒԱՆՑԻ։ ՏԱՂԱՐԱՆ ՓՈՔՐԻԿ։ Էջմիածին, տպ. Ս. Գրիգոր Լուսավորչի, 1772։

Ծան.—Ձարքհանալյանը որոշակիորեն տարբերում է նախորդ՝ «Գիրք աղօթից որ կոչի Զքօսարան հոգեւոր» և սույն «Տաղարան»-ը, մինչ Գ. Լևոնյանը այս երկուսը դիտում է իբրև մեկ գիրք՝ գրելով. «Առաջին հրատարակությունը, որ լույս է տեսնում 1772 թվին, դա «Զքօսարան հոգեւոր» կամ «Փոքրիկ տաղարան» աղօթագիրքն է, որ ըստ երևույթին, նույնպես անհաջող գործ է համարվել և մի քանի տասնյակ օրինակ ձրի բաժանվելով՝ մնացածը ոչընչացված է»։ Թեոդիկը գրում է. «Էջմիածնի տպարանի Ա գիրքը կը համարուի Տաղարան մը (Սիմէոն կաթուղիկոսի). անարուեստ տիպին համար շատ հնաւանական է, որ չէ հանուած»։ Այս մասին «Ջամբռ»-ում ասված է. «Ցորում և նտ տպել նախապէս զՍաղմոս, գիւրակերտ տաղարանս և զԳիրքն աղօթից Զքօսարան կոչեցեալն, ի փորձել զամենայն պարագայս գործոյն ի ՌՄԻ և ի ՌՄԻԱ թիւսն» (Ս. Երևանցի, «Ջամբռ», Վաղարշապատ, 1873 թ., էջ 44)։

Դ

ՏՕՆԱՑՈՅՑ, ՆԱԽԱՊԷՍ ԿԱՐԳԵԱԼ ԵՒ ՍԱՀՄԱՆԵԱԼ Կ. ՍԱՀԱԿԱՑ ՊԱՐԹԵՒԻ... ԱՐԴԷՆ ՎԵՐՍՏԻՆ ՆՈՐՈԳՄԱՄԲ Ի ՅԵՐԿՈՒՍ ՀԱՏՈՐՍ ԲԱԺԱՆՆԵԱԼ. ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ ՏԵԱՌՆ ՍԻՄԷՈՆԻ ՅՈԳՆԱՋԱՆ ԵՒ ՍՐԲԱՋԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։ Հտ. Ա—Բ։ Էջմիածին, տպ. Ս. Գրիգոր Լուսավորչի, 1774 (—1775). 564 էջ։

Ծան.—Երկու հատորները տպագրվել են մեկ գրքում։

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԸ

Նախապէս կարգեալ և սահմանեալ սրբոյն Սահակայ Պարթևի Հայրապետին հայոց, ըստ աւանդութեան հայաստանեայցս սրբոյ Եկեղեցւոյ։

Արդէն վերստին նորոգմամբ ի յերկուս հատորս բաժանեցեալ. Աշխատասիրութեամբ Տեառն Սիմէօնի Յոգնաջան և Սրբազան Կաթուղիկոսին ամենայն հայոց։

Եւ նորին հրամանաւն տպագրեցեալ ի Սուրբ և

յԱստուածակերտ Աթոռս Էջմիածին. ի Նորահաստատ Տպարանի Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ:

Ցամի Փրկչին մերոյ՝ ռչՌ.

և ի թուին Հայոց՝ ռմԹ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ (էջ 560—564)

Փառք և գոհութիւն անչեղեալ ծայնիւ Ամենասրբոյ Երրորդութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Որոյ առատաձիր շնորհօքն և ողորմութեամբն, օգնականութեամբ բազմերախտի և հոգեծնի Հօրն մերոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, ի լրումն նկեալ կատարեցաւ տպագրումն Նորափայլ գրքոյս՝ որ կոչի Տօնացոյց:

Աշխատասիրութեամբ և հոգաբարութեամբ սրբազնակատար Հայրապետիս մերոյ՝ Տեառն Սիմէօնի յազգաշխատ և գերիմաստ Կաթողիկոսիս ամենայն Հայոց:

Ի վերատեսչութեան սրբոց Տնօրինականաց տեղեանցն Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ Տեառն Պօղոսի քաջաջան վարդապետին վանեցւոյ:

Եւ ի Դիտողութեան արքայական մայրաքաղաքին Կոստանդնուպօլսոյ՝ միանգամայն և ծայրագոյն Նուիրակին սրբոյ Էջմիածնի, և Փոխանորդին վերոյ յիշեալ սրբազան Հայրապետիս մերոյ՝ Տեառն Զաքարիայ համեստափայլ Վարդապետին:

Ի թուոջ Փրկչին մերոյ, .ռչՌ. և ի թուոջն մերում .ռմԹ. յամսեանն Ապրիլի եօթն. ի սուրբ Էջմիածին:

Ուրեմն՝ որք վայելէքդ զսա, նահապետ տուք փառս Աստուծոյ յաջողողին և տնօրինողին ամենայնի: Եւ ապա յիշեսջիք ջերմեռանդ ըղձիւ զվերոյ յիշեալ բարեմիտ և յոգնաջան Հայրապետս մեր՝ հանդերձ հոգեւոր և մարմնաւոր ծնողօքն և համայնիւք իւրայնովքն՝ կենդանեօք և ննջեցելովք: Որ գոլով պաշտեցեալ՝ և որպէս թէ կաշկանդեալ իյամենուստ կուսէ ի յամենատեսակ մրրիկս և ի բազմակերպ ալէկոծութիւնս ըստ չարաշուն բերմանց ժամանակիս, ոչ թուլանայ նրբէք յայսպիսեաց Աթոռաշահ և ազգաօգուտ գործառութեանց. թէպէտ՝ յոգնատաժան աշխատութեամբ և չափազանց դրամատվութեամբ. (որպէս ինքն ի կարճոյ ծանուցեալ է ի վերջին կտակոջն իւրում): Ցետ որոյ՝ յիշեսջիք զհոգեծին որդեակն սրբազանիս մերոյ՝ զԻսահակ եպիսկոպոսն Գեղամացի. որ յամենայնի կարգաւորիչ և տնօրինիչ է գործոյս և գործավարացն սորին անձանձիր աշխատիցմամբ: Ընդ ամին և զտիրացու Ցարութիւն Էջմիածնեցի, որ է վորագրող և քանդակող բոլորից գրոց, պատկերաց, խորանաց, կանոնաց և ծաղկանց. նաև տպող գրքոյս: Յիշեսջիք և զբազմաշխատ գրաշար Գրիգոր արհեստաց սարկաւագն. և զմարգարկ և տպիչ միւս Գրիգորն և զՄանուկն. և զցրուող գրոցն զտիրացու Խաչատուրն: Արժանի է յիշման և Ծոմոթեցի Մկրտիչ արքեպիսկոպոսն. որ իբրու նախկին ոեղիճակ եղև գործոյս այսորիկ՝ որքան առ միտրագրութիւն ի պողոմատեալս:

Նաև՝ յիշեսջիք զհոգեծին և զմարգարտ բնական զաւակն մեծի Հայրապետիս մերոյ՝ զՄկրտիչ արքեպիսկոպոսն. որ յամենայնի որպէս զմայր՝ հոգածու և խնամատար լինի գործավարացն սորին, հոգալով զկարիս և զպիտոյսն յամենայնի:

Ընդ ամին և յիշեսջիք զմարգարտ միաբան և զանձանձիր գրագիրն սրբոյ և մեծի Աթոռոյս զԳրիգորիս վարդապետն Աշտարակցի. որ բաց ի հասարակ պաշտօնէն իւրմէ, քանիցս վերակրկնելով պարտագրեաց զգիրքս զայս մեծաւ աշխատութեամբ ի շաղագրեցմանէ հեղինակին:

Ընդ սորին և զայլ մարգարտ ծառայս և սպասաւորս և զձեռնասուն աշակերտս մեծի Հայրապետիս յիշեսջիք զարժանին յիշեցման. զծնունդն օրհնութեան և զտուն՝ բարեբեր. զվառեալն աստուածային սիրով և զսիրահարեցեալն յամենայնի ի յոգուս և ի պայծառութիւն ազգիս և եկեղեցեացս մերոց. զմեծահաւատ իշխանազուն իշխան Գրիգոր Աղայն Ջուղայեցի ի Հինդ քնակեալ. որ ըստ օրհնեալ ազգատոհմութեան Խոջաջանեան Զաքիկենց կոչի:

Ընդ ամին յիշեսջիք և զնորին օրհնեալ և ի քրիստոս հանգուցեալ օրհնաժառանգ ծնողսն, զՄիքայէլն և զՄամախաթունն. զկենակիցն իւր Մատլինայն. և զլեղաթառամ որդին իւր Միքայէլն. և զքորսն իւր զԱնամարիայն և զՋիպիտայն. և զՀօրեղբայրսն՝ զԵղիազարն, զՍաֆարն և զԱղէքսանդրն. զպապն իւր Գրիգորն, և զկենակիցն նորին Թագուհին, զՀօրաքոյրն Ջիժազատայն. և զմեծ պապն Ցակոբջան. և զՀօրեղբօր դստերսն՝ Բէկզատայն և Գիւլնաբաթն և զայլ ամենայն հին և նոր ննջեցեալսն նորին:

Զանգի՝ գործս այս՝ բոլորովին պարագայիւքն և բնաւիւք ծախիւքն՝ վերոյ յիշեալ բարեպաշտի արդար և տեառնստուր արդեամբն յառաջեալ ձրիապէս: Որ և՝ սիրավառ ջանիւք միշտ հետեւի և զայլս քան զայլ առաւել արժանագրելի յիշատակս յառաջացուցանել ի սուրբ Աթոռոջս, ի յիշատակ յաւիտենական ի՛նքեանն և իւրայնոցն: Որոյ զիտորութիւնս տէր կատարեսցէ, և զուխտս նորին ի վառս իւր ընկալցի զանշնչատակս նորին օրհնութեամբ պահեսցէ. և զփոխարէնն հատուսցէ բազմապատկապէս իւրեանն և իւրայնոցն՝ աստ և ի հոսնդերձելումն: Եւ դուք յիշողք՝ յիշիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ: Ամէն:

Ե

ԿԱՐԳ ԹԱՂՄԱՆ ԿԱՐԳԱՒՈՐԱՑ: Խմբագիր և հրատարակիչ Սիմեոն Երևանցի: Էջմիածին, տպ. Ս. Գրիգոր Լուսավորչի, 1777. 160 էջ:

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԸ

Կարգ թաղման կարգաւորաց. Այսինքն, Հայրապետաց, Եպիսկոպոսաց՝ և Քահանայից:

Զոր ի բուն մաշտոցէն մերմէ առեալ՝ սրբագրեալ և կարգաւորեալ տեառն Սիմէօնի գերերջանիկ և գիտնական Կաթողիկոսի ամենայն Հայոց, ետ տպագրել մեծաւ զգուշութեամբ, ինքն իսկ լինելով վերահասու:

Ի փառս աստուծոյ, և ի հեշտութիւն և ի դիւրութիւն կատարողաց սոյնոյ սրբազան կարգիս. զոր յառաջ կարի դժուարութեամբ և տժգանմամբ առնէին:

Ի թուոջ փրկչին ռչՌէ

և ի մերում թուոջ ռմԿ

Ի սուրբ Աթոռս Էջմիածին

Ի տպարանի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՏՊՈՂԱՑ (էջ 159—160)

Շնորհիւ և ողորմութեամբն Աստուծոյ աւարտեցաւ տպագրութիւն գրոցս ի ոմիէ թուոջ մերում, և յամսեանն փետրվարի:

Այլ՝ որք վպեղէք զայն, յիշեսջիք ի Քրիստոս որբազմերախտ Հայրապետս մեր՝ և զյոգնաջան Հովուապետս ամենայն Հայոց՝ զՏէր Սիմէոն Կաթուղիկոս. որ բարեյարմար կարգաւորութեամբ ուղղեաց զկանոն Քահանայութեանս՝ և զմեծ մաշտոցն իսկ բոլորովիր. զոր տպագրելոց եմք յետոյ տեառն շնորհիւ:

Յիշեսջիք նաև զհոգացօղն բոլոր ծախուց տպարանին՝ զՋուղայեցի Խոջիշանենց ի տէր հանգուցեալ մեծահաւատ և բարեջան Գրիգոր Աղայն Ղաքիկենց կոչեցեալ. և զհայրն իւր Միքայէլ Աղայն. և զմայրն իւր Մամախաթունն. և զվաղաթառամ որդին իւր զՄիքայէլն. և զքորսն իւր՝ զԱնամարիայն՝ և զՋիպիտայն. և զայլ ամենայն ազգային նորին:

Այլև յիշեսջիք զԻսահակ Եպիսկոպոսն Գեղամացի, որ վերակացու և կարգաւորիչ է գործարանին:

Նաև զհամայն աշխատաւորս սորին. այսինքն՝ զվարդապետ Ցարութիւն, զԳրաշար Գրիգոր Սարկաւագն. և զԳրիգոր՝ Մանուկ և Խաչատուր մշակսն. և զայլս ամենայնսա՝ որք մասամբ ինչ աշխատեցան ի սոյն:

Եւ դուք յիշեալ լիջիք յողորմութիւնս և ի գթութիւնս մարդասիրին Քրիստոսի: Ամէն:

Զ

ՍԻՄԷՈՆ ԵՐԵՒԱՆՑԻ: ՏԱՂԱՐԱՆ ՓՈՔՐԻԿ: Էջմիածին, տպ. Ս. Գրիգոր Լուսավորչի, 1777:

Տաճ.—Այս գրքից մեզ որևէ օրինակ չի հասել: Այս գրքի մասին վկայում են Հ. Գարեգին Զարբհանալյանը («Հայկական մատենագիտութիւն», Վենետիկ, 1888, էջ 650) և Գարեգին Լևոնյանը («Հայ գիրը և տպագրության արվեստը», Երևան, Հայպետհրատ, 1958, էջ 152):

Է

ՍԻՄԷՈՆ ԵՐԵՒԱՆՑԻ: ԳԻՐՔ ՈՐ ԿՈՉԻ ՊԱՐՏԱՎՃԱՐ: Էջմիածին, տպ. Ս. Գրիգոր Լուսավորչի, 1779 (—1789), 383 եջ:

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԸ

Գիրք որ կոչի պարտավճար

Արարեալ Տեառն Սիմէօնի վշտակօծ և ցաւակիր Կաթուղիկոսի, մեծագործ և յոգներախտ Հայրապետի ամենայն Հայոց՝ Երևանեցւոյ. ի Քրիստոսահիմն սուրբ Աթոռս Էջմիածին:

Ի հաստատութիւն ճշմարտութեան միաբնադաւան հաւատոյ սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց. և ի յորդորումն ալգիս մերոյ՝ ի Նոյնն մնալ անշեղապէս:

Եւ ի դատապարտութիւն ի մէջ հետեալ ուլաքօղ չիք եպիսկոպոսաց և սուտ կարգաւորաց:

Որ և տպեցաւ նորին հրամանաւն, ի Սուրբ Աթոռս Էջմիածին.

Ի տպարանի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ:

Ի թուոջ փրկչին ռչԹ (1779)

Եւ ի մերում թուոջ ոմիր

Առ յեզր գրոցս, համառօտ իմն ազդարարութիւն յաղագս ո՞րպիսաբար տպեցման սորին. և միշտակարաւ տպեցուցչաց և տպողացն: (էջ 877—888):

Օրհնութիւն՝ գովութիւն և բարեբանութիւն, հանդերձ վաղելչական փառատրութեամբ և ճշմարիտ երկրպագութեամբ այժմ և յանվախճան յաւիտեանս մատուցի Եռալուսեան Միութեան և ամենահանամ Աստուածութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Որոյ հաստատաւալ ողորմութեամբ և ամենազօր ձեռնտուութեամբն՝ և նպաստութեամբ արժանընդունակ մաղթանաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, ի լրումն ժամանեալ վճարեցաւ տպեցումն օգտակար և հոգեկեցոյց գրոցս, բարեյարմարապէս անուանեցելոյ Պարտավճար:

Եւ գիտելի է. Զի յորիսնօղն տառիս Տէր Սիմէօն յոգնաջան Կաթուղիկոսն ի ոմիր թուոջն մերում աւարտեաց զայս և պարզագրեցեալ ետ ի տպագրութիւն, որպէս և ի սկզբան Գրքոյս ի դրանն նշանակեցեալ գոյ: Սակայն ոչ յաջողեցաւ նմա յայնմ ժամանակի բոլորապէս տպեցուցանել: Քանզի՝ յետ առաջնոյ հատորին տպեցման, յաղագս բազմութեան մեղաց մերոց զարթեաւ բարկութիւն մեծ ի Տեառնէ ի վերա երկրիս Երևանու: Զի բարեպաշտ Արքայն վրաց ունելով զխռովութիւն ընդ իշխողին երկրիս սակս խոչընդակն ընթացից սորին առ նա՝ յարուցեալ եկն ի վերա սորա զօրօք բազմօք: Եւ սա ամրացաւ ի բերդն իւր: Իսկ յետ յոլովից աւուրց՝ (յորս թէ զի՞նչ իրք անցին, զայնց չէ աստէն երկարելի). իբրև հաշտութեան և խաղաղութեան ոչ եղև հնար, (ընդ որս թէպէտ և կարի աշխատեցաւ բարեսէր Հայրապետն մեր). ապա ի վերադառնալ աստի Արքային, զի բերդէն արտաքոյ գտանեցեալ երկրականսն, զհայս և զտաճիկս տարաւ ի կալուած իւր, ի նուաճումն բռնակալի տեղւոյս. թողով զշինութիւն միայն ի սուրբ Աթոռոջս՝ և ի գեղջս, որ մօտ առ սա, ի պատիւ սորին: (թեև յետ երկար միջոցաց ի հաշտութեան դարձոյց զտարագրեալսն ըստ մեծի մասին): Իսկ յայնց եղելութեանց՝ սրբալաւ Հայրապետն մեր բազումս վշտացաւ. նա առաւել ընդ բազմակերպ վնասակրութիւնսն սրբոյ Աթոռոյս: Եւ քաց յայնցանէ ի բերդարգելիցն նա՝ մինչ ելին, զանպատմելիս ընկալաւ զնեղութիւնս և զցաւս: Որ և ոչ կարացեալ տանիլ դառնակսկին աղէտիցն, և մանաւանդ՝ ըստ բարեխնամ տեսչութեան վերին կոչողին՝ օրհասն մահու ևս ժամանեալ առ բարուք ծերութիւնն, անկաւ ի ցաւագին հիւանդութիւնս. և ի ոմիր թուոյ նոյեմբերեէն մինչև ի ոմիթ թուոյ յուլիսի իզ եկաց այնու հիւանդութեամբ: Եւ իբրև ետես զինքն մերձեալ ի հրաւիրումն մեծի Կոչնատեառն, թէպէտ և կասեցաւ լիւրոքն հենչմանէ զոր ուներ առ տեսութիւն կատարման տպեցման գրոցս, սակայն ըստ կատարելութեանն իւրում և ևս հոգացեալ յաղագս այսորիկ, պատուիրեաց հոգեձին որդւոց և աշակերտաց իւրոց, զկնի վախճանի իւրոյ զմնացորդն գրոցս տպեցուցանել. չտալով զտեղի ասութեան բանին թէ՝ սակաւ՝ և ոչ կարաց կատարել: Իսկ ի յուլիսի իզ, յաւուր վարդաւառի կիւրակէին փոխեցաւ ի կենաց աստի առ կրկին կենսատուն և յոյսն ամենիսցս Քրիստոս,

բարի և երջանիկ մահուամբ մեծավաստակ Հայրապետն մեր Տէր Սիմէոն սրբասնեալ Կաթուղիկոսն, թողլով զհոգևոր զաւակունս և զսիրելիս իւր ի տրտմութեան։ Որոյ զհոգին յուսաւորեսցէ Տէր և հանգուսցէ յարքայութեան իւրում ընդ հաճոյս և ընդ սիրելիս անուան իւրոյ. դասելով ընդ Հայրապետացն սրբազանից։ Եւ զկնի. տնօրինմամբն Աստուծոյ յաջորդեաց զԱթոռս սուրբ Տէր Ղուկաս մաքրակենցաղ և արժանապատիւ Կաթուղիկոսն։ Բայց զի էր սա ի յոգնաւոյլ և ի զանազան հոգս և ի ցաւս առ պահանջելոյ հարկի բարձրագունի Աստիճանին, վասնորոյ դժուարահաս լինելով ի հոգաբարձութիւն տպեցման մնացորդի գրոցս, և ևս եղև յամենեցումն գործոյս։ Իսկ առ արգեանս սակաւիկ մի թեթևացեալ սորա ի ճանրութենէն զբաղանացն՝ յիշատակեցաւ հոգեազդ պատուիրան երջանիկ Հայրապետին հանգուցելոյ, զոր աւանդեաց յաղագս գրոցս, ոչ թողուլ թերակատար։ Եւ սրբազան վեհապետս մեր հրամայեաց թարգ այլ ևս յապաղման տպեցուցանել։ Որն ահա տպագրեցաւ բազմաւ զգուշութեամբ և հարատատորէն, և կատարեցաւ հոգեշահ Մատեանս ի փառս Աստուծոյ, և ի յոգնութիւն Ուղղափառագունի Եկեղեցոյս մերոյ սրբոյ։

Յերրորդում ամի Հայրապետութեան Տեառն Ղուկասու Աստուածընտիր Կաթուղիկոսիս ամենայն Հայոց. ի Լուսակազմ Գահս Տերունեան ի սուրբ Էջմիածին։

Եւ ի Պատրիարգութեան սրբոյ Երուսաղէմի և Կոստանդնուպօլսոյ, տեառն Յովակիմայ և տեառն Զաքարիայ Աստուածամիտ վարդապետացն և արհի Եպիսկոպոսացն։

Ի թուոջ փրկչին ռչծգ, և ի մերում թուականիս ռմլբ, և յամսեանն Փետրվարի։

Եւ արդ՝ խնդրի ի վայելողացդ յայսմանէ սեղանոյ ախորժաճաշակ յարդարեցելոյ, յիշատակել ի յարժանահայց յաղօթս ձեր զհոգելոյս Հայրապետն մեր զՏէր Սիմէօն սրբազան Կաթուղիկոսն հանդերձ հոգեւոր և մարմնաւոր ծնողօքն և բոլոր իւրայնովքն։ Յետ որոյ՝ յիշեսջիք զհոգեծին որդին Նոյնոյ Հայրապետին՝ զԻսահակ արք Եպիսկոպոսն գեղամացի՝ որ կարգաւորիչ և կառավարիչ էր գործոյս և գործավարաց սորին։ Որ և մանաւանդապէս ի տպեցումն և ի սրբագրութիւն սոյնոյ գրքոյս, աշխատեցաւ ընդ ամին և զտիրացու Յարութիւն Էջմիածնեցի, որ է փորագրող և քանդակող գրոց՝ պատկերաց՝ խորանաց՝ կանոնաց և այլոց ծաղկանշանից. հանդերձ աշակերտելովն իւրով, Խաչատուր դպրիւն։

Յիշեսջիք ընդ նոսին և զԳրիգոր աշխարհակիր վարդապետն, և զաշակերտն իւր զՄաղաքիայն, զարդոնն և զցրուագոնն գրոցս։ Ընդ որս և զմրազարկն և զտպիչ Գրիգորն։

Արժանի է յիշման և բնին հարազատ սպասաւորն և օրհնածին զաւակն հանգուցելոյ Հայրապետին՝ Մկրտիչ արք Եպիսկոպոսն, որ յամենայնի խնամածու լինէր գործավարացն սորին, հոգալով զպիտոյսն։

Ապա՝ յիշեսջիք և զյետնորդ պաշտօնեայն յիշեցելոց երկուց սրբազան Վեհապետաց՝ զԱնանիա սարկաւագն. որ ընդ հասարակականի ծառայութեան իւրոյ՝ արտագրեաց զսոյն գիրք կարի զգուշութեամբ ի շարագրեցմանէ ոնդինակին, ի դիրութիւն գրաշարացն։

Իսկ և՝ յիշեսջիք զբարեպաշտ իշխանազուն իշխան Գրիգոր աղայն Զուղայեցի, ըստ բարի ազգատոհմութեանն խոջայանեան Զակիկենց կոչեցեալ. որ ի Հինդ բնակիւր՝ և այժմ փոխեցեալ է առ Քրիստոս։ Որում նոյն ինքն Տէր ողորմեսցի և հանգուսցէ զնա ընդ սուրբս իւր ի վայելում զմայլական տեսութեան իւրոյ. հանդերձ հանգուցեալ ծնողօք նորին Միքայելիւն և Մամախաթունիւն. և այլ համայն ննջեցելովքն. և կենդանի քնրբքն իւրով Զիպիտային։ Քանզի՝ նորին արդար գոյիւքն է հաստատեցեալ տպարանս բոլոր պարագայիւքն։

Եւ վերջապէս՝ յիշեսջիք զարժանին յիշեցման և զմաւանգաւորն օրհնութեան, զսիրոնն և զբանաց ոգտից և պայծառութեանց ազգիս մերոյ, զբարեպաշտ և իմաստնախոհ Պարոն Խաչիկ Աղայն Զուղայեցի ի Հինդ բնակեալ, որդին մահտեսի Էմինիաքի գերահամբաւ իշխանին առ Տէր փոխեցելոյ. հանդերձ ծընողօքն իւրովք։ Ընդ որս և զկենակիցն իւր զբարեպաշտուհի Մարիամ խանումն և զբարեբողոքոջ որդին իւրեանց զՄովսէս Աղազատայն։ Եւ զհնգեսին եղբարսն իւր. զՅովհան Աղայն կենդանի՝ և զմահտեսի Յարութիւն, զՄէլիքնազ, զՅովհաննէս և զՄովսէս Աղայսն ննջեցեալս ի Քրիստոս. և զմիակ քոյրն իւրեանց կենդանի զօրհնեալ Խաթունն։ Ընդ որս նաև՝ զբարեմտոհմ որդին աւագ եղբօրն իւրեանց մահտեսի Յարութիւնին յիշեցելոյ՝ զՍտեփաննոս Աղայն որ ի քաստայ։ Եւ զայլ ամենայն իւրայինսն՝ զհին և զնոր ննջեցեալսն, և զկենդանիսն։ Վասնզի՝ Գիրքս այս՝ վերոյ յիշեալ Քրիստոսասէր Պարոն Խաչիկ ազնիւ Իշխանի արդարավաստակ արդեամբքն տպագրեցեալ ի լոյս ածաւ։ Որ և ի Տեառնապարգև գոյիցն զառատանուէր արդիւնս շնորհեսցէ, սիրավառ բաղձանօք հետևի զայլ ևս քան զայս մեծածախ՝ ազգազուտ և հոգեշահ գրեանս տպեցուցանել ի սուրբ Աթոռոջս, ի յիշատակ ինքեան և իւրայնոցն։ Որոյ զխորհուրդն Տէր կատարեսցէ. զյիշատակս նորին օրհնութեամբ արասցէ. և զփոխարէնն առաւելապատկօրէն հատուսցէ իւրեան և իւրայնոցն՝ աստ և ի հանդերձելումն։ Եւ որք յիշէքդ՝ յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ։ որ է օրհնեալ յաւիտեանս։ Ամէն։

Ը

ԳԻՐՔ ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆՑ ՍՐԲՈՅ ԵԿԵՂԵՑՒՈՅՍ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵՒ ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՍԱՂՄՈՍԱՑՆ ԴԱՒԹԻ ՄԱՐԳԱՐԷԻՆ։ Բ անվանաթերթ. ԺԱՄԱԳԻՐՔ ԱՏԵՆԻ ՅՈՐՈՒՄ ՊԱՐՈՆԱԿԻՆ ԵՐԵՔ ԳԻՐՔ։ Էջմիածին, տպ. Ս. Գրիգոր Լուսավորչի, 1785, 428 էջ։

Ա. ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԸ

Գիրք ժամակարգութեանց սրբոյ Եկեղեցւոյս Հայաստանեայց, և Կարգաւորութեան Սաղմոսացն Դաւթի Մարգարէին։

Արարեալ Սրբոց Թարգմանչաց և Հայրապետացն մերոց. ի փառս Ամենասրբոյ Երրորդութեան Հօր և

Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Որ է օրհնեալ յաւիտեան։

Ամէն։

Ծան.—Գրվածքի շուրջ բոլորը պատկերված են Քրիստոսի Հարության (կամ Համբարձման, խաչը ձեռքին), Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների, Ս. Սահակ Պարթևի և Ս. Մեսրոպ Մաշտոցի և այլ սրբերի զանազան նկարներ, որոնց տակը՝ էջի վերջում, գրված է «Ջեռամբ Ցարութիւնի»։

Բ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ ԺԱՄԱԳԻՐՔ ԱՏԵՆԻ։

Յորում Պարունակին երեք գիրք սրբոյ Եկեղեցւոյս մերոյ ժամակարգութեանցն։

Նախ՝ Գիրք Սաղմոսացն Դաւթի՝ հարիւր և յիսուն Ալէլուիցն. յոլ կանոնս բաժանեալ և յեթնեկան գուրբղայս։ Զի ութերորդին յայլոց են։

Երկրորդ՝ ժամագիրքն. Յորում են կարգաւորութիւնք հաստատեալք Աղօթից Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ։ Արարեալ մեծին Իսահակայ պարթևի հայոց Հայրապետի. և Մեսրոպայ Վարդապետի. և Գիւտայ. և Յովհաննու Մանդակունւոյ։

Երրորդ՝ Տօնացոյցն Հայոց. որ ցուցանէ զպատշաճ երգեցմունս և զընթերցուածս տօնից Տէրունականաց, և Սրբոցն. և Պահոց։ Ըստ արարողութեան Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ։ Արարեալ նոյնոյ Իսահակայ մեծի՝ հայոց Հայրապետի։

Եւ ապա համառօտ խրատ արարողութեանց սուրբ Եկեղեցւոյս հայոց ժամակարգութեանցն՝ թէ որն յոր դասէ պարտի ասիլ. և այլն։

Վերստին տպեցեալ ի յԱստուածաներտ և ի Լուսակառոյց Աթոռս Սուրբ ԷՋՄԻԱԾԻՆ։

Ի Հայրապետութեան, և հրամանաւ իսկ Տեառն Ղուկասու Սրբազան և վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց։

Եւ ի Պատրիարգութեան սրբոյ Երուսաղէմի փրկչական տնօրինական Տեղեացն և մեծի մայրաքաղաքին Կոստանդնուպօլսոյ՝ Տեառն Յովակիմայ և Տեառն Զաքարիայ Աստուածիմաստ վարդապետացն։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ՄԵՐՈՑ։

Տիտղոսաթերթ հիշեցնող մի այլ էջ, էջ 99

ժամագիրք որ է կարգաւորութիւն հաստատեալ Աղօթից և ժամերգութեան Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ։

Արարեալ և հաստատեալ սրբոց Թարգմանչաց և Հայրապետացն մերոց, Իսահակայ և Մեսրոպայ Գիւտայ և Յովհաննու մանդակունւոյ. և այլոց հոգելից Վարդապետացն սրբոց. ի փառս Ամենասուրբ Երրորդութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. օրհնեցեալոյն յաւիտեանս յաւիտենից։

Ծան.—Նույնպես նկարազարդ՝ վերոհիշյալ նույն նկարները։

Տիտղոսաթերթ Տոնացուցի էջ 248

Տօնացոյց։ Առաջին հատոր.

Որ ունի զամենայն Տօնս և զՊահս Սրբոյ Եկեղեցւոյս Հայաստանեայց հանդերձ պատճէիւքն իւրեանց։ Եւ ցուցանէ զԱնշարժսն և զՇարժականսն՝ ըստ կանոնի Առաջնոյ Տօնացուցի մերոյ։

Ոգեկոչ Հոգիդ Սուրբ Լաստուած, և զանխնայլս մեր խաղաղութեամբ հաստս յաւարտս։

Ցիշատակարան տպեցման և Տպողաց սուրբ Գրոցս (էջ 425—426)

Գոհութիւն և փառաստրութիւն, պաշտօն և պատիւ, երկրպագութիւն և բարեբանութիւն անվախճան յաւիտենից վերամատուցի Ամենասրբոյ Երրորդութեանն և Միասնականի Աստուածութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ՝ Արարչին Տեառն բնաւից. բնակելոյն ի բարձունս, և բարեգարդողին երկնի և երկրի. Տէրն տերանց և Աստուծոյն Աստուծոց՝ Մեծին միայնոյ և առատաբաշխի։ Որ ըստ հաճարձակալ ողորմութեան իւրում զլիաւիր բարիս անչափ յաճախութեամբ հեղու յաւէտ յարարածս իւր։ Եւ մանաւանդ յատկական խնամովք անճառ սիրոյ իւրոյ ակնարկեալ յԵկեղեցի իւր սուրբ՝ լնու զպիտոյսն հարկաւորս ամենակարող զօրութեամբ իւրով, առաւել քան զոր խնդրեմք և իմանամք. ըստ գոհաբանութեան սրբազան Առաքելոյն Պօղոսի։ Ըստ որում և նարդեենս բարեխնամ մատակարարութեամբ առատաձեռնեալ ի մեզ յամենաբաւ շնորհաց իւրոց, զօրացոյց զտկարութիւն մեզ, ի տպել վերստին զԱտենի ժամագիրքս և յաճախել. ի հարկաւոր պիտանութիւն ժամակարգութեանց սրբոյ Եկեղեցւոյս Հայաստանեայց։ Զոր և ըստ յոգնաթախանձ խնդրոյ Քրիստոսասէր և բարեջան Ջուդայեցի ի Տեր հանգուցեալ Պօղոսեան մահտեսի Խաչիկ Աղային տպագրեցաք. նորակերտ գրովք, և տոկուն թղթովք. խորհրդաւոր պատկերօք, և նրբաքանդակ խորանօք՝ կանոնօք և ծաղկմամբք։ Որում գործառնութեան թէպէտ և յոլովք ծախսրդութիւնք ընդդիմակալեալք յամենեցուցին, այսինքն՝ պակասութիւնք հարկաւոր պիտոյիցն ըստ սմին, զոր ի յաղքատ վայրոջս ոչ գտանելով, ի Հեռուսս դրժուարութեամբ առ ձեռն բերեմք։ Նաև խառնակութիւնք կողմանցս յանտիրութենէ, որք և զսուրբ Աթոռս և մեզ խռովեն և անհանգիստ առնեն։ Որպէս և այժմոյս յառաջշարժութիւն կովկասակաանց խստասիրաց ի յաւերագործութիւն և յարիւնահեղութիւն՝ այնպէս վրդովեաց զմեզ, մինչև անդոյս լինիլ մեզ և ի կենաց, ըստ գրեցելոյն։ և այլ ևս զանազան պատահմունք խափանարարք, որք ի գրելն երկարին լոյժ։ Սակայն՝ ևևս օժանդակութեամբ ամենազօր սուրբ Հոգւոյն՝ որ յաջողէ զամենայն յամենայնի՝ ըստ Առաքելական բանի, և ձեռնտուութեամբ Աստուածահաճոյ մաղթանաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, ահա զտպեցումն սուրբ Գրոցս բազում զգուշութեամբ աւարտեցաք ի թուականութեանս մերում ռվլդ, և ի Դեկտեմբերի ամսեանս վերջնում։ Արդ՝ որք օրհնաբանէք սովաւ զԱստուած, և աղօթէք առ բարեգութիւն Նորին, յիշեսջիք ի բարձանահայց մաղթանս ձեր զհաստատողն Տպարանիս, զառն Քրիստոս փոխեցեալ զՏէր Սիմէօն մեծաւաստակ Կաթուղիկոսն. զոր հանգուսցէ Տեր յարքայութեան իւրում ի լոյս երեսաց իւրոց։

Ընդ նմին յիշեսջիք և զնաջորդ Գահակալս նորին զՏէր Ղուկաս Սրբազան և արիաջան Կաթուղիկոսս ամենայն Հայոց՝ հանդերձ հոգևոր և մարմնաւոր ծնո-

զորն իւրովք, և համայն իսկ իւրայնովքն. որոյ օգտակար հրամանաւն Ի հոգարարձութեամբն տպեցաւ գիրքս:

Ապա՝ և զմոգնին որդեկոչ Սորին, զԹադէոս նորընծայ վարդապետն, զսրբագրողն փորձից կսպարեաց գրոցն շարուածոց. ընդ համայն մտերիմ Պաշտօնէից Տեառնս մերոյ. որք ըստ իւրաքանչիւր կարեաց հաղորդք եղեն ի սոյն սպասաւորութիւն:

Յիշեսջիք մանաւանդ և զտուողն ծախուց հաստատեցման Տպարանիս բոլոր պարագայիքն, զՀուղայեցի ի Քրիստոս հանգուցեալ Խոջաջանեան Ջակիկենց Ալնուազուն Գրիգոր Աղայն. որոյ զմոգին Տերն լուսաւորեսցէ: Ընդ որում և զմանգուցեալ ծնողսն նորին զՄիքայէլն և զՄամախաթունն. և զայլ հին և նոր Ենջենեալսն. և զկենդանի քոյրն նորա զբարեպաշտուհի Զիպիտայն:

Եւս առաւել յիշեսջիք զվերոյգրեալ Ջուղայեցի բարեպաշտ և մեծահաւատ մահտեսի Խաչիկ Աղայն. և զհանգուցեալսն նորա՝ զհայրն իւր Պողոսն, և զմայրն իւր Մէհրբանն: Իսկ և զկենդանի կենակիցն իւր Փերիճայն. և զդուստրն Յոդիտայն. ե զայլ ամենայն ազգայինսն իւր՝ զկենդանիս և զննջեցեալս: Վասն զի՝ նոյն օրինաժառանգ անձն եղև պատճառ տպեցման սուրբ Դրոցս. տալով զնախսն ի յԱստուածապարգև գոյից իւրոյ առատապէս, առ ի ստանալ զԳիրքս՝ բարի յիշատակ իւրեանց և իւրայնոցն: Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի. և փոխանակ բարեջանութեանց իւրոց և հոգնոր տրոցն հատուսցէ նմա Տէր զվարձս բարիս և բալմասալոիկս յայսմ աշխարհիս և ի հանդերձելումն:

Նաև՝ յիշեսջիք զկերտողն նորայօրէն գրոցս, և պատկերաց, և խորանաց և համայն ծաղկանշանից, զվարպետ Յարութիւն Վաղարշապատցի՝ հանդերձ իւր աշակերտ տիրացու Խաչատուրիւն: Ընդ որս և զգրաշար տիրացու Մաղաքիայն. և զԱղէքսանդր սարկաւագն: Եւս զգրաձոյլ և զմրազարկ Գէորգն և Աղէքսանդրն. և զայլ աշխատաւորս գործարանիս:

Եւ յիշողք ընդ յիշելոցս յիշեալ յիշիք ի բարերարէն Աստուծոյ, և յանձնեցեալք ի շնորհս հաստատակատած ողորմութեան և վարդասիրութեան նորա: Որ է օրհնեալ և գովեալ և հանուրց էից՝ յերկնայնոց և յերկրայնոց. անքանելով ամանակաւ, ներկայիս կենցաղով, և ապառնեաւ յաւիտենից: Ամէն:

Թ

ՅՈՎՍԵՓՈՍ ՓԼԱԲԻՈՍ. ԳԻՐՔ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ ՅՈՎՍԵՓՈՍԻ ԵԲՐԱՅԵՑՒՈՅ ԱՐԱՐԵԱԼ ՅԱՂԱԳԱՍ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՀՐԷԻՑ ԸՆԴ ՀՈՌՈՎՄԱՅԵՑԻՍ: Ռ անվանաթերթ. ՊԱՏՄԱԳԻՐՔ ԱՐԱՐԵԱԼ ՅՈՎՍԵՓՈՍԻ ԵԲՐԱՅԵՑՒՈՅ ՅԱՂԱԳԱՍ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՀՐԷԻՑ ԸՆԴ ՀՈՌՈՎՄԱՅԵՑԻՍ, ԵՒ ԱՒԵՐՄԱՆՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԵՒ ՏԱՃԱՐԻՆ ՀՆՈՑ: Թարգմ. Ստեփանոս Լեհացի: Էջմիածին, տպ. Ս. Գրիգոր Լուսաւորչի, 1787. 498 էջ:

Ա. ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԸ

Գիրք Պատմութեանց Յովսեպոսի Եբրայեցւոյ արարեալ յաղագս Պատերազմի Հրէից ընդ Հռովմայեցիս, և աւերմանն Երուսաղէմի: Թարգմանեալ ի Լատինացւոց բարբառոյ ի Հայոց լեզու, ի ձեռն որումն Իլովացւոյ Ստեփաննոսի Բանին Աստուծոյ սպասաւորի:

Ի Փառս Քրիստոսի Աստուծոյ լուսոյն յանէից:

Բ. ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԸ

Պատմագիրք արարեալ Յովսեպոսի եբրայեցւոյ յաղագս պատերազմին Հրէից ընդ Հռովմայեցիս, և աւերմանն Երուսաղէմի և Տաճարին ՌՆոյ:

Թարգմանեալ ի Լատինացւոց բարբառոյ ի մեր լեզու, աշխատասիրութեամբ նոջանկակրօն Միաբանի Քրիստոսասէր սրբոյ Գահիս Տեառն Ստեփաննոսի գերիմաստ վարդապետի Իլովացւոյ, քաջահմուտ և նարաքատ թարգմանչի, ի թուականութեան մերում ՌՆԹ:

Իսկ Նարդենիս տպագրութեամբ ի լոյս ածեցեալ ի ստոյգ ձեռագրէ նոյնոյ թարգմանչին ի Լուսակաւոյց Աթոռս սուրբ Էջմիածնի, վեհափառ հրամանաւ Տեառն Ղուկասու Սրբազան Կաթուղիկոսի ամենայն Հայոց. ի յիսթներորդում ամի Հայրապետութեան նորին:

Եւ ի Պատրիարգութեան սրբոյ Երուսաղէմի և Կոստանդնուպօլսոյ, տեառն Յովակիմայ և Տեառն Ջաքարիայ Աստուածիմաստ վարդապետաց և Արքի Եպիսկոպոսացն:

Ի Տպարանի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ:

Ի թուոջ Փրկչին, 1787, և ի մերում թուականին, ռմզգ:

Բան առ ընթերցողս. և Յիշատակարան տպեցման գրքոյս: (էջ 492—498)

Բնութեամբ մարդոյն սեպում է զհետ լինիլ գիտից...

Իսկ մեք դարձցուք այսրէն ասել և վասն թարգմանութեանց և տպագրութեանց գրքոյս: Էր սա թարգմանեալ ի վաղնջուց ժամանակաց ի նախնի վարդապետացն մերոց ի մեր լեզու և ի գիր, վասն օգտութեան ինչ իրաց, և վասն գիտութեան լրութեան աստուածային գրոց՝ զորս կանոնեն ասացաք. որպէս երէ գրասէր վարդապետն մեր Յօհան կարճաւանցին յիրումն յիշատակարանի, և որպէս տեսանեմք մեք զոմանս բանս սորա ի վկայութիւն առեալ ի նախնի վարդապետացն մերոց սրբոց, զոր օրինակ ի սրբոյն Գրիգորէ տաթևացւոյն և այլոց: Իսկ ի լինիլ խստագոյն տառապանաց աշխարհիս հայոց ի լանկն Թամուրայ աշխարհաւերէ և այլոց հինից սպառեալ է և այս գիրք ընդ այլ շահաւէտ և օգտակար գրեանց մերոց. որ և ոչ ուրեք երբէք գտանի այսօր լազգս մեր: Ուստի՝ հարկ է նդեալ կրկին թարգմանել զսոյն ի ժամանակս Տեառն Փիլիպպոսի սրբազան Կաթուղիկոսի ի լուսանկար և յերկնահանգէտ Աստուածածնեան Աթոռոջս սրբոյ Էջմիածնի, ի ձեռն տեառն Ստեփաննոսի գերիմաստ թարգմանչի և աստուածաբան վարդապետի Իլովացւոյ, որ ի խարդախութենէն Ճիկողլոսի ամպարշտի նկեալ էր ի սուրբ Աթոռս, որպէս պատմէ մեզ տէր Առաքել վարդապետն Թավրիզնցի յիրումն պատմագրութեան: Եւ սոյն այս տէր Ստեփաննոս գերիմաստ վարդապետս ըստ գրելոյն իւրոյ յիրումն յիշատակարանի սկսեալ է զթարգմանութիւն սոյն պատմագրութեանս ի ժամանակս Տեառն Փիլիպպոսի սրբազան Կաթուղիկոսի, և աւարտեալ է

յաւուրս Տեառն Յակոբայ ջուղայեցւոյ վշտակիր Կաթուղիկոսի ամենայն Հայոց՝ հարազատ թարգմանութեամբ։ որոյ զփորձն տեսաք ի պատմագրութեան տեառն Միխայէլի ասորւոյ ի բանն յորում խօսի յաղագս Հերովդէի և այլոց. նաև յայլ տեղիս, յորս ոչ ինչ են ընդհատ բանք առաւ ի նոցանէ։ Իսկ ի նարեկնիս Ջուղայեցի Պօղոսեան թարեսէր մահտեսի պարոն խաչիկն խնդրեալ էր ի Սրբազան Վեհապետէս մերմէ ի Տէր Ղուկաս Աստուածընտիր Կաթուղիկոսէս ամենայն Հայոց, տպեցուցանել զայս ի սուրբ Աթոռոջս, արդեամբք նորին։ Որոյ զխնդիրն ոչ անտեսառնելով թարեցան Հայրապետիս մերոյ, մանաւանդ՝ տեսանելով ևս թէ հազուագիւտ է այս գիրք յազգս մեր, և եղելոց շատքն ևս թազմասխալք ի գրչացն անհմտութենէ, վասնորոյ հրամայեաց ի տպագրել։ Եւ մինչ սկսաք տպել զգիրքս, թէպէտ և եկին ի ձեռս օրինակք գրեցեալք յայլ գրչաց, ոմանք ստոյգք և ոմանք սխալք, այլ մեք զայնս հեղինակի գրքոյս միայն համեմատեցաք և զտպեալս որ կայ ի միջի, ի հեղինակէն առաք. այս է ձեռագրէն՝ զոր նոյն ինքն իլովացի տէր Ստեփաննոս վարդապետն իւր ձեռամբն էր գրեալ։ որ և նոյնն եղեալ կայր ի գրատանն սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Յորմէ օրինակեցաք զտպեալս՝ ոչ ինչ յաւելեալ կամ պակասեցեալ. և ոչ փոփոխեալ ինչ, որպէս թէ զգաս բառնալով և զայն դնելով, ոչ ի բառս և ոչ ի բանս. այլ զամենայնն զոյգ հեղինակին եդաք աստէն, միայն զոմանս յնորդս և զհոլով անուանց և բայից և այլոց, նաև դտնագրեալս ոմանս զորս արժան էր դնել՝ եդաք. և այլ խուն ինչ՝ և ոչ հաճախ։ Իսկ զայլսն ըստ հեղինակին եթելոյ և ըստ հնոցն սովորութեան թողաք այսպէս. որպէս և տեսանին իսկ շարուածք համայն բանիցն և դրմունք տառիցն և բառից։ Եւ այս աւասիկ շատ լիցի տեսողացդ և ընթերցողացդ զայս պատմագրութիւն. Տեսցուք այսուհետև զայս՝ որք եղեն պատճառք և օժանդակք տպեցման գրքոյս, և են արժանիք յիշման. զորս դրոշմիմք աստէն և խնդրեմք ի ձերդ աստուածասիրութենէ՝ զի որք և ընթեռնուք զգիրս, յիշեսջիք ի Քրիստոս Նախ՝ զՏէր Սիմէօն վեհաշնորհ Կաթուղիկոսն զհաստատողն Տպարանիս, զփոխեցեալ առ Քրիստոս. զոր նոյն ինքն Տէր հանգուսցէ յարքայութեան իւրում։ Ընդ նմին յիշեսջիք և զՅաջորդ Գահակալս նորին զՍրբազան Հայրապետս ամենայն Հայոց զՏէր Ղուկաս վսեմահռչակ և բարեցան Կաթուղիկոս, հանդերձ կրօնիկն ճոնոջն. որ ի վերա այլ բիւրաջան հոգոցն ջանացեալ ևս զօգտավոր գրեանս ի լոյս ածել, որպէս և զայս էած։ Որում Տէր լիցի օգնական յարաժամ։

Ապա յիշելի է ի բարին և բնիկ միաբանն սրբոյ Աթոռոյս, Մինաս Արք Եպիսկոպոսն, որ հարազատօրէն ընթերցեալ զհեղինակն գրքոյս, զխառն տեղիս գրուածոցն պարզեաց և ի յերկարութիւնս տանցն, զիւրաքանչիւր բանս գլխագրով տնտեաց վերստին առ հարկաւորութեանն։

Ընդ որում և հոգեծին որդին սրբազան Վեհապետին, Թադէոս նորընծայ վարդապետն, որ սրբագրեաց զփորձսն կապարեալ գրոցն շարուածոց։

Յիշեսջիք ևս զտուողն ծախուց հաստատեցման տպարանիս զՋուղայեցի առ Քրիստոս փոխեցեալ խօջաջանեան Յակիկեանց լուսաւոգի Գրիգոր Ադայն, և զհանգուցեալ ծնողսն իւր, և զորդին, և զամենայն ազգայինսն, և զկենդանի քոյրն նորա զբարեպաշտուհի Զիպիտայն։ Որոց ամենեցուն ողորմեսցի Տէր։

Եւ մանաւանդ՝ յիշեսջիք զնախագրեալ Ջուղայեցի Քրիստոսասէր և բարեպաշտ մահտեսի Խաչիկ Ադայն, և զծնողսն իւր զՊողոսն և զՄէհրքանն, և զքոյրն իւր զՀոռիփսիմէն, և զկենակիցն իւր զՓերիճազն. և զդուստրն Յոհիտայն, և զայլ ամենայն ազգայինս իւր զկենդանիսն և զմեռեալսն։ Քանզի նոյն օրհնաժառանգ անձն ետ զնախսն տպեցման գրքոյս ի բարի յիշատակ իւր և իւրայնոցն։ Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի. և զփոխարէնն տրոց նորին բազմապատկապէս հատուցէ Քրիստոս նմա և իւրոցն զբարիս աստ և ի հանդերձեալ կեանսն։

Այլև՝ յիշեսջիք զկերտողն գրոցս և կանոնաց և ծաղկանշից, զվարպետ Յարութիւնն Վաղարշապատցի, հանդերձ աշակերտիսն իւրով տիրացու Խաչատուրիւն։ Եւ զգրաշար Մաղաքիայն, և զտիրացու Աղէքսանդրն, և զայլ աշխատաւորս գործարանիս։

Եւ յիշողքդ աշխատողացդս բարեպէտ,
յիշեալք լիջիք ի Քրիստոսէ արժանապէս։
Որում ընդ Հօր և սուրբ Հոգւոյն համապատիւ,
ի հրամայնից մատուցի միշտ փառք և պատիւ։
Ամէն։

Ծ

ՍԱՂՄՈՍ ԳԱՒԹԻ ՈՐ ԵՒ ԿՈՉԻ ՍԱՂՄՈՍԱՐԱՆ։ Էջմիածին, տպ. Գրիգոր Լուսաւորչի, 1787. 418 էջ։

Ծան.—Վերջում Ն. Շնորհալու «Աղօթք իրաքանչիւր անձին հաւատացելոյ ի Քրիստոս» («Հաւատով խոստովանիմ») և «Տօմար»։

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԸ

Սաղմոս Դաւթի։ Որ և կոչի Սաղմոսարան Տպագրեցեալ ի Մեծի Աթոռոջ Սրբոյ Էջմիածնի, հրամանաւ Տեառն Ղուկասու Սրբազան Կաթուղիկոսի ամենայն Հայոց։

ի թուոջ մերում, ռմլզ
Ի տպարանի սուրբ Լուսաւորչին

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ (էջ 416—418)

Շնորհիւ ամենազօրին Աստուծոյ և օգնութեամբ ընդունական մաղթանաց սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, տպագրեցեալ աւարտեցաւ սուրբ Գիրքս Սաղմոսաց, ի ռմլզ թուոջ մերում, և յամսեանս սեպտեմբերի ի Լուսակաւոյց և ի բարձրագահ Աթոռս սուրբ Էջմիածնի։ Վասնորոյ՝ գոհացողական փառատրութիւն ամենակարող զօրութեան Տեառն Աստուծոյ՝ այժմ և յանվախճան յաւիտեանս։

Արդ՝ որք ընթեռնուք և վայելէք զսա, յիշեսջիք ի յարժանահայց աղօթս ձեր զհաստատողն Տպարանիս զՏէր Սիմէօն սրբազան և յոգնաշխատ Կաթուղիկոսն, զհանգուցեալն ի Քրիստոս։

Ընդ նմին յիշեսջիք և զՅաջորդ Գահակալն նորին, զԱստուածարեալ Հայրապետն ամենայն Հայոց զՏէր Ղուկաս սրբազան և բարեցան Կաթուղիկոսն. որոյ հրամանաւ, և հոգաբարձութեամբ տպագրեցաւ

սուրբ Գիրքս:

Արժանի յամարեսջիք յիշման և զհոգեծին որդեակն սրբազան վեհապետին, զԹադեոս վարդապետն: զսրբագրիչն փորձիկ սորին:

Ցիշեսջիք ևս զտուսողն ծախուց հաստատեցման Տպարանին, զՋուղայեցի առ Քրիստոս փոխեցեալ խոջաջանեան յուսահոգի Գրիգոր Աղայն. և զհանգուցեալ ծնողսն իւր, և զորդին՝ և զամենայն ազգայինսն. և զկենդանի քոյրն նորա զբարեպաշտուհի Ջիպիտայն: Որոց ամենեցուն ողորմեսցի Տէր:

Մանաւանդ՝ յիշեսջիք զծերունազարդ և զբարեպաշտօն Ցօհանջան Աղայն Ցակոբեան, որ ի Սուրաթ քաղաքն բնակի. և զհանգուցեալ ծնողսն նորա. և զբարեպաշտուհի կենակիցն, և զհամեստ դստերսն. և զայլ ամենայն ազգայինս նորին զկենդանիսն և զննջեցեալսն: Քանզի նոյն օրհնաժառանգ և բարեսէր անձին արդարավաստակ արդեամբքն տպագրեցաւ սուրբ Գիրքս, առ ի լինել բարի յիշատակ նմին և իրարանցն:

Որով յիշառակն օրհնութեամբ եղիցի. և փոխանակ հոգևոր տրոց նորա՝ զբազմապատիկ վարձս բարեաց հատուսցէ Քրիստոս նմա և նորայնոցն, յայսմ աշխարհի՝ և ի հանդերձելումն:

Նաև յիշեսջիք զվարպետ Ցարութիւնն վաղարշապատցի. և զաշակերտ նորին զտիրացու Խաչատուրն: Եւ զգրաշար Մաղաքիայն, և զտիրացու Աղէքսանդրն և զտպիչ Գէորգն և Աղէքսանդրն: Եւ որք յիշէքդ, յիշեալ լիջիք յանչափ ողորմութիւնս և յսնքրաւ գթութիւնս մարդասիրին Քրիստոսի ի միւսանգամ Դալստեան նորին. Ամէն:

ԺԱ

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ: Էջմիածին, տպ. Ս. Գրիգոր Լուսավորչի, 1788. ԼԵ (35) էջ

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԸ

Խորհրդատետր

Սրբազան Պատարագի ըստ Արարողութեան Սրբոյ Եկեղեցւոյս Հաղաստանեայց:

Տպագրեցեալ ի Քրիստոսահիմն և ի լուսանկար Աթոռոջ Սրբոյ Էջմիածնի:

Հրամանաւ Տեառն Ղուկասու Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց:

Ցամի մարդեղութեան Փրկչին, ռչճը: (1788)

Եւ ի թուականին Հայոց, ռմլէ:

Ցիշատակարան (էջ ԼԴբ—ԼԵա)

Փառ և գոհութիւն անգրաւ յաւիտենից Ամենասրբոյ Երրորդութեանն և Միասնականի Աստուածութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ՝ հաստողին հանուրց, և կատարելագործողին ամենայն իրաց և իրականութեանց բարեաց: Որոյ համատարած շնորհացն օժանդակութեամբ էառ զկատարումն նորոգ տպագրութեան սուրբ Խորհրդատետրս, ի ձեռնտուութիւն սրբազնուէր Քահանայից ի սրբազնագործութեան Աստուածայնոյ Խորհրդոյն: ի թուականին մերում ռմլէ, և ի սեպտեմբերի վերջն. ի լերկնահանգէտ Աթոռս Սուրբ Էջմիածին:

Ի Հայրապետութեան Տեառն Ղուկասու Սրբազան Կաթուղիկոսի ամենայն Հայոց:

Եւ ի պատրիարգութեան սրբոյ Երուսաղէմի և Կոստանդնուպօլսոյ, Տեառն Ցովակիմայ, և Տեառն Զաքարիայ Արքի Եպիսկոպոսացն: Արդ՝ խնդրի ի սրբազնագործ դասուցդ Քահանայական, որք վայելէք զվայելչատիպ սուրբ Պատարագամատոյցս, շինեալ ի Քրիստոս, զհաստատողն Տպարանին՝ զհոգելոյս Տէր Սիմէօն բազմաշխատ և սրբազան Կաթուղիկոսն:

Եւ զտուսողն ծախուց հաստատեցման Գործարանին՝ զՋուղայեցի խոջաջանեան յուսահոգի Գրիգոր աղայն, և զծնողսն իւր, և զամենայն ազգայինսն, և զքոյրն նորա բարեպաշտուհի Ջիպիտայն:

Սանաւանդ՝ յիշեսջիք զՋուղայու Երևանցի և ի Սուրաթ քաղաքի բնակեալ Քրիստոսասէր և մեծահաւատ Պարոն Աւետիսն, և զհանգուցեալ հայրն իւր զԱղա աղայն. և զՄայրն բարեպաշտուհի. նաև զկենակիցն իւր զՈՒղուրլուն, և զդուստրն Մարիամն, և զվաղաթառամ Ջաւակունսն. և զայլ ամենայն մերձաւոր և հեռաւոր Ազգականսն նորին՝ զկենդանիսն և զննջեցեալսն: Վասնզի նոյն բարեմիտ Պարոն Աւետիքի խնդրանօքն և արդեամբքն տպագրեցաւ սուրբ Մատեանս՝ ի բարի յիշատակ նմա և նորայնոցն: Որոց ամենեցուն ողորմեսցի Քրիստոս ըստ մեծի ողորմութեան իւրում, քաւեսցէ զյանցանս նոցա, և արժանացուսցէ զնոսա մտից արքայութեան ընդ կամարարս և ընդ սիրելիս իւր:

Այլև յիշեսջիք զքանդակօղն նոր գրոցս և ամենայն պարագայիցն՝ զվարպետ Ցարութիւնն, և զտիրացու Խաչատուրն. և զգրաշար Մաղաքիայն, և զԱղէքսանդր Մարկաւագն. և զայլ աշխատաւորս Գործարանիս: Եւ զյիշողսդ յիշեսցէ Տէր ողորմութեամբ իւրով: Ամէն:

ԺԲ

ՇԱՐԱԿՆՈՑ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԳԵՑՄՈՒՆՔ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՔ: Էջմիածին, տպ. Ս. Գրիգոր Լուսավորչի, 1789. 895 էջ:

Ա ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԸ—էջ 1

Շարակնոց Երաժշտական Երգեցմունք հոգևորականք. Աստուածայնոյ և երջանկայ սրբոց վարդապետաց մերոց Թարգմանչաց, զկարգաւորութիւնս Եկեղեցւոյ վայելչացուցանողաց:

Բ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ—էջ 2

Տպագրեցեալ Ի Սուրբ Էջմիածին. Ի Հայրապետութեան, և Հրամանաւ իսկ՝ Տեառն Ղուկասու Սրբազան Կաթուղիկոսի ամենայն Հայոց:

Եւ ի պատրիարգութեան սրբոյ Երուսաղէմի՝ և Կոստանդնուպօլսոյ՝ Տեառն Ցովակիմայ և Տեառն Զաքարիայ արքի Եպիսկոպոսաց:

Ցամի Քրիստոսի Փրկչին մերոյ, ռչճթ:

Եւ ի թուականին Հայոց, ռմլը:

Ծախիւք ջուղայեցի Գէրաքեանց Ցակոբեան բարեպաշտ Ցոհանջան աղային՝ բնակեցելոյ ի Սուրաթ քաղաքի:

Ցիշատակարան Տպեցման և Տպողաց Շարակնոցիս (էջ 892—895):

Նպաստամատոյց Շնորհի Ամենազօրին Աստուծոյ, և օժանդակութեամբ խնկանուէր մաղթանաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ՝ ի կատարումն եղև բեր-

նալ Տպագրութիւն Երաժշտական հոգեշնորհ սուրբ Տառիս Շարակնոցի, ընդ հովանեաւ Լուսանկար երկնայատակ Աթոռոյս սուրբ Էջմիածնի: Վասն որոյ՝ անհատ գոհութեամբ փառք և երկրպագութիւն՝ պաշտօն և պատիւ նոյնոյ Եռանձնեայ և Միաբուն Աստուածութեան՝ մշտնջենապէս փառաբանեցելոյ ի հրաբուն լուսաճեմ անմահ դասուցն վերնականաց, ի յանգրաւ յաւիտեանս. Ամէն:

Արդ՝ որք հանդիպիք Աստուածայնոյ երգարանիս, և առաջ որք վայելիցէք զայս՝ հոգւով և մտօք երգաբանութեամբք օրհնելով զարձրեալ փառաւորեալն ի հրեշտակաց զամենասուրբ զԵրրորդութիւն, առաջեալ ի ձեզ զնմանութիւն երկնային զուարթնոցն, փառաբանիչք հրաշափառագոյն Տէրունական լինելով, հանդերձ մտերիմ և վայելուչ գովասանութեամբ առ երանելի և երջանիկ Սուրբսն՝ առ յաւիտենից բարեհաճոյացեալսն նմա. շնորհազարդ դասք եկեղեցականաց, յիշեսջիք յարժանաւոր մաղթանս ձեր սեռն սիրով ի միտս բարիս զկառուցօղն ամենայն հանգամանացն՝ զյոգներախտ բարեյիշատակ Տէր Սիմէօն սրբազան Կաթուղիկոսն զփոխեցեալն առ Քրիստոս: Ընդ նմին և զՋուղայեցի Խոջաջանեան չակիկեանց լուսահոգի Գրիգոր աղայն Միքայէլեան, հանդերձ ամենայն նորայնովքն, և կենդանի քերթն նորին՝ բարեպաշտուհի Զիպիտալիս:

Մանաւանդ՝ յիշեսջիք զկատարեալն Աստուածասիրութեամբ և բարեպաշտութեամբ, և զառաւելեալն բազմազան բարեգործութեամբ, զառատ պտղաբերն յեկեղեցի աստուծոյ՝ զջուղայեցի մեծահատատ ազնուական Ցօհանջան աղայն բնակեալ ի Սուրբ քաղաքի: և զհանգուցեալ հոգեյոյս ծնօղսն իւր՝ զՅակոբն և զՄէրիբանն. զհայրենի պապն և զհանին իւր զԳերաք աղայն և զԹագուհին. և զմայրենի պապն և զհանին իւր՝ զԱղամալն և զՎալիտալն և զեղբարսն իւր՝ զԱնտիբ, զԳէրաք և զԱբրահամ աղայսն. և զքոռսն՝ զԱզիզն, զԹագուհին և զխաթունն: և զնրկիղազարդ կինն իւր՝ զգաստամիտ Գիւլիստանն. և զհամեստուհի դստերսն իւրեանց՝ զՎարիտայն և զԹիրվանտայն. և զեղբայրն կնոջ իւրոյ՝ զբարեպաշտ և ազնուամիտ Պարոն Խաչիկ աղայն, որ ի կալկաթա. և զնօղսն նոցա՝ զՊարոն Առաքելն, և զԹիրվանտայն: Եւ զայլ ամենայն ազգայինսըն իւր զկենդանիսն և զննջեցեալսն: Քանզի՝ նորին բարեաբարտ անձին Ցօհանջան աղայի առատանուէր արդեամբքն և ծախիւքն տպագրեցաւ սուրբ Շարակնոցս, որպէս և ի սկզբան անոր նշանակեցեալ է: Որ և բարեհեղ բաղձանօք խնդրէ զայլ ևս հարկաւորագոյն գրեանս տպագրել տալ ի սուրբ Աթոռոջս յանմահ յիշատակ իւր և իւրոցն: Որոյ յիշատակն օրհնութեասբ եղիցի: զուխտ նորա ի փառս իւր ընկալցի Քրիստոս. և զիւրոքիւրսն նորին կատարեալ. և զփոխարէնն կամաւորական տրոց նորա, բազմապատկապէս հատուսէ ինքեան և իւրայնոցն յաստիս և ի հանդերձեալ կեանսն:

Համարեսջիք արժանիս յիշման և զվարպետ Ցարութիւն՝ զնկարիչն և քանդակիչն պատկերաց՝ ծաղկանց և բոլորից զրոց սուրբ Գրքոյս. և աշխատակիցն ի տրբագրութիւն կապարեալցն շարուածոց՝ զտէր Խաչատուր քահանայն: Ընդ որս և զգրաշար տիրացու Աղէքսանդր սարկաւագն, և զայլս աշխատեալս ի տպագրութիւն սորին: Եւ որք յիշէք, եղիջիք յիշեալք ի Քրիստոսէ ողորմութեամբ նորին:

ԺԳ

ՍԻՄԷՈՆ ԵՐԵՒԱՆՑԻ: ՏԱՂԱՐԱՆ ՓՈՔՐԻԿ: Էջմիածին, տպ. Ս. Գրիգոր Լուսաւորչի, 1793. 45 էջ:

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԸ (էջ 45)

Տաղարան Փոքրիկ.

Շարահիւսեցեալ ի Սիմէօնէ սրբազան Կաթուղիկոսէ Հայոց՝ յայլևայլ ժամանակաց

Դարձեալ վերստին տպագրեցեալ ի ապառիլ առաջնոց տպագրեցելոցն, ի թոխանոնանաց սիրատարք խնդրողաց:

Ի Վեհափառ Հայրապետութեան Տեառն Ղուկասու սրբազան Կաթուղիկոսի ամենայն Հայոց. և նորին իսկ հրամանաւ:

ԼՍմի փրկչին հանուրց, ոչոգ
և ի թուականիս Հայոց՝ ոմխբ:
Ի Սուրբ Էջմիածնի.
Ի տպարանի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ:
(Հիշատակարան)—էջ 45

Ի վախճանի տպեցման տաղարանիս, խնդրի ի բարեմիտ վայելողաց՝ յիշատակել բարեպես զկառուցօղն տպարանիս, և զաշխատաւորսն ի սմա: եւ զտուօղն ծախուց կառուցմանն սուրբ ոչոդայեցի, խոջաջանեանց Գրիգոր Աղայն՝ զհանգուցեալն ի Քրիստոս, հանդերձ ամենայն իւրայնովքն: Մանաւանդ՝ յիշեսջիք ի Քրիստոս զբարեպաշտ և առաքինազարդ ազնիւ Ցօհանջան Աղայն Յակոբեան Գէրաքեանց՝ ի Սուրբ քաղաքի բնակեալ, և զիւրայինսն զամենեսեան՝ զկենդանիսն և զննջեցեալսն. զի այս եւ նորին արդեամբ տպագրեցաւ: Եւ դուք հանդերձ նոքօք յիշեալ լիջիք յամենաբարեկամ ողորմութիւնս Տեառն: որում փառք՝ պատիւ և գոհութիւն յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

(Շարունակելի)

ԿԱԶՄԵՑ՝ ՍԱՄՎԵԼ ՍԱՐԿ. ՊԵՏՐՈՍՅԱՆ



ՑՈՒՑԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

«Էջմիածին» ամսագիրը 1950 թվականից սկսյալ հրատարակել է Մայր Աթոռ ս. Էջմիածնի ձեռագրատան ձեռագրաց ցուցակը երեք հերթով.—

ա. 1—101 . . . 1950—52 թթ.
բ. 102—200 . . . 1960—63 թթ.
գ. 201—300 . . . 1964—72 թթ.

Ամսագրի այս համարից հրատարակության ենք հանձնում ձեռագրատան նոր ստացած ձեռագրերի հերթական չորրորդ ցուցակը, հայագետների լայն շրջանակների օգտագործման համար դյուրություն ստեղծելու նպատակով:

Սույն ձեռագրերը տարիների ընթացքում նվեր են ստացվել մայր հայրենիքի և արտասահմանի մեր բարեպաշտ հայրենակիցներից, որոնց հայտնում ենք Վեհափառ Հայրապետի օրհնությունները և Մայր Աթոռի ձեռագրատան վարչության անկեղծ շնորհակալիքը:

Հանում Վեհափառ Հայրապետի այս առթիվ դարձյալ սրտագին կոչ ենք ուղղում մեր բոլոր այն հայրենակիցներին և կազմակերպություններին, որոնք ունեն հայերեն ձեռագիր կամ պատառիկ, որպեսզի իրենց լուման մուծեն ի նպաստ հայագիտության, մեր պապերից ժառանգ մնացած ձեռագիրները նվիրելով Մայր Աթոռ ս. Էջմիածնի ձեռագրատան:

Ն. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
(Ձեռագրատան վարիչ)

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի №№ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի №№ Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի №№ Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի №№ Ն—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից և 1972 թվականի №№ Ա—Բ-ից և Ղ-ից:

№ 301

ԿՈՆԴԱԿԱՑ ԳԻՐՔ

Թերթերը՝ 195:—**Պրակները՝** յուրաքանչյուրը 18-ական թերթից:—**Մեծությունը՝** 35×22×1,8 սմ.:—**Նյութը՝** գծավոր բարակ դիմացկուն թուղթ:—**Կազմը՝** հաստ ստվարաթուղթ:—**Պահպանակները՝** սկզբից և վերջից մեկական հասարակ բարակ թուղթ:—**Վիճակը՝** բավարար:—**Գրությունը՝** միասյուն:—**Դատարկ թղթերը՝** 40բ, 41ա, 105ա, 134ա—135բ:—**Ցոլները՝** 32:—**Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է գործարանից:—**Գիրը՝** շեղագիր (մի քանի տեսակի):—**Զարդագրություն՝** չունի:—**Գրիչը՝** Կաթողիկոսի քարտուղարը:—**Պատվիրատուն՝** Մկրտիչ Ա Խրիմյան Հայրիկ, Ամենայն Հայոց կաթողիկոս:—**Ժամանակը՝** 1899 թ.:—**Վայրը՝** ս. Էջմիածնի վանք:—**Ծանոթություն՝** սույն ձեռագիրն ստացված է Հոգևոր ճեմարանի գրադարանից հոգեշնորհ տ. Նարեկ վարդապետ Շաքարյանի ձեռամբ 1965 թ. հունիսի 18-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մատյանը պարունակում է (թթ. 1ա—193բ) Մկրտիչ Ա Խրիմյան կաթողիկոսի 1899 թ. գրած 1562 կոնդակների ընդհանուր ցուցակը: Կարևոր կոնդակների պատճենի տեքստը տրված է լրիվ կերպով, իսկ զանազան գրությունների, մակագրությունների, ստացականների և հասարակ կոնդակների մասին հիշված է միայն մի տողով, տալով հերթական թվահամարը:

Հետաքրքրության համար ստորև տալիս ենք մի քանի կարևոր կոնդակների վերնագրերը:

Թ. 8բ.—Պատուարժան տեարց անդամոց հոգաբարձութեան ազգային հիւանդանոցի ս. Փրկչի, հարազատ որդոց Մայր Աթոռոյ, նուիրեմք ողջոյն Տիրատանդ հանդերձ Հայրապետական օրհնութեամբ:

Թ. 19ա.—Ամեն. Պատրիարքի Կ. Պոլսոյ տ. Մաղաքիա Արք-եպիսկոպոսի յձակից եղբօր Մերոյ Հայրապետական ողջունիւ խնդալ ի Տէր:

Թ. 20բ.—Վեհամաշուք Պոդոս Փաշայի Նուբար, հա-

ազատ և հաւատարիմ որդւոյ Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի, նուիրեմք զմերն Հայրապետական օրհնութիւն, հայցելով զմխիթարութիւն ս. Հոգւոյն Այ ի վերայ հանգչելոյ վշտացեալ Գերդաստանին Ձերոյ։ (Կոնդակը գրված է 12 փետր. 1899 թ. Նուբար Փաշայի մահվան առթիվ)։

Թ. 26բ.—Առ ամենայն ուխտ Հայաստանեայց եկեղեցւոյ գտանիցելոց ի Կովկաս, Ձեզ Հոգեշնորհ փոխանորդացդ, բարեշնորհ Վանահարցդ, Արժանապատիւ աւագ Երիցանցդ, բարեկրօն Քահանայիցդ, շնորհունակ Սարկաւագացդ, յարգելի Տանուտէրացդ և Գիւղապետացդ, հարազատ որդւոյ Մայր Աթոռոյ Հայրապետական օրհնութեամբ յայտ առնեմք։ (Կոնդակը գրված է 3 մարտի 1899 թ. կարգադրելով, որ օգնեն «Ազգագրական հանդես»-ի հրատարակիչ Երվանդ Լալայանին, ազգագրական նյութեր հավաքելու գործում)։

Թ. 31ա.—Թոյլատուութիւն հրատարակութեան օրացուցի. Գիւտ քահն. Աղանեանցի։

Թ. 45ա.—Բազմավաստակ և արդիւնաւէտ ուսուցչի և ազգային գրասէր հեղինակի պ. Պերճի Պոշչեան հարազատի Մայր Աթոռոյս նուիրեմք ողջոյն և օրհնութիւն։ (Կոնդակը գրված է 5 մայիսի 1899 թ. Պ. Պոշչանի գրական գործունեության քառասնամյա հոբելյանի առթիվ)։

Թ. 55ա.—Սինոդի ս. Էջմիածնի։ (Կոմիտաս վարդապետին փոխարինաբար 200 ռուբլի օգնություն տալու մասին։ 3 հունիսի 1899 թ.)։

Թ. 78բ.—Պաշտաւոր Իշխան Ն. Երկայնաբազուկ Արդութեանց, հարազատի Մայր Աթոռոյս և յաւէտ սիրելւոյ Մերոյ նուիրեմք ողջոյն և Հայրապետական օրհնութիւն։ (Սանահնի վանքի նորոգության մասին)։

Թ. 86բ.—Բարեշնորհ տ. Գարեգին վարդապետի Յովսէփեան, հարազատի Մայր Աթոռոյս մատենադարանապետի Մայր Աթոռոյս և արիաջան ուսուցչի Հոգևոր ճեմարանի, սորին Հայրապետական ողջոյն և օրհնութիւն։ (Կոնդակը գրված է 26 սեպտ. 1899 թ. վարդապետական ակադեմիկոս լանջախաչ շնորհելու առթիվ)։

Թ. 92բ.—Ողորմած Տէր. Իվան Լոգինովիչ։ (Երկար կոնդակը գրված է 6 հոկտ. 1899 թ. (№ 1139), Ռուսաստանի Ներքին գործոց նախարարին, փոխանակ ռուսերենի հայ լուսավորչականներին միայն գրաբար լեզվով երդում անել տալու մասին, վկայակոչելով Մակար կաթողիկոսի կարգադրությունը)։

Թ. 108բ.—Ողորմած Տէր. Վսեվոլոդ Փեստորովիչ։ (Հորս աղքատ հայ աշակերտներին ուսման համար Լազարյան ճեմարան ընդունելու մասին)։

Թ. 106բ.—Ամենապատիւ տ. Մաղաքեայ արքեպիսկոպոսի Քաջարեան Պատրիարքի Հայոց Թիւրքիոյ և սիրելւոյ Մերոյ ողջոյն Տիրաւանդ։ (Կոնդակը գրված է 6 նոյեմ. 1899 թ. Խորեն արք. Աշըգյանի մահվան լուրն ստանալու առթիվ)։

Թ. 109ա.—Նահապետիդ յաշխատաւոր յանդաստանի կրթութեան հայ մանկտւոյ և բազմաշխատ Հօրդ ի գրական ասպարիզի, Տերունազարդ բարեկամի Մեր.ոյ և սիրելւոյ պ. Մատթէոսի Մամուրեան, հարազատ որդւոյ Մայր Աթոռոյս բազմասցի ի Մէջ ողջոյն շատ հանդերձ Հայրապետական օրհնութեամբ (Օրհնության կոնդակը տրված է 3 նոյեմ. 1899 թ., իր ունեցած ուսուցչական և խմբագրական երկարամյա գործունեության առթիվ)։

Թ. 126ա.—Մեծարգոյ Տեսչի Լազարեան ճեմարանի արևելեան լեզուաց, որ ի Մուկուայ ուսուցչապետ պ. Գրիգորի Խալաթեան, հարազատ որդւոյ Մայր Աթոռոյս նուիրեմք ողջոյն հանդերձ Հայրապետական օրհնութեամբ։ (№ 1508 կոնդակը գրված է Գրիգոր Խալաթյանի «Գիրք Մեցաբորդաց»-ի հրատարակության առթիվ)։

Թ. 127ա.—Գերազնիւ ուսուցչապետի արքայական համալսարանի ի Բերլին Տիար Օսկարայ Ֆլայշէր Քրիստոսաւանդ ողջոյն հանդերձ Հայրապետական Մեր օրհնութեամբ։ (Ընդհակալության և օրհնության կոնդակ—№ 1508, 23 դեկտ. 1899 թ.—գերմանացի ուսուցչապետին՝ Կոմիտաս վարդապետին նրա մոտ երեք տարի սովորելու և Էջմիածին վերադառնալու առթիվ)։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(Կազմի վրա) Մայր Մատեան Կոնդակաց 1899 ամի։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Սկզբի պահպանակի վրա) 1899 թ., № 20, № 209։

Թ. 188բ.—Համարակալված հարյուր յեռեսուն յերեք (133) թերթ, 31-1-1980 թ., Խ. Ա., 26-11-1969 թ., 133 թ.։

№ 302

ԿՈՆԴԱԿԱՑ ԳԻՐՔ

Թերթերը՝ 158 (1ա+157)։—**Պրակները՝** յուրաքանչյուրը 16-ական թերթից (բացառապես Բ պրակը հավելվածական 4 թերթ ունի)։—**Մեծությունը՝** 34,7×21,6×1,5 սմ.։—**Նյութը՝** գծավոր բարակ դիմացկուն թուղթ։—**Կազմը՝** հաստ ատվարաթուղթ։—**Պահպանակները** սկզբից և վերջից մնկական հաստարակ բարակ թուղթ։—**Վիճակը՝** բավարար։—**Գրությունը՝** միապույն։—**Դատարկ թերթերը՝** 1ա, 1բ, 147բ—157բ։—**Տողերը՝** 30։—**Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է գործարանից։—**Գիրը՝** շեղագիր (մի քանի տեսակի)։—**Զարդագրություն՝** չունի։—**Գրիչը՝** կաթողիկոսի քարտուղարը։—**Պատվիրատուն՝** Մկրտիչ Ա Խրիմյան Հայրիկ, Ամենայն Հայոց կաթողիկոս։—**Ժամանակը** 1900 թ.։—**Վայրը՝** ս. Էջմիածնի վանք։—**Ծանոթություն՝** սույն ձեռագիրն ստացված է Հոգևոր ճեմարանի գրադարանից Հոգեշնորհ տ. Նարեկ վարդապետ Շաքարյանի ձեռամբ 1985 թ. հունիսի 13-ին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մատյանը պարունակում է (թթ. 1ա—147ա) Մկրտիչ Ա Խրիմյան կաթողիկոսի 1900 թ. գրած 1577 կոնդակների ընդհանուր ցուցակը։ Կարևոր

կոնդակների պատճենի տեքստը տրված է լրիվ կերպով, իսկ զանազան գրությունների, մակագրությունների, ստացականների, հասարակ կոնդակների մասին հիշված է միայն մի տողով, տալով թվանամարը։

Հետաքրքրության համար ստորև տալիս ենք մի քանի կարևոր կոնդակների վերնագրերը։

Թ. 3բ.—Դպրապետի Մայր Տաճարի ս. Էջմիածնի և հարապատի Մենի Աթոռոյն Շնորհազարդ տ. Կոմիտաս վարդապետի Հայրապետական օրհնութիւն և գոհունակութիւն։ (Կոնդակը գրված է 15 հունվարի 1900 թ. վարդապետական ակնակուռ լանջախաչ շնորհելու առթիվ)։

Թ. 5բ.—Մեծապատիվ պարոնայց Գործադիր Ժողովոյ Հայ-լարաց ընթերցատան Եգիպտոսի որ ի Գահիրէ և անդամոց նորին, հարազատ որդւոց Մայր Աթոռոյս ողջոյն և Հայրապետական օրհնութիւն։ (Կոնդակը գրված է 20 հունվարի 1900 թ. ընթերցատան ունեցած ազգօգուտ գործունեության առթիվ)։

Թ. 7բ.—Հայկազուն հարազատ որդւոց Մերոց բնակելոց ի Հնդիկս, Զեզ, որ տարագրեալ ի ծոցոյ Հայրենեաց բնակեալքդ էք առ ափն Գանգէսի և ի կոգիս հեռաւորս, սրբազնէր Քահանայիցդ, Շնորհունակ Դպրացդ և Կղերիկոսացդ, հաւատարիմ Երեցփոխանացդ և Գանձապետացդ, Ածաստէր և յարգելի Վաճառականացդ և Հոգաբարձուացդ, Ալեզարդ Նահապետաց տանց և օրհնեալ Ծերունեացդ, մանր և գործօն երիտասարդացդ, ջանասէր ուսանողացդ, պսակ արանց և հաստատութեան տանց, ժրաջիգ և համեստաբարոյ Տիկնանց, պարկեշտասուն օրիորդաց և համայն ի Քրիստոս հաւատացեալ որդւոցդ Մօրս լուսոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի ընդ որոյ հովանեաւ կայք, մնայք ի լուսարար վարդապետութեան Սրբոյ Հօրն Մերոյ Գրիգորի քազմաչարչար Նահատակի և Առաքելապանծ Հայրապետի, ողջոյն և օրհնութիւն յԱթոռակալէս ընդհանրական Մենի Աթոռոյս հանուրց Հայաստանեայց։ (Երկար այս կոնդակը գրված է 24 հունվարի 1900 թ. Նոր Ջուղայի և Հնդկաստանի թեմական առաջնորդ Մաղաքիա եպիսկոպոսի միջոցով Ջուղայի ս. Ամենափրկչյան վանքում կենտրոնական դպրանոցը կդիրանոց բացելու առթիվ հնդկահայոց նյութական օժանդակությունը խնդրելու մասին)։

Թ. 10բ.—Հայկազուն հարազատ զաւակաց Մերոց բնակելոց ի Տէրաթեան Ռումանիոյ, Արժանապատիվ Աւագ Երիցանց, Բարեկրօն Քահանայիցդ, Յարգելի Հոգաբարձուած և Թաղական Խորհրդոց և համայն դասուց հաւատացեալ որդւոց Ս. Հօրն Մերոյ Գրիգորի Լուսաւորչի, ողջոյն և օրհնութիւն յԱթոռակալէս Մենի և ընդհանրական Աթոռոյս Ս. Էջմիածնի։ (27 հունվարի 1900 թ. չորս էջանոց երկար կոնդակը գրված է Եվրոպայի վիճակի այցելու հովիվ նորընծա Գեորգ եպիսկոպոս Ռաթուշյանին՝ Ռումինիո հայկական գաղութի կողմից չընդունվելու առթիվ)։

Թ. 12բ.—Հայկազուն հարազատ զաւակաց Մերոց բնակելոց ի Տիրախնամ վիճակն Շամախւոյ, ի Շամախի, ի Բագու, ի Ռէրբէնդ, ի Ղուրայ և ի գիւղաքաղաքս և ի գիւղօրայս, Շնորհազարդ վարդապետաց և վանահարց, Արժանապատիվ Աւագ Երիցանց, Սրբանուէր Քահանայիցդ, Շնորհունակ սարկաւագաց, դպրաց և համայն դասուց Եկեղեցականաց, Մեծապատիվ Վաճառականացդ և աստիճանաւորաց, հաւատարիմ Գանձապետաց և Երեցփոխանաց, աշխատասէր երիտասարդաց, Յարգելի արհեստաւորաց, քրտնաջան Երկրագործաց և մշակաց, բարեպաշտաբարի Տիկնանց, Համեստափայլ օրիորդաց, ծերոց և տղաց, երիտասարդաց և կուսանաց և ամենայն չափու հասակի ի Քրիստոս հաւատացեալ որդւոց Մօրս Ս. Էջմիածնի, որ սնեալքդ և զարգացեալքդ էք, ի ճշմարիտ վարդապետութեան և յուղղափառ դաւանութեան Ս. Հօրն Մերոյ Գրիգորի Առաքելապանծ Հայրապետի, ողջոյն և օրհնութիւն յԱթոռակալէս Ս. Գահին Արարատայ։ (28 հունվարի 1900 թ. չորս էջանոց երկար կոնդակը—որ խրատական հիանալի մի գիր է, ուղղված թեմի մարդկանց, երիտասարդներին, տիկիններին և օրիորդաց, ամուսնական և այլ հարցերով—գրված է թեմական առաջնորդի՝ Կարապետ եպիսկոպոսի մահվան և նոր առաջնորդի՝ Եղայի արքեպիսկոպոսի նշանակման առթիվ)։

Թ. 17բ.—Օգոստափառ Թագաւոր, Ամենաողորմած Տէր. Ի քարտուղարդ քարի հայեցողութիւն Կայսերական Մեծութեան Ձերոյ արկանէ զամենահպատակ խնդիրս խոնարհ ծառայ Ձի Քի, Ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոսն Ամ Հայոց Տ. Մկրտիչ։ (Սա գրված է 10 փետրվարի 1900 թ., համար չունի և հանդիսանում է Խրիմյան Հայրիկի ամենաերկար կոնդակներից մեկը, եթե ոչ ամենաերկարը, ունենալով 17 էջի ծավալ և ուղղված է օրվա Ռուսական ինքնակալին։ Կոնդակը գրված է Հայ Եկեղեցու անդամների ամուսնական և ամուսնալուծական գործերի, ինչպես նաև այդ հարցերի վերաբերյալ Հայ Եկեղեցու նախօրոք ընդունված կանոնների մասին)։

Թ. 49ա.—Գերապատիվ Տէր Գէորգ Ս. Արքեպիսկոպոսի վիճակաւոր Աւագնորդի թեմին հայոց Վրաստանի և Իմերեթի. Նախագահի հոգաբարձութեան Ներսեսեան հոգևոր դպրանոցի հայոց Տփխնաց և պատուարժան Տնարց անդամոց նոյն հոգաբարձութեան հարազատ որդոց Մայր Աթոռոյս հուերի ողջոյն Ցիսուսաւանդ հանդերձ հայրապետական օրհնութեամբ։ (Օրհնության կոնդակը գրված է 8 մայիսի 1900 թ. Ներսիսյան վարժարանի 75-ամյա հոբելյանի առթիվ)։

Թ. 73ա.—Նորին Գերազանցութեան Ընդհանուր Հիւպատոսի Օսմանեան պետութեան ի Տփխիս։ (Գրված է 17 հունիսի 1900 թ. Թուրքիայից եկած հայ գաղթականների ամուսնության վերաբերյալ)։

Թ. 78բ.—Ամենապատիվ Պատրիարքի Հայոց Թուրքիոյ Տ. Մաղաքիա Սրբ. Եղբօր Մերոյ և հարազատ Մ. Աթոռոյս նուիրեմք ողջոյն և օրհնութիւն։ (Կոնդակը գրված է 28 հունիսի 1900 թ. Էջմիածնի ճեմարանում սովորելու համար տաճկահայ ուսանողության երթևեկի հարցի մասին)։

Թ. 81ա.—Միաբանի Մ. Աթոռոյս Շնորհափայլ

վրդպ. ի Հայրապետական օրհնութեամբ յայտ առնեմք: (Կոնդակը գրված է 27 օգոստոսի 1900 թ. առաջինա սեպտեմբեր ամսին պարսից Շահնշահի՝ Էջմիածին այցելության կապակցությամբ):

Թ. 97ա.—Արժանապատիւ Տ. Մամբրէ քահանայի Վարդանեան, Փոխանորդ Տեղապահի առաջնորդութեան Հայոց Եգիպտոսի, հարազատ որդւոյ Մայր Աթոռոյս, ողջոյն և օրհնութիւն Հայրապետական: (Չորս էջանոց երկար կոնդակը գրված է 30 սեպտ. 1900 թ. երկու ամուսինների միջև ծագած բարոյական վեճի մասին):

Թ. 106թ.—Նորին Բարձրութեան Սադրազամին պարսից. Վսեմափայլ Տէր: (Գրված է 10 հոկտեմբերի 1900 թ. պարսկահայերի վերաբերյալ մի քանի հարցերի մասին):

Թ. 121ա.—Նորին Պայծառափայլութեան Տ. Կառավարչապետի քաղաքական մասին Կովկասու Իշխան Գրիգորի Սերկէէվիչ Գալիցինի: (Գրված է 11 նոյեմբերի 1900 թ. հայտնելով, որ պարսից Շահը իրեն՝ կաթողիկոսին շնորհել է առաջին աստիճանի Առյուծի և Արեգակի ականակուռ շքանշանը):

Թ. 187ա.—Ամենապատիւ Պատրիարքին Առաքելական Աթոռոյն Ս. Երուսաղէմի Տ. Ցարութիւն Ս. Արք-Եպիսկոպոսի հարազատի Մ. Աթոռոյս և յաւէտ սիրելւոյ Մերոյ խնդալ ի Տէր: (Կոնդակի թվականը չի նշված, թվահամարն է 1350: Սկզբում հինգ տող գրված է արձակ, սակայն կոնդակի շարունակությունը—25 տող—գրված է ոտանավորի ձևով: Հազվադեպ պատահող մի կոնդակ է սա):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(Կազմի վրա) Մայր Մատեան Կոնդակաց 1900 ամի:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Սկզբի պահպանակի վրա) 1900 № 21, № 210:

Թ. 147բ.—Համարակալված է հարյուր քառասունյոթ (147) թերթ: 31 Նի 4.1. 30 թ., ճիշտ 147 էջ, 26-11-1969 թ.:

№ 303

ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐ

Թերթերը՝ մոտավորապես 26:—**Պրակները՝** անհայտ:—**Մեծությունը՝** մոտավորապես 14,5×9,5 սմ. յուրաքանչյուր թերթի չափերը:—**Նյութը՝** խունացած և կտրատված հաստ թուղթ:—**Կազմը՝** քայքայված լաթակազմ:—**Պահպանակները՝** հասարակ թղթակտորներ կազմած:—**Վիճակը** շատ վատ:—**Գրությունը՝** միապույն:—**Տողերը՝** 18:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** նոտրգիր:—**Զարդագրություն՝** չունի:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ժամանակը՝** 17-րդ դար:—**Վայրը՝** անհայտ:—**Ծանոթություն՝** ստացված է նվեր ներքին թեմերից: Ոտանավորների սույն ձեռագիր թերթերը կազմված են իրարու վրա անկանոն կերպով և մի մեծ տպագիր Մաշտոց գրքի սկզբի պահպանակն են կազմում: Թերթերից մի քանիսը կնսից կտրատված են, մյուսները մեծապես վնասված, միայն շատ քչերն են, որ լրիվ պահպանված են:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նմուշի համար տրվում է պահպանված մի էջի տեքստը, որ հանգավոր է և վերջանում «Ն» տառով: Այս ձևով են գրված մնացյալ բոլոր էջերը:

Մահմտականքն կորընչի ն.
որք անարգեն զնշշան խաչի ն.
Երկրրպագուքն ի քեզ պարծի ն.
և խաչակցեալքն բերկրեսցի ն.
Իսկ մեղսասէրքն թախանձի ն.
որք ծուլութեամբ զկեանս անցուցի ն.
Լապտերք կուսից սլայծառ վառի ն.
որք զիւղն յառաջ պատրաստեցի ն.
Իսկ յիմարքն շիջանի ն.
որք անագան գընել գնացի ն.
Ցորժամ Հայր և Սուրբ Հոգի ն.
ընդ քեզ երկիր խոնարհեսցի ն.
Որպէս տեսեալ Դանիէլի ն.
ըզհինաւուրցն և միշտ էի ն.
Զի արարածք արժանասցի ն.
յայնժամ տեսլեանն երրեակ անձի ն.
Ի վկայել քեզ միածնի ն.
ըստ Ցորդանանն և ի լերին ն.

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Տպագիր Մաշտոցի 14բ էջում գրված է).

...և սոյնոյ գրոյս թույն վերստին արձանացուցք որդ ՌՄԷ թուականութեանն և ամի Տն. 1751:

Ապիրատ ծոյ. Արապիոն էրէցս որ նմ յերկրէն Երևանու, ի մհալէն Ծաղկնուձորու, ի գիւղէն Գառնեղուս, ի մեծ ազգէ որ նմ Շխնեցոնցէ, պապն իմ Տէր Արիստակէսն, հայրն իմ Տէր ԸՍտեփանոսն որժամ եկաց ի գիւղս այս որ գ գոչի Բաբոինն, օրհնեալ բիրականայ ժողովրդեան մէջն թանկութիւն էր. լիտրն Ժ շ(ա)հի, սորանց մէջն Կառաորիցանք Աստուած իրեանցն շէն ու հաստատուն...

№ 304

ՁԱՓԱԲԵՐԱԿԱՆ ՄԱՏԵԱՆ

Թերթերը՝ 203:—**Պրակները՝** յուրաքանչյուրը 12-ական թերթ, կա որ պակաս է:—**Մեծությունը՝** 33×21,6×2,3 սմ.:—**Նյութը՝** խունացած բարակ կապտավուն թուղթ:—**Կազմը՝** հաստ ստվարաթուղթ, առջևինը կա, իսկ կոնակինը կորել է:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** քայքայված, շատ վատ, վերջում թերի:—**Գրությունը՝** լոթ սյունակի վրա:—**Դատարկ թղթերը՝** կան բազմաթիվ դատարկ էջեր:—**Տողերը՝** անկանոն, 20—30 տող:—**Գծումներ՝** չունի, գրությունն անկանոն է:—**Գիրը՝** շեղագիր:—**Զարդագրություն՝** չունի:—**Գրիչը՝** գրել են զանազան քահանաներ:—**Պատվիրատուն՝** Իգդիրմավա գյուղի նկեղեցին:—**Ժամանակը՝** 19—20-րդ դարեր:—**Վայրը՝** Իգդիրմավա գյուղ:—**Ծանոթություն՝** ձեռագիր ձխամատյանն ստացված է Հոգևոր ճեմարանի գրադարանից 18 հոկտ. 1985 թ.:

(Շարունակելի)

ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ուրախությամբ պետք է հաստատել, որ վերջին երկու տասնամյակներում հայոց եկեղեցու նկատմամբ ստեղծված մասնավոր հետաքրքրությունը այլ քրիստոնյա եկեղեցիների կողմից առանձին ուշադրություն է գրավում և նոր խնդիրներ առաջադրում հայոց եկեղեցու գերագույն կենտրոնին:

Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ կաթողիկոսը Իր գահակալության առաջին իսկ օրերից մեծապես նպաստեց միջեկեղեցական կապերի և էկումենիկ հարաբերությունների զարգացման գործին՝ Իր իմաստուն և հայ եկեղեցու լուսամիտ հայրապետներին հատուկ լայնախոհությամբ:

1962 թվականից պաշտոնապես մեր եկեղեցու անդամակցությունը Եկեղեցիների համաշխարհային խորհրդին մի նոր խթան հանդիսացավ, որով հայոց եկեղեցին դուրս եկավ միջեկեղեցական արտաքին աշխարհ:

Արդարև, այսօր երբ անդրադառնում ենք հայ եկեղեցու Պետի գլխավորած միջեկեղեցական հարաբերությունների գործունեությանը, նկատում ենք, որ դա բազմակողմանի է՝ պայմանավորված եկեղեցիների պետերի միջև փոխայցելություններով, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կազմակերպած ժողովներին, հանդիպումներին հայ եկեղեցու մասնակցությամբ, ի նպաստ աշխարհի խաղաղության հայ եկեղեցու գործադրած ջանքերով՝ այլ եկեղեցիների հետ միասին:

Այս նշանակում է, որ ինչպես միշտ, նաև էկումենիզմի զարգացման մեր օրերին ս. Էջմիածնի հեղինակությունը, իբրև քրիստոնեական կենտրոնի, դուրս է գալիս իր ազգային սահմաններից՝ մի անգամ ևս ընդգծելով իր առաքելության համաքրիստոնեական բնույթը:

Այսօր հայ եկեղեցին ծանոթացնել օտարներին միայն իր անցյալով, կնշանակեր սահմանափակել նրա այսօրվա նշանակությունն ու առաքելությունը: Հայ եկեղեցին ինչպես երեկ, այսօր էլ ունի իր դերը և ասելիքը մեր ժողովրդի եկեղեցական, ազգային-հասարակական կյանքում, ինչպես նաև իր ուրույն տեղը՝ համաքրիստոնեական քույր եկեղեցիների մեծ ընտանիքում:

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հետ մեր կապերը, որ զարգանում և խորանում են էկումենիկ շարժման հեռանկարներով, հնարավորություն են ստեղծում, որ համաշխարհային ճանաչում գտնի մեր եկեղեցու կրոնական, ազգային և մշակութային ժառանգությունը՝ ճշմարիտ ընկալմամբ:

Հայ եկեղեցին ճիշտ ըմբռնելով էկումենիկ շարժման ոգին և նրա հետապնդած նպատակները, այն է՝ քրիստոնյա բոլոր եկեղեցիների մերձեցումը, համագործակցության միջոցով հանուն ժողովուրդների եղբայրացման, խաղաղության և արդարության հաստատման, իր հնարավորն անում է, որ առավել զորանան մեր կապերը բոլոր այլ եկեղեցիների և էկումենիկ հաստատությունների հետ: Նույնիսկ եթե այսօր պահվում են եկեղեցիների միջև հիմնական տարբերություններ ծեսի և վարդապետական ըմբռնումների, վերջին տարիների փորձը ցույց է տալիս, որ այդ եկեղեցիները և քրիստոնեական կազմակերպությունները կարող են ընդգրկվել բարեկամական փոխհարաբերությունների մեջ և գործակցել բազմաթիվ ձևերով, սովորելով մեկը մյուսից, հանդուրժողական ոգով նստելով դավանաբանական խոսակցությունների՝ գոյություն ունեցող տարակարծությունները վերջ տալու հույսով և լավատեսությամբ:

Հայ եկեղեցին հավատում է, որ էկումենիկ շարժումը տալիս է հնարավորություններ ազատ և անկեղծ արտահայտվելու, և ահա թե ինչու Մայր Աթոռում լրջորեն ձախաձեռնվում է, որ հայ եկեղեցին նպատակասլաց կերպով հանդես գա միջեկեղեցական փոխհարաբերություններում՝ առավել գործոն կերպով իր մասնակցությունը բերելու բարոյական և հոգևոր այն առաքելությանը, որն արտահայտվում է աշխարհում քրիստոնեական ճշմարիտ եկեղեցիների կենդանի վկայությամբ:

ԱՐՍԵՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ԲԵՐԲԵՐՅԱՆ

ԱԿՆԱՐԿ ԷԿՈՒՄԵՆԻԿ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Ա

Հայաստանյայց եկեղեցու՝ էկումենիկ շարժմանը բերած մասնակցության համառոտ պատմականն անելուց առաջ, հարկ է անդրադառնալ «էկումենիզմ» բառին տրված պատմական մի քանի իմաստներին:

Այն ծագում է հունարեն oikoumene բառից, որը սկզբնապես նշանակում էր «բնակեցված ամբողջ աշխարհը», բառ, որ հետագայում այլ իմաստ է ստացել և հասկացվել որպես «ամբողջական (տիեզերական) եկեղեցին» կամ «ամբողջ քրիստոնեությունը»:

«Էկումենիզմ» բառը ներկայումս ունի երկու իմաստ.

ա. Նշում է երկու կամ ավելի եկեղեցիների կամ տարբեր դավանության պատկանող քրիստոնյաների միջև գոյություն ունեցող հարաբերությունները.

բ. Արտահայտում է քրիստոնեական հասարակության պատկանելու գիտակցությունը և ուրիշ եկեղեցիների հետ միության ցանկությունը:

Էկումենիկ շարժումը պետք չէ վերագրել մի հատուկ կազմակերպության, այլ զանազան մարմինների և անհատների, որոնք հետապնդում են իրականացնել էկումենիկ շարժման գաղափարները: Իսկ թե որո՞նք են այդ գաղափարները, մենք այդ մասին պիտի ծանոթանանք հաջորդող տողերում:

Ահա թե ինչպես է սահմանված «էկումենիզմ» բառը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կողմից. «էկումենիզմ» բառը հատկապես օգտագործված է՝ նշելու համար այն բոլոր իրադարձությունները, որոնք առնչվում են ամբողջ (տիեզերական) եկեղեցու հետ, որի պարտականությունը ուրիշ բան չէ, եթե ոչ «ներկայացնել Ավետարանը համայն աշխարհին»:

Էկումենիկ շարժումը, հետևաբար, հետապնդում է բոլոր եկեղեցիների եղբայրական համագործակցությունը՝ իրենց ընդհանուր վկայությամբ ու գործով աշխարհում և աշխարհի համար:

Տարբեր եկեղեցիների պատկանող քրիստոնյաներ, զանազան հանդիպումների միջոցով, ծանոթանում են միմյանց հետ և սովորում գործակցել ընդհանուր պարտականությունների մեջ՝ միաժամանակ հարգելով միմյանց դավանական տարբերությունները:

Էկումենիկ իմաստով առաջին պաշտոնական համաժողովը գումարվել է 1910-ին Էդինբուրգ քաղաքում: Սակայն էկումենիկ ոգով համագործակցություն, միջեկեղեցական մակարդակի վրա, զարգացել է ասիական երկրների եկեղեցիների միջև շատ ավելի վաղ, քան Եվրոպայում:

1920-ական թվականներին շատ եկեղեցիներ «Հավատո և կարգի» ու «Կյանք և գործ» կազմակերպությունների միջոցով ընդգրկվում են, այսպես կոչված, էկումենիկ շարժման մեջ: Առաջին շարժումը հետապնդել է միություն ստեղծել եկեղեցիների դավանանքի և կառուցվածքի, իսկ երկրորդը ձգտել է համագործակցություն առաջ բերել եկեղեցիների միջև, սոցիալական և միջազգային հարցերի լուծման ասպարեզում: Սկզբնական շրջանում էկումենիզմը եղել է շատ փոքր թվով մարդկանց ուշադրության և մտահոգության առարկան:

Հույն օրթոդոքս եկեղեցին ձգտել է իր նպաստը բերել էկումենիկ շարժման ստեղծման գործում դեռևս 1920 թվականին, երբ Տիեզերական Պատրիարքը իր կոնդակով առաջարկում էր հիմնել եկեղեցիների միացյալ մի կազմակերպություն: Բայց քաղաքական անկայուն կացությունների պատճառով օրթոդոքս մյուս եկեղեցիները հեռու են մնում այդ շարժումից:

Այս վիճակը, սակայն, փոխվում է 1961—62 թվականներին, երբ օրթոդոքս եկեղեցիների մի մեծ խումբ ամբողջապես ընդգրկվում է շարժման մեջ:

Ասիական և աֆրիկյան երկրների բազմաթիվ եկեղեցիներ նույնպես, երբ ձեռք են բերում ինքնավարություն, դառնում են շատ գործունյա մասնակիցներ էկումենիկ շարժման: Առանց դադարեցնելու իրենց սերտ գործակցությունը աշխարհում գոյություն ունեցող տարբեր եկեղեցական կազմակերպությունների հետ, նրանք հիմնում են տեղական էկումենիկ մարմիններ Արևելյան Ասիայի և Աֆրիկայի համար, մարմիններ, որոնք հետագայում դառնում են միջեկեղեցական գործունեությանց առանցքային կենտրոններ:

Հռոմեական կաթոլիկ եկեղեցին սկզբում բռնում է վերապահ դիրք էկումենիկ շարժման նկատմամբ: 1930 և 1940-ական թվականներին մի խումբ կաթոլիկ աստվածաբաններ սկսում են մոտիկից ուշադրություն դարձնել էկումենիկ շարժման զարգացմանը, մի հանգամանք, որը կաթոլիկ եկեղեցուն առաջնորդում է անպաշտոն նոր հարաբերությունների մշակման գործին: Այդ հարաբերությունները հետագայում աստիճանաբար ընդլայնվում են և դառնում ավելի հուսադրիչ:

Հովհաննես ԻԳ Պապի օրերին արդեն նկատվում է դրական իմաստով բացահայտ բեկում կաթոլիկ եկեղեցու վերաբերմունքի մեջ դեպի էկումենիկ շարժումը և նրա գործունեությունը:

Ստեղծվում է քրիստոնյաների միության ի նպաստ մի քարտուղարություն Վատիկանում: Վատիկանի Բ ժողովում ընդունվում է մի կարևոր որոշում էկումենիզմի մասին, որով և սկսվում է նկարագիրը կաթոլիկ եկեղեցու նոր մտայնության դեպի էկումենիկ շարժումը: Այսպիսով ստեղծվում են նոր հնարավորություններ արդյունավետ դիալոգների և սերտ հարաբերությունների մշակման համար:

Էկումենիզմը արտահայտվում է տարբեր ձևերի մեջ:

Կա եկեղեցիների էկումենիկ գործակցությունը, որն այժմ կենտրոնացված է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի մեջ, խոստովանության միությամբ, ինչպես նաև տեղական կամ ազգային հիմքերի վրա գործող եկեղեցիների խորհուրդներում, որոնք այժմ գոյություն ունեն տարբեր երկրներում և վայրերում:

Գոյություն ունեն նաև Երիտասարդ տղամարդկանց քրիստոնեական ընկերությունը, Երիտասարդ կանանց քրիստոնեական միացյալ ընկերությունը և ի վերջո՝ Քրիստոնեական կրթության համաշխարհային խորհուրդը: Գոյություն ունեն նաև էկումենիկ շարժման գործին մասնագիտացած գործակալություններ, ինչպես՝ Աստվածաշնչական ընկերությունները, կամ Աստվածաբանության ուսուցիչների ընկերակցությունը, Նոր Կտակարանի մասնագետների ընկերակցությունը և այլն:

Գոյություն ունեն նաև էկումենիկ ինստիտուտներ և կենտրոններ բազմաթիվ երկրներում: Կա տակավին, այսպես կոչված, ոչ պաշտոնական ձևի էկումենիզմ. տարբեր եկեղեցիների անդամներ կազմել են կամավոր խմբեր՝ նպատակ ունենալով հանդիպումներ և խոսակցություններ կազմակերպել համատեղ եկեղեցական գործունեության համար:

Էկումենիզմի պատմությունը ցույց է տալիս, որ առանձին խմբեր, բարեգործություններ կատարելու տեսիլքով խանդավառված, Աստուծո ժողովրդի միության ուժով մեծ ծառայություն են մատուցել և այսօր էլ մատուցում են իրենց առաջամարտիկներ իրենց եկեղեցիների և էկումենիկ շարժման:

Էկումենիզմը հիմնականում արդյունքն է Քրիստոսի եկեղեցու հիմնական կոչի վերհայտնաբերման:

Միությունը, որ հետապնդում են եկեղեցիները, սահմանված է Ամստերդամի համագումարի կողմից. դա Հիսուս Քրիստոսով արտահայտվող սերն է Աստուծո, որը կապում է եկեղեցիները իրեն, կապում է նրանց մեկը մյուսին:

Էկումենիկ շարժման գլխավոր կենտրոնն է հանդիսանում Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը, որը պաշտոնապես գոյություն առավ 1948 թվականին Ամստերդամի համաժողովի որոշմամբ:

1961 թվականին Դելիի համաժողովում որդեգրված կանոնադրության մեջ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի պարտականությունները ճշտվում են հետևյալ ձևով.

1. Շարունակել «Հավատո և կարգի», «Կյանք և գործ» և «Միջազգային միսիոներական խորհուրդ» համաշխարհային շարժումների աշխատանքները:

2. Եկեղեցիների միջոցով հեշտացնել շարժման հատարակաց գործունեությունը:

3. Շարժումը կատարելագործել համագործակցությամբ և ուսումնասիրություններով:

4. Կատարելագործել էկումենիկ և միասնական գիտակցության աճը բոլոր եկեղեցիների անդամների մեջ:

5. Հովանավորել եկեղեցիները իրենց միսիոներական և ավետարանական պարտականությունների կատարման առնչությամբ:

6. Հաստատել և պահպանել հարաբերություններ ազգային և տեղական խորհուրդների, զանազան եկեղեցական մարմինների և այլ էկումենիկ կազմակերպությունների հետ:

7. Կարևոր հարցերի լուծման համար ի պահանջել հարկին հրավիրել համաշխարհային ժողովներ:

Կանոնադրությունը, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հեղինակության առնչությամբ, ընդգծում է նաև հետևյալը.

Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը իր խորհուրդներով պետք է նպաստի փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի լուծման համար եկեղեցիների ծավալած գործունեությանը:

Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը կարող է գործել անդամ եկեղեցիների անունից այն դեպքում, երբ եկեղեցիները նրան տալիս են նման իրավասություն։

Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը պետք է ունենա իրավունք ի պահանջել հարկին հրավիրելու տեղական կամ համաշխարհային ժողովներ։

1954 թվականի օգոստոսի 15—31-ը տեղի ունեցավ Էվենստոնի համաժողովը, որի նշանաբանն էր «Քրիստոս՝ Հույսն աշխարհի»։

Գ համաժողովը տեղի ունեցավ 1961 թ. նոյեմբերի 18-ից մինչև դեկտեմբերի 6-ը, Դելիում։ Նշանաբանն էր «Քրիստոս՝ Լույսն աշխարհի»։

Այս ժողովում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի համար իբրև հիմնական սկզբունք սահմանվեց «Բարեկամություն եկեղեցիների, որոնք մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին ընդունում են որպես Աստված և Փրկիչ»։

1966 թվականին կենտրոնական կոմիտեի ժողովը գումարվում է առաջին անգամ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի նոր կենտրոնում՝ Ժենևում։ Այդ կենտրոնը պաշտոնապես բացված էր 1965 թվականին։

Այս ժողովում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար է նշանակվում դոկտ. Է. Կ. Բլեյկը, որն իր պաշտոնավարությանն անցնում է 1 դեկտ. 1966-ից սկսյալ՝ իբրև հաջորդ դոկտ. Վիզերթ Հուֆթի։

1967 թվականի կենտրոնական կոմիտեի ժողովը տեղի ունեցավ Հերակլիոնի մոտ՝ Կրետեում։

Վերջին և կարևոր Դ համաժողովը տեղի ունեցավ 1968 թվականի հուլիսի 4—19-ը Ցվեդիայի Ուփսալա քաղաքում։ Համաժողովի նշանաբանն էր՝ «Ահա՛ ամենայն նոր»։

1971 թվականի հունվարին Ադիս-Աբեբայում գումարված կենտրոնական կոմիտեի ժողովում որդեգրվեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կառուցվածքի վերանայել մի նոր բանաձև, որը պետք է գործադրվի մինչև 1975 թվականը, այսինքն՝ մինչև հաջորդ Ե՝ համաժողովը։

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի նոր կառուցվածքը բանաձևվում էր հետևյալ կերպ.

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ղեկավարող մարմիններն են՝ վեհաժողովը, կենտրոնական կոմիտեն և գործադիր հինգ կոմիտեները։

Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը այժմ ունի շուրջ 260 անդամ եկեղեցիներ։ Կաթոլիկ եկեղեցին անդամ չէ Եկեղեցիների համաշխարհային խորհրդին, բայց 1960 թ. սկսյալ բոլոր համաժողովներին ուղարկում է պաշտոնական դիտորդներ։

ԱՐՍԵՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ԲԵՐԲԵՐՅԱՆ

Հայաստանյայց եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1972 ԹՎԱԿԱՆԻՆ

Օրավուր ընդլայնվում և ամրապնդվում են Հայաստանյայց եկեղեցու եղբայրական հարաբերությունները քրիստոնեական քույր եկեղեցիների և եկեղեցական ու կրոնական այլ կազմակերպությունների հետ:

Հավատարիմ իր հինավուրց ավանդության, հայ եկեղեցին իր երկարամյա պատմության ընթացքում միշտ էլ ձգտել է, իրեն հատուկ լայնախոհությամբ և քրիստոնեական աննախապաշար սիրով, բարեկամական սերտ կապեր հաստատել և եղբայրաբար գործակցել քրիստոնեական բոլոր եկեղեցիների հետ անխտիր՝ ի խնդիր քրիստոնեական գաղափարների տարածման և կենսագործման, բոլոր ժողովուրդների բարեկամության և աշխարհի խաղաղության: Այսօր էլ, էկումենիկ շարժման այս ժամանակաշրջանում, երբ սկսում են հետզհետե ավելի զգալի, ավելի շոշափելի և արդյունավետ, հետևաբար և հեռանկարային իմաստով ավելի խոստումնալից դառնալ եկեղեցիների միջև փոխադարձ մերձեցման, համաքրիստոնեական գործակցության ուղղությամբ ծավալված ջանքերը, հայ եկեղեցին, առաջնորդված նույն այդ ոգով, շարունակում է պահպանել և առավել նախանձախնդրությամբ զարգացնել իր կապերը բոլոր եկեղեցիների և միջեկեղեցական ամենաբազմազան կազմակերպությունների հետ:

Վերջին ժամանակներում, մի կողմից՝ հայ եկեղեցու հաճախակի մասնակցությունը միջազգային չափանիշով կազմակերպված բարձր մակարդակի քրիստոնեական համաժողովներին և կրոնական բազմաթիվ ու բազմապիսի այլ կոնֆերանսների, հայ եկեղեցու Պետի պաշտոնական այցելությունները քրիստոնեական զանազան եկեղեցիների հոգևոր կենտրոններ, նրա հանդիպումներն ու զրույցները եկեղեցիների հոգևոր պետերի և համաշխարհային նշանակություն ունեցող կրոնական այլ կազմակերպությունների ղեկավարների հետ, իսկ մյուս կողմից՝ տարբեր եկեղեցիների հոգևոր պետերի, բարձրաստիճան հոգևորականների և կրոնական կազմակերպությունների ղեկավար աշխատողների ու էկումենիկ կենտրոններից եկած բազմաթիվ օտար ուխտավորների անհատական կամ խմբական այցելությունները հայ եկեղեցու հոգևոր կենտրոն սուրբ Էջմիածին և նրանց հանդիպումները Հայոց Հայրապետի հետ,—այս բոլորը, բնականաբար, զգալիորեն բարձրացրին Հայաստանյայց եկեղեցու հեղինակությունն ու դիրքը ընդհանուր քրիստոնեական աշխարհում:

Պաշտոնական մակարդակի վրա տեղի ունեցող այս փոխայցելությունները, հանդիպումներն ու զրույցները, անտարակույս, անհերքելի վկայություններ են հայ եկեղեցու, նրա հոգևոր և մշակութային ժառանգության նկատմամբ վերջին տարիներում հետզհետե աճող հետաքրքրության:

Միջեկեղեցական փոխադարձ կապերի ամրապնդման, էկումենիկ գործակցության տեսակետից Մայր Աթոռի համար առանձնապես նշանակալից եղավ 1972 թվականը:

1972 թ. փետրվարի 1—4-ը երեքօրյա պաշտոնական այցով Մայր Աթոռ ժամանեց Ե-

կեղեցիների համաշխարհային խորհրդի նախկին ընդհանուր քարտուղար դոկտ. Էժեն Ռ. Բլեյկը: Նրա պատվին Մայր Աթոռում կազմակերպվեց պաշտոնական ընդունելություն՝ հատուկ ծրագրով: Իր այցելության երեք օրերի ընթացքում դոկտ. Բլեյկը մեծ հետաքրքրությամբ ծանոթացավ հայ եկեղեցու անցյալի պատմությանը, նրա հոգևոր-մշակութային արժեքներին, նրա այսօրվա գործունեությանը մեր ժողովրդի հոգևոր կյանքում, հաղորդակից դառնալով նաև նրա ձգտումներին և հետագա ծրագրերին: Նա ներկա գտնվեց Մայր տաճարում իր պատվին տեղի ունեցած էկումենիկ աղոթքի արարողությանը: Դոկտ. Բլեյկը միաժամանակ հնարավորություն ունեցավ այցելելու Հայաստանի մի շարք եկեղեցիներն ու վանքերը: Ամենայն Հայոց Հայրապետի հետ տեղի ունեցած պաշտոնական տեսակցության ընթացքում դոկտ. Բլեյկի և Նորին Սրբության միջև կատարվեց մտքերի լայն փոխանակություն՝ եկեղեցական մի շարք հարցերի շուրջ եղբայրական անկեղծ սիրո մթնոլորտում:

Նույն ամսի վերջին, փետրվարի 29-ից մինչև մարտի 4-ը, Մայր Աթոռի պաշտոնական հյուրը եղավ Մոնտեվիդեոյի համալսարանի ընկերաբանության դասախոս, Պրագայի խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի անդամ, մեթոդական եկեղեցու հոգևոր հովիվ պրոֆ. Հիբեր Կոնտերիսը, որի այցելության ընթացքում տեղի ունեցած հանդիպումներն ու զրույցները, երկու եկեղեցիների գործունեության վերաբերյալ միմյանց հաղորդված փոխադարձ ծանոթություններն ու փոխանակված մտքերը կարևոր նշանակություն ունեցան երկու եկեղեցիների էկումենիկ կապերի սերտացման և հետագա գործակցության ճանապարհին:

Մայիսի 16—24 օրերին ռումին օրթոդոքս եկեղեցու ամենապատիվ Ժուստինիան Պատրիարքի կարգադրությամբ Մայր Աթոռ այցելեց ռումին օրթոդոքս եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներից բաղկացած մի պատվիրակություն՝ ուղեկցությամբ Բուխարեստի հայոց հոգևոր հովիվ տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանի: Մայր Աթոռում գտնվելու հինգ օրերի ընթացքում պատվիրակությունը լայն պատեհություն ունեցավ ընդարձակելու իր ծանոթությունները հայ եկեղեցու թե՛ անցյալ և թե՛ ներկա կյանքի ու գործունեության վերաբերյալ: Վերադառնալով իր այցելությունից՝ պատվիրակության ղեկավար, Բանադի միտրոպոլիտ Նիկոլայե Գեանիանուն Ամենայն Հայոց կաթողիկոսին ուղղված իր 26 մայիս թվակիր նամակում գրում էր. «Թույլ տվեք ռումին օրթոդոքս եկեղեցու պատվիրակության անդամների անունից հղել Ձեզ մեր խորին շնորհակալության զգացմունքները այն ջերմ սիրո համար, որով շրջապատեցիք մեզ, և այն լայն հնարավորությունների համար, որ մեզ ընծայվեցին՝ մոտիկից ճանաչելու Հայաստանյայց առաքելական եկեղեցու և հայ ժողովրդի անցյալ և ներկա կյանքը:

Վստահ ենք, որ մեր այս հանդիպումը անպայման կնպաստի մեր եկեղեցիների և ժողովուրդների միջև գոյություն ունեցող ավանդական կապերի խորացմանը: Աղոթում ենք ամենաբարի Աստծուն, որ Ձեզ շնորհի քաջառողջություն և ուժ՝ շարունակելու համար Ձեր հոգևոր առաքելությունը ի նպաստ մեր եկեղեցիների և ժողովուրդների հետագա գործակցության, եղբայրական սիրո, հավասարության և փոխադարձ հարգանքի պայմաններում՝ ի ծառայություն մարդկության և ի փառս Աստուծոյ»:

Հունիսի 12—15-ը Մայր Աթոռ այցելեց շվեդական պառլամենտի անդամ և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի միջազգային գործերի հանձնաժողովի նախագահ դոկտ. Օլլե Դահլենը: Որպես եկեղեցիների միութենական շարժման ժամանակակից հայտնի դեմքերից մեկը և որպես եռանդուն եկեղեցական գործիչ, նա մեծ հետաքրքրությամբ ծանոթացավ հայ եկեղեցու պատմական հարուստ ժառանգությանը, շփումներ ունեցավ հայ հոգևորականության հետ, հաղորդակից դարձավ հայ եկեղեցու կյանքին ու նրա ձգտումներին:

«Անշուշտ, սուրբ Էջմիածին այցելելուց առաջ,—գրում է նա 20 հունիս 1972 թվակիր իր նամակում,—մտածում էի, որ դա հետաքրքրական մի այցելություն էր լինելու ինձ համար, սակայն երբեք չէի կարծում, թե այդպիսի օգտակար ու շահեկան մի փորձառություն էի ունենալու»:

Էկումենիկ կապերի զարգացման տեսակետից հայ եկեղեցու կյանքում նշանակալից իրադարձություն եղավ Վատիկանի պատվիրակության այցը Մայր Աթոռ հունիսի 16 — 20 օրերին՝ կարդինալ Վիլլեբրանդսի գլխավորությամբ: Կաթողիկե եկեղեցու պատվիրակությունը Մայր թաճարում ներկա եղավ սուրբ պատարագին, մասնակցեց համատեղ աղոթքի հանդիսավոր արարողությանը, ծանոթացավ հայ եկեղեցու պատմական սուրբ վայրերին և Ամենայն Հայոց Հայրապետի հետ ունեցավ մասնավոր հանդիպումներ, որոնց ընթացքում կատարվեց մտքերի անկաշկանդ փոխանակություն երկու եկեղեցիները շահագրգռող մի շարք հարցերի շուրջ եղբայրական ջերմ և անկեղծ մթնոլորտում: Անդրադառնալով այդ այցելությանը, ահա թե ինչ է գրում պատվիրուսկության բարձ-

ռաստիճան անդամներից Մարսելի արքեպիսկոպոս Ռոժե Էչեգարայը՝ Հայոց Հայրապետին ուղղված իր 1 հուլիս 1972 թվակիր նամակում.

«Առանց հապաղելու ուզում եմ հայտնել Ձեզ այն ուրախությունը, որ ունեցա՝ ուղեկցելով կարդինալ Վիլլեբրանդսին և այցելություն տալով Ձեզ Հայաստանյայց եկեղեցու կաթողիկոսության հենց կենտրոնում՝ Էջմիածնի սուրբ Աթոռում: Անբացատրելի հոգեկան ապրումների և երջանկության անսպառ մի աղբյուր եղավ ինձ համար տեսնել քրիստոնյա ամբողջ մի ժողովրդի հոգևոր օրրանը, Ձերդ Սրբության և նրա մերձավոր գործակիցների հետ բաժանել Ձեր ուրախությունները ու հույսերը, տեսնել ու ճանաչել ձեր առաքելական եկեղեցու մեծախորհուրդ սուրբ վայրերը, որի համար ի սրտե գոհություն եմ տալիս Տիրոջը: Հույս ունեմ, որ տակավին ուրիշ առիթներ ևս կներկայանան միմյանց հանդիպելու և սերտացնելու մեր եղբայրական կապերը: Մարսելի հայերը ուրախ են և հպարտ այն առաքելության համար, որ Սրբազան Պապը վստահեց ինձ: Այժմ ես ինձ առավել մոտ եմ զգում ձեր եկեղեցուն»:

Սեպտեմբեր ամսին շուրջ երկու շաբաթ Մայր Աթոռի մեծարգո հյուրը եղավ հայտնի հայագետ, Փարիզի կաթոլիկական ինստիտուտի արևելյան հին լեզուների ֆակուլտետի պատվավոր նախագահ հայր Շարլ Մերսիեն: Այցելելով սուրբ Էջմիածին՝ նա հնարավորություն ունեցավ մոտիկից և լայնորեն ճանաչելու մեր եկեղեցին, հայ ժողովրդի հոգևոր կյանքը իր մայր հողի վրա, մեր եկեղեցական մշակույթի այն բազմազան և անկորուստ ժառանգությունը, որով հայ հավատացյալն այսօր խորապես կապված է զգում իրեն իր նախնիների սուրբ հավատին: Հատկանշական են Ամենայն Հայոց կաթողիկոսին ուղղված 21 սեպտեմբեր 1972 թվակիր նրա նամակի հետևյալ տողերը, որոնք ցույց են տալիս, թե ինչպիսի կարևոր նշանակություն է ունեցել նրա համար սուրբ Էջմիածին կատարած իր այցելությունը.

«Սքանչելի հիշատակներ ունեմ պահած իմ այցելությունից, որն ինձ ճանաչել տվեց ձեր երկիրը, ձեր հավատացյալ ու բարի ժողովրդին... Սուրբ Էջմիածինն այսուհետև ինձ համար ինչ-որ կենդանի, ապրող մի բան է: Ես տեսա ձեր կրոնական մայրաքաղաքը՝ հազարավոր հայերի ներկայությամբ և հավատով կենդանացած: Մեծ հաճույքով ներկա եղա ձեր հոգևոր դպրոցի աստվածաբանական դասընթացների վերաբացման հանդիսավոր արարողությանը և սրտանց երախտապարտ եմ այն սիրալիր խոսքերի համար, որ ուղղվեցին ինձ: Մնում է ինձ աղոթել, որ մի երջանիկ օր մեր եկեղեցիները վերագտնեն քրիստոնեական հին դարերի ցանկալի միությունը: Իմ սույն այցելությունը մտածել տվեց ինձ այն հնագույն հարաբերությունների մասին, որոնք կապում են մեր երկու երկրները և ժողովուրդները միմյանց»:

Սեպտեմբերի 29-ին չորսօրյա պաշտոնական այցով Մայր Աթոռ ժամանեց նաև վրաց ուղղափառ եկեղեցու պատվիրակությունը՝ գլխավորությամբ Համայն Վրաստանի Պատրիարք-կաթողիկոս Նորին Սրբություն Դավիթ Ե-ի: Վրաց եկեղեցու հոգևոր Պետի և բարձրաստիճան հոգևորականության սույն այցելությունը ս. Էջմիածին առավել ևս ամրացրեց սիրո և եղբայրության այն դարավոր կապերը, որոնք գոյություն են ունեցել երկու եկեղեցիների և ժողովուրդների միջև:

Հայոց Ընդհանրական Հայրապետության համար հոգեկան ուրախության և մխիթարության բացառիկ մի առիթ եղավ հոկտեմբերի 9—12 օրերին իր Աթոռում հյուրընկալել ղպտական ուղղափառ եկեղեցու Հովվապետ, Ալեքսանդրիայի Պապ և ս. Մարկոսի Աթոռի Պատրիարք Նորին Սրբություն Շենուդա Գ-ին և նրան ուղեկցող բարձրաստիճան հոգևորականներին: Դավանակից երկու եկեղեցիների Գահակալների հանդիպումն ու ողջագուրումը, նրանց միջև տեղի ունեցած սրտաբաց զրույցները և համատեղ աղոթքի արարողությունները վերանորոգեցին երկու քույր եկեղեցիների փոխադարձ սիրո և բարեկամության հինավուրց կապերը և սկիզբ դրեցին հետագա է՛լ ավելի սերտ համագործակցության: «Մեր սույն այցելությունը,—նշում է ղպտական եկեղեցու Պատրիարք Շենուդա Գ-ը Հայոց Հայրապետին ուղղված Իր 14 հոկտեմբեր թվակիր հեռագրում,—անմոռանալի հիշատակներ թողեց մեր մեջ: Աղոթում ենք, որ ամենակարողն Աստված օրհնի և խորացնի մեր եկեղեցիների գործակցությունը Իր փառքի համար»:

Միջեկեղեցական հարաբերությունների և էկումենիկ կապերի զարգացման տեսակետից հայ եկեղեցու համար նշանակալից իրադարձություն էր նմանապես ռուսաց պրավոսլավ մեծ եկեղեցու Հովվապետ, Մոսկվայի և Համայն Ռուսիոց Պատրիարք Նորին Սրբություն Պիմենի և նրա շքախմբի այցելությունը Մայր Աթոռ նոյեմբերի 10—14 օրերին՝ Ամենայն Հայոց Հայրապետի եղբայրական հրավերով: Պաշտոնական մակարդակի վրա տեղի ունեցած սույն այցելությունը և այդ առթիվ երկու հոգևոր Պետերի միջև եղբայրական հանդիպում-

նեոն ու գրույցները հանդիսացան հայ և ռուս եկեղեցիների ու ժողովուրդների բարեկամական փոխադարձ սիրո և հարգանքի հարաբերությունների մի նոր վկայություն:

Ահա թե ինչպես է բնութագրված այս այցելության նշանակությունը Մոսկվայի պատրիարքարանի եկեղեցական արտաքին հարաբերությունների բաժնի կողմից հրատարակվող 20 նոյեմբեր 1972 թվակիր տեղեկագրում.

«Հայ առաքելական եկեղեցու հոգևոր կենտրոն սուրբ Էջմիածնում երկու եկեղեցիների Պետերի միջև տեղի ունեցած հանդիպումներն ու գրույցները առավել ներտացրին և զորացրին հայ և ռուս եկեղեցիների բարեկամական հարաբերությունները ու համագործակցությունը էկումենիկ ասպարեզում առաքելության և խաղաղարար ծառայության ճանապարհին»:

1972 թվականին հայ եկեղեցու կյանքում տեղի ունեցած միջեկեղեցական իրադարձությունների շարքում անհրաժեշտ է հիշատակել նաև հայ եկեղեցու պատվիրակությունների՝ զանազան առիթներով կատարած պաշտոնական այցելությունները տարբեր եկեղեցիների հոգևոր կենտրոններ: Այսպես՝

Ապրիլի 12-ին հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներից բաղկացած մի պատվիրակություն, Հայոց Հայրապետի գլխավորությամբ, մեկնեց Թբիլիսի՝ մասնակցելու վրաց երջանկահիշատակ կաթողիկոս Եփրեմ Բ-ի թաղման արարողություններին:

Մի քանի ամիս անց, հունիսի 30-ին, վրաց ուղղափառ եկեղեցու հրավերով, Հայոց Հայրապետը, ի գլուխ հայ եկեղեցու մի պատվիրակության, կրկին մեկնեց Թբիլիսի՝ այս անգամ մասնակցելու Համայն Վրաստանի նորընտիր կաթողիկոս Դավիթ Ե-ի գահակալության հանդիսություններին: Հայ եկեղեցու պատվիրակությունը Թբիլիսիում մնաց մինչև հուլիսի 4-ը:

Դեկտեմբերի վերջերին, ի պատասխան մալսբար քուր եկեղեցու կաթողիկոս Նորին Սրբություն Բասիլիոս Օգեն Ա-ի եղբայրական սիրալիր հրավերի, հայ եկեղեցու մի պատվիրակություն, գլխավորությամբ Երուսաղեմի հայոց ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքի, այցելեց Քոթայամ և դեկտեմբերի 31-ին Վեհափառ Հայրապետի անունից մասնակցեց ս. Թովմասս առաքյալի մարտիրոսության 1900-ամյակին նվիրված տոնակատարություններին:

Բացի բարձր մակարդակի վերոհիշյալ փոխադարձ այցելություններից, Մայր Աթոռի ներկայացուցիչները մասնակցեցին Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնական կոմիտեի՝ Ուրեխտում կայացած տարեկան նստաշրջանի աշխատանքներին, օգոստոսի 3—23 օրերին:

Սխալ կլիներ անշուշտ պաշտոնական այս կարևոր հանդիպումներն ու փոխադարձ այցելությունները, իրենց բնույթով և նշանակությամբ, համեմատել այն խիստ հազվադեպ և բացառապես քաղաքավարական այցելությունների հետ, որոնք տեղի են ունեցել անցյալում տարբեր եկեղեցիների իշխանավորների միջև: Տարբեր մակարդակների վրա տեղի ունեցող այս հանդիպումները նշանակալից են այն իմաստով, որ նման այցելությունների և հանդիպումների շնորհիվ աստիճանաբար հիմքերն են դրվում վարդապետական մերձեցման և հետագա լայն գործակցությունների: Քրիստոնեական եկեղեցիների միահամուռ ձգտումն է այսօր նման հանդիպումների ընթացքում հայացքների եղբայրական փոխանակման միջոցով հաղթահարել փոխադարձ անհանդուրժողությունը և այն տարակարծությունները ու բաժանումները, որոնք տխուր ժառանգությունն են անցյալի, հոգալ Քրիստոսի եկեղեցու կարիքների մասին և վկայել իրենց ընդհանուր բաղձանքը, այն է՝ բոլոր քրիստոնյա եկեղեցիների գործակցությունը միմյանց հետ աշխարհի ծառայության իրենց կոչման մեջ, խոնարհությամբ և նվիրումով, միասնաբար լուծելու համար այն բոլոր կարևոր հարցերը, որ ժամանակակից աշխարհը դնում է նրանց առաջ:

ՊԱՐԳԵՎ ՇԱՀԲԱԶՅԱՆ

Հայաստանյայց Եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար

ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԳԵՎՈՐԳ ՔԱՀԱՆԱ ՓԱՓԱԶՅԱՆԻ
(1902—1972)

Օգոստոսի 13-ին, 70 տարեկան հասակում, երկարատև հիվանդությունից հետո, Երևանում ի Տեր հանգչեալ արժանապատիվ տ. Գևորգ քհն. Փափազյանը:

Հանգուցյալը ծնվել է 1902 թվականին Կ. Պոլսում: Նա իր կրթությունը ստացել է տեղի թալալյան դպրոցում:

1934 թվականին տեղափոխվում է Պաղեստին, Հայֆա քաղաք, որտեղ կատարում է հասարակական-ազգային մի շարք պաշտոններ՝ ծառայելով նաև որպես տիրացու տեղի հայոց ս. Եղիա մատրան մեջ:

1946 թվականին երբ սկսվում է հերգալեթը, հանգուցյալը բերում է իր մասնակցությունը հայրենանվեր այս մեծ գործին: Իսկ ինքը ընտանիքով 1947 թվականին վերադառնում է Հայաստան և մշտական բնակություն հաստատում Երևանում:

Հայ եկեղեցու նկատմամբ նա դեռևս փոքր հասակից մեծ սեր ու հարգանք ուներ, և այդ զգացումները 1957 թվականին նրան բերում են հայ եկեղեցու սպասավորության գործին:

Նույն թվականին Սահակ արքեպ. Տեր-Հովհաննիսյանի կողմից ձեռնադրվում է քահանա:

Տեր Հայրը երկու տարի պաշտոնավարում է Աշտարակի ս. Մարիանե, ապա՝ Երևանի ս. Հովհաննես եկեղեցիներում:

Տ. Գևորգ քահանայի ժրաջան գործունեությունը չի վրիպում ազգիս Վեհափառ Հայրապետի ուշադրությունից և 1964 թվականին նրան իրավունք է տրվում կրելու քահանայական լանջախաչ:

1972 թվականի օգոստոսի 15-ին, երեքշաբթի օրը, Երևանի ս. Հովհաննես եկեղեցում կատարվում է տ. Գևորգ քահանայի վերջին օծումը և թաղման կարգը: Նրա կյանքի և գործունեության մասին դամբանական է խոսում տ. Ռուբեն քհն. Մարտիրոսյանը:

Տ. Գևորգ քահանան եղել է ժրաջան, հավատավոր հոգևորական և որտեղ էլ որ քահանայագործել է, վայելել է իր հոտի սերն ու հարգանքը:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի. ամէն»: